Ռաֆֆի
Բանաստեղծություններ և պոեմներ, թարգմանություններ

ՉԱՓԱԾՈ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՃՐԱԳ

Գիշերային լապտերը
Ամպերի մեջ լողում էր,
Մեղմիկ շնչող զեփյուռից
Ծառի տերևը դողում էր:

Գերեզմանական քնով թմրած՝
Նիրհում էր ողջ գյուղ,
Այդ գյուղիցը մի աղջիկ
Դեպ՛ դուրս վազեր աներկյուղ:

Դեպի մերձակա վանքը
Գերմարդկային այդ ոգին,
Որպես անմահ հավերժահարս,
Դիմեր ըշտապավ, մոլեգին:

Խորհրդական այդ ժամուն
Պայծառ փայլում էր լուսին,
Նա շողում էր թարմ, սիրուն
Դեմքը մատղահաս կուսին:

Նա վազում էր և վազում
Դեպի վանքը սրբանվեր,
Ուր խաչազարդ գմբեթներ
Ձգել էին լայն ստվեր:

Անդ միանձնաց կուսակրոն
Անմատչելի է կայարան,
Ուր հնչվում են ալելուք,
Սաղմոս, սուրբ Ավետարան:

Ի՞նչ է պտռում այդ աղջիկ
Գիշերային այդ ժամուն,
Յուր զանգրահեր ծամերը
Արձակ տված է քամուն:

Չիցե՞ մատղաշ այդ կուսան
Սրբարանի անկյունում՝
Յուր զղջացած մեղքերը

Նա լացելու է գնում:

Չիցե՞ վանքի պարսպում
Հայր-սուրբերից սիրատար՝
Նա ակնկալ մի ունի,
Որ սպասում է անդադար:

Բայց ի՞նչ պետք է իզուր տեղ
Լուծել խորհրդոյն այդ կնիք,
Աստված միայն է գիտում
Կուսական սրտին գաղտնիք:

Իսկ գեղեցիկն այն աղջիկ
Ըշտապելով շուտ քայլեց,
Երբ աշտարակի գլխից
Աղոտ ճրագ մի փայլեց:

Դեպ՛ խորհրդական լույսը
Դիմում էր նա կաթոգին,
Որպես թիթեռը հրճվելով
Դեպի բոցերը ճրագին:

ԻՍՐԱՅԵԼԸ ԲԱԲԵԼՈՆՈՒՄ
(137-րդ Սաղմոս)

Բաբելացվոց գետերու մոտ
Մենք հայրենյաց կողբայինք սուգ,
Եվ Սիովնը միտ բերելով,
Կրթափեինք դառն արտասուք:

Պանդուխտ երկրի ուռիներեն,
Մեր քնարները՝ տխուր և մունջ,
Մենք կախեցինք, և զեփյուռեն
Հնչեն լարերն դառն մրմունջ:

Մեր գերիչքը կարեկցաբար
Ասում էին ստիպելով.
Մեզ Սիովնի երգեք երգեր,
Մի՛ վրդովեք մեզ ձեր լալով:

Տիրոջ երգն ինչպե՞ս երգենք
Օտար երկնի կամարի տակ,
Օտար երկրում ինչպե՞ս պատմենք
Մենք Սիովնի սուրբ հիշատակ:

Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ,
Եհովայի ո՛վ սուրբ տաճար,
Իմ աջ ձեռքս թող չորանա,
Երբ մոռանամ քո սերն անճառ:

Երբ չըհիշեմ քեզ մի րոպե,
Թո՛ղ իմ լեզուս փակչի զիմքիս,
Եվ հավիտյան թո՛ղ մունչ մնամ,
Երբ քեզ համար չըտամ հոգիս:

Երբ տե՛ր, Սալիմի կըխնդրես վրեժ,
Հիշե՛ Եդովմի անգութ զավակներ,
Որք ասում էին՝ — «Փլուցե՛ք դորան,
Փլուցե՛ք դորա հիմն ու հատակներ»:

Ո՛վ Բաբելոնի դստրիկ թշվառ,
Քանի դառնությանց մեզ եղար պատճառ...
Երանի նորան, որ պատիժ արդար՝
Քո չարիքներին փոխարեն կըտար:

Երանի նորան, որ քո զավակներ
Յուր վրեժխնդիր ձեռքովն անխնա՝
Կառներ մոր գրկեն, լալով, ճչալով,
Կառներ, կըզարկեր քարերու վերա:

ԳԵՐԻՆ ԱՎԱՐԱՅՐԻ
(Վարդանանց պատերազմի ժամանակ)

Պարսից գետերի ափերի մոտով,
Գլուխս ծռած և տխուր սրտով,
Իմ բոլորտիքս զինվորներ պատած,
Ես թափառում եմ շղթայված ոտով:

Ես մի գերի եմ՝ անբախտ և թշվառ,
Ոչ ոք չէ լինում վշտիս մխիթար,
Միայն հնչումը ծանր շղթայի
Ինձ հիշեցնում է մտքեր չարաչար:

Ինձ հիշեցնում է Արաքս, Արարատ
Եվ Էջմիածին՝ մայր մեր գթառատ,
Ինձ հիշեցնում է քաղցրիկ Հայաստան
Եվ սեր հայրենյաց՝ սուրբ և անարատ:

Սիրտս էրվում է, լերդս խորովվում,
Աչքերս առուք գետի պես հոսվում,

Եվ արտասուքն ինձի խեղդում է,
Խեղդում, ուշաթափ գետին է ձգում:

Գերեվարներից մի գրթոտ զինվոր
Մի՛ լար, ասում է, ով քաջ և հզոր,
Միշտ չես մնալ դու գերի մեր երկրում,
Եվ ազատություն կրգա քեզ մի օր:

Բայց դու մեզ երգե քո հայրենիքի՝
Քո Արարատա կորուսած փառքի՝
Նորա վեհության՝ անուշիկ երգը,
Երգե կմխիթարվի քո սիրտն ու հոգի:

— Ես Արարատա կորուսած փառքը,
Ես մայր Արաքսի դառն արտասուքը,
Գահեն որբացած ծերուկ Մասիսի՝
Ինչպե՞ս ես երգեմ՝ ողբն ու սուգը:

—Երբ արտասուքը թշվառ պանդխտի
Ցողում է հողն օտար աշխարհի,
Խոր սրտեն բխած նորա երգի ձայն
Հնչեցնում է օդն օտար երկնքի:

— Բայց Հայաստանի գերին խեղճ, պանդուխտ,
Թո՛ղ ձեզի երգե յուր սրտի սուրբ ուխտ,
Որ նորա կենքի է միակ նպատակ,
Քանի ապրում է օտար երկնի տակ:

Ով իմ Հայաստան, սիրուն հայրենիք,
Հայկի և Արամա երկիր գեղեցիկ,
Թո՛ղ քաջքն Արտավազդա ինձ կորուսանեն,
Թե ես մոռանամ քո սերը քաղցրիկ:

Թո՛ղ իմ բազուկս չորանա իսպառ,
Թո՛ղ լեզուս լռվի, չըխոսի մի բառ,
Երբ պատերազմում, քո թշնամու դեմ,
Չըզոհեմ արյունս քո սիրո համար:

Թո՛ղ իմ աչքերը կուրանան շուտով,
Երբ քեզ ես նայեմ Վասակի սրտով,
Թո՛ղ իմ ականջներ իսպառ խըլանան,
Երբ չարիքդ լսեմ, մնամ ես անվրդով:

Երբ, տե՛ր, կըխնդրես վրեժն անբախտին,
Դու միտ բեր հային և հայի որդին,

Տե՛ս Ավարայրի լայն դաշտն ահարկու,
Հայի արյունով ներկված է գետին:

Թափի՛ր քո կրակ, քո կայծակ և հուր,
Լարե՛ քո աղեղ, նիզակ սայրիսուր,
Սասանա պարսկի որդիքն անիրավ,
Թող խոր դժոխաց լինեն կերակուր:

Երբ պատերազմի հնչեց ահեղ փող,
Սիրտս նախանձի կզգա մի սուրբ դող,
Կրփշրեմ շղթաս, ձեռքումս բաց սուր,
Կառնեմ իմ վրեժը, հետո կմտնեմ հող:

ՍՈՒՐԲ ՈՍԿԵՐՔ1

Անապատ, անշեն, դաշտ էր ընդհանուր,
Ուր թափառում եմ մտահույզ, տխուր,
Ուր ավերակաց տրտում տեսարան
Բերե անախորժ զգացմունք իմ վերան:

Ադամա որդվոց չէր լսվում աստ շունչ,
Այլ բուի ճչյուն, աղվիսաց մռունչ,
Միակ հիշատակ աստ հին մարդկության
Ներկայանում է ցուրտ դամբանարան:

Անգութ ժամանակ, — կռովն ծերունին,
Ստեղծագործության այդ հին թշնամին,
Մարդկանց մարմիններ փոշի դարձրել ողջ,
Մի կառափ միայն մնացել էր ամբողջ:

Անապատի մեջ, թեև դուզնաքյա,
Վաղամեռ մարդու այդ մնացորդը
Ինձ շատ գրավեց, վեր առա նորան,
Դրած նայում եմ, իմ ծնկի վերան:

Երանի՛ վերին գրոց սրբազան,
Լինեի դպիր, և տառք զանազան
Ես բացատրեի այդ լայն ճակատին,
Թե ո՞վ էր արդյոք մարդու այդ որդին:

Արդյո՞ք արքայի դա գլուխ թագազարդ,
Որ յուր գահույից մահվան սուր գեղարդ
Զարկեց, կործանեց, տարավ հողի տակ,
Կորավ նորա փառք, մարգարտյա պսակ:

Արդյո՞ք մի աղքատ, քրքրված մուրացիկ,
Որո կենաց թել սովո կտրեց ժանիք,
Եվ բարի մարդիկ նորա մեռած դին
Բերին թաղեցին մեջ այդ ցուրտ հողին:

Արդյո՞ք ծերունի մի սուրբ ռաբուն,
Քարոզող փրկչի կտակ և անուն,
Վարվարաց ձեռքից խմավ դառն բաժակ,
Հիսուսի սիրուն եղավ նահատակ:

Ասա՛, ո՛վ վերին գողտրիկ Զվարթուն,
Որ պահպանում ես այդ փթած աճյուն,
Ո՞ւմ կրպատկանի փշրած այդ կառափ,
Որ բերե գաղտնի ինձ վերա սարսափ:

Հանկարծ լսելի եղավ մի հնչյուն,
Որպես զեփյուռի հեզիկ շշնջյուն.
Եվ նորա միջից որոշ այդ ձայներ,
Ինձ զմայլանաց բերին հիացում:

«Դա էր քաջ Վարդանն՝ այն հայ տղամարդ,
Շավարշան դաշտում մարտնչեց յուր մարտ,
Կրոնի, հայրենյաց և ազգի համար
Նա թափեց արյուն, եղավ զոհ արդար:

Դա սպարապետ էր Հայոց զորքին,
Սիրող հայրենյաց, սիրող յուր ազգին,
Որ մինչև կենաց յուր վերջին վայրկյան
Եղավ յուր ազգին շահավետ անդամ:

Աներևույթ ձայն ազդեց իմ սրտին,
Ես սուրբ նշխարքը դրեցի գետին.
Եվ նորա առջև ծունկ իջա շուտով,
Երկրպագեցի երկյուղած սրտով:

Ինձ տիրեց սարսափ: Կոչեմ սաստկագին. —
—Դա ազգասերի գլուխ է անգին,
Դա մեր հերոսի գանգն է քաջազեն,
Որ փրկեց կրոն զենտի կրակեն:

—Քեզ, ո՛վ սուրբ ոսկերք, ես պիտի պաշտեմ,
Ոսկի, արծաթի սափորում կամփոփեմ,
—Կըշինեմ մատուռ, տաճար, սուրբ սեղան,
Կրկանգնեմ քեզի մի անմահ արձան:

—Առավոտյան շուտ ես քո առջևը,
Եվ երեկոյան ծնկներու վերա,
Կըլամ, կըվերուղղեմ աղոթք ջերմաջերմ,
Դու իմ բարեխոս, ես քեզ կաղերսեմ:

— Երբ որ դավ դնե անգութ թշնամին,
Եվ պատժել պետք էր այն անզգամին,
Ես կըռվի դաշտում, սուրբ իմ ձեռքում, —
Կըխնդրեմ միայն քեզնից օգնություն:

— Ծովի միջումն, երբ տանջե մրրիկ,
Ինձ տակով անեն լեռնացյալ ալիք,
Երբ կըսպառնա ինձ մահ և սարսափ
Անապատի մեջ մի Բետով-արաբ. —

— Ամեն տեղ, ամեն փորձանքում
Քո անուն կըհիշեմ, քեզնից օգնություն,
Քեզնից փրկություն ես միշտ կըխնդրեմ,
Դու ես մեր Փրկիչ, ես քեզ կը պաշտեմ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՔ

Հեռո՛ւ, հեռո՛ւ, ո՜վ սև մտքեր,
Ինչո՞ւ դուք ինձ տանջում եք,
Մի՜ քրքրեք իմ հին վերքեր,
Սիրտս հանգիստ թող տվեք:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, ո՜վ տխրադես
Հիշողությունք և կրքեր,
Ա՛խ, մի՜ բերեք իմ աչքիս դեմ
Անցյալ ավուրց փայլուն պատկեր:

Անցյալ ավո՛ւրց... ավո՛ւրց ոսկի,
Որք նորա հետ անցուցի,
Որուն իմ սիրտ, իմ կյանք, հոգի
Եվ իմ սուրբ սեր զոհեցի:

Բայց ինձ համար նա չքացավ
Անհայտության մութի մեջ,
Թողեց միայն ինձ դառն ցավ,
Մարած սրտումս՝ կայծ անշեջ:

Այդ սուրբ սիրո անշեջ կրակ
Պիտ վառ պահեմ իմ սրտում,
Մինչ մահ նորա սուրբ հիշատակ

Պիտ երազեմ իմ մտքում:

ՄՇԱԿ
(Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի կյանքից)

Թողեր եմ ու եկեր զավակներըս, այգիս,
Քանի որ ա՛խ կասեմ, կու քաղվի հոգիս,
Կռունկ, պահ մի կացի՛ր ձայնիկդ ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մբ չունի՞ս:
ՊԱՆԳՈՒԽՏԻ ԵՐԳ
Ա

Գալիս է գարուն, նոր կյանք է բերում.
Վարդ և շուշանը բացվում են, բուրում,
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ զորությամբ ծագում է արև:
Շնչում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդյան ցողը սփռում է գոհար,
Կանաչ հովիտը վառվում է պայծառ:
Զարթնեց բնություն կուսական խանդով:
Դեպ՚ գործ մեղուներ դիմեն եռանդով:
Վաղ առավոտյան ձայնը կոչնակին
Կանչում է դեպ՚ դաշտ անբախտ մշակին:
Բայց արշալույսի վարդագույն թշեր,
Զարթած բնության հրաշալի պատկեր,
Չե՛ն, չե՛ն հրապուրում սիրտը վշտահար,
Սիրտը, որ մեռած էր ցավով հազար...
Գլուխը ծռած, մշակը տրտում
Վարում է գութան արգավանդ դաշտում,
Եվ նորա երգը հնչում է արդեն,
Երգը հոգսերով ծանրացած սրտեն:
Ա՛խ, նա օտարի հողն է մաշկում,
Որը պտուղը նա չէ ճաշակում,
Հո՛ղ, որ նախահարց սրբված արյունով,
Այժմ ջրվում է որդու քրտինքով,
Այժմ ցողվում է դառն արտասուքով...

Բ

Գալիս է ամառ, կրակոտ եղանակ,
Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ:
Յուր աստվածեղեն ջերմության հոգին
Կենսատու շնչով ծավալն արփին:
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,

Աղջկա թշի պես վառվում է խնձոր,
Սաթանման-դեղին կախված է ողկույզ,
Մանկտին գրավում է շլոր և թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է բոստան,
Ոսկյա հոսանքով ծփի անդաստան,
Եվ արտորայքի ծանրացած հասկեր՝
Խիստ հիանալի նկարեն պատկեր:
Հետ երից անգամ երգը խոսնակին
Զարթնում է իսկույն հնձվորի հոգին:
Փայլում է մանգաղ: Գործում է մշակ:
Բարձած սայլակի ճռինչն անուշակ
Հնչվում է հեռու, հեռու դաշտերեն,
Բերում դեպի կալ հունձքը արտերեն:
Կալսում է յուր կալ, մաքրում է ցորյան, —
Պտուղը յուր ձեռքի, քրտինքի, արյան.
Եվ այդ բոլորը նա զոհ է բերում
Կալվածատիրոջ, լեցնում ամբարում,
Անիծելով բախտ, գնում է յուր տուն,
Լացում է սև օր, քաղցած գերդաստան:

Գ

Գալիս է աշուն: Թափվում է տերև,
Սոխակն յուր վարդին տա վերջին բարև,
Եվ տարափոխիկ արագիլ, կռունկ՝
Գաղթեն դեպի տաք երկրներ խորունկ:
Ուժգին, ցրտաբեր փչում է հյուսիս,
Սև-սև թուխպերով պատվում է Մասիս:
Մահվան դեղնությամբ ծածկվում են դաշտեր:
Զվարճասեր սրտից չեն ցրվում վշտեր:
Լիքն է հունդերով մրջիմին ամբար,
Թեև չըցանեց, չըկալսեց յուր կալ,
Եվ յուր մոմեղեն խցումը շար ի շար
Մեղուն կազմել է ձմեռվա պաշար:
Իսկ յուր արտերով մեր խեղճ գյուղացին
Մնում է կարոտ պատառ մի հացին.
Տխուր, հուսահատ, գլուխը ծռած,
Նստած է տան մեջ, ձեռքերը փակած:
«Անցուցի՛ր ամառ, անցուցի՛ր գարուն, —
Ասում է կինը. անցա՛վ և աշուն,
Դռանը կանգնած է ցրտաբեր ձմեռ,
Որդիքս կիսամերկ, որդիքս կիսամեռ՝
Ես ինչո՞վ պահեմ, ասա ինձ, այրի՛կ»:
— «Աստված ողորմած է, սպասի՛ր, կնիկ».

Ասաց մշակը և լռեց իսկույն,
Ծածկեց ցավերը վշտալից հոգուն...

Դ

Գալիս է ձմեռ, — ալևոր ծերուկ,
Խոժոռած դեմքով, սպիտակ մորուք,
Չրկա մի ժպիտ նորա աչքերում,
Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում,
Սառած է արյուն ողջ երակներում,
Սիրո ջերմություն չրկա նորա սրտում:
Մահաբեր ձեռքով ձյունեղեն պաստառ
Տարածում է նա: Սար, դաշտ և անտառ,
Ողջ ծածկվում են սպիտակ պատանով...
Լռում է թռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառցապատ գետակ մնչում է լռիկ:
Կտուրի վերա նստեց ագռավ,
Ծերի գալստյան համբավը բերավ,
Կռկռաց, կռկռաց և չարագուշակ
Ձայնով գուշակեց գյուղացու վիճակ:
Բայց մեր գյուղացին էլ դուրս չէ երթում,
Փակված է մթին նա յուր խրճիթում:
Նորա անոթի որդիքը կիսամերկ
Սառը թոնրի մոտ նստած են տրտում,
Խաղալ չեն գնում դրսումը՝ ցրտում,
Զի չրկա հագուստ խեղճերի հագին:
Գործում է թեև դազգահ ջուլհակին,
Գործում է կտավ և մանում է կին,
Բայց նոցա գործվածք պիտ՚ գնան վաճառ
Վճարել խանի տուրքը անվճար:

Ե

Իսկ մեր մշակի պարտքի մուրհակին
Լրացան տարիք կրկին և կրկին.
Այն անիծյա՛լ պարտք... պարտքը պարսկին,
Որով նա գնեց եզները ջուխտակ,
Եղավ նա գերի, ընկավ հոգսի տակ:
Նա չունի արծաթ, չունի եկամուտ,
Բայց մահմեդական վաշխառուն անգութ
Քարշում է տանից նորա երեխան՝
Ծանրացած պարտքի տոկոսի փոխան:
Մի բարբարոսին խիղճն ի՞նչ է ծանոթ,
Որ չունի օրենք, իրավունք, ամոթ...

Ի՞նչ անե խեղճն, ի՞նչ հող տա գլխին,
Ազատե կյանքն անբախտ երեխին.
Յուր պարտատերին ակամա սրտիվ
Զոհում է նա շատ արտաքուստ, պատիվ...
Մինչ կրկին տարի ժամանակ առավ,
Տուն, տեղ, ամեն ինչ նա դրեց գրավ:
Նորից ամրացավ գերության շղթան:
Թողեց վարուցանք, արոր և գութան,
Եվ պանդխտության կրեց գավազան,
Դեպի հեռավոր, դեպ՛ օտար աշխարհ,
Տխուր, սրտաբեկ՝ ուղղեց ճանապարհ.
«Կերթամ, — ասաց նա, — մի՛ լացիր, կնիկ,
Կամ օտար երկրում կըմեռնեմ, կըկորչեմ,
Կամ պարսկի պարտքեն որդիքս կազատեմ...

Զ

«Ա՛խ, աստված... — գոչեց, գնաց գյուղացին,
Չընայեց կնոջ արտասուք-լացին,
Թողեց ընտանիք նոթի, կիսաշունչ,
Թողեց անխնամ, մերկ և անտերունչ:
Երկար տարիներ նա թափառական
Ընդ ծով և ցամաք պտտեր անսահման,
Երկրե երկիր շրջեր գաղթ ի գաղթ
Եվ հուսակտուր որոնում էր բախտ:
Եվ վերջ ի վերջո մի մեծ պանդոկում
Եղավ նա համալ, բեռն էր շալակում,
Բեռն էր շալակում, որպես մի գրաստ,
Գործեր անասնոց նա գործ չարապաստ...
Լափչիքը հագած, փալանը մեջքին,
Մինչև կես-գիշեր քաղվում էր հոգին,
Եվ նույն փալանին գլուխը դրած,
Սառը գետնի վերա քնում էր հոգնած:
Բայց և այդ բախտը չըտևեց երկար.
Մի օր մի մեծ հակ տանում էր բազար,
Ծանր էր բեռը, ծանր և ահագին,
Ոտքերը դողաց, աչքերը մթնեց,
Հանկարծ գլորվեց յուր բեռան տակին. —
Անշունչ, կիսամեռ վեր առան նորան
Եվ հիվանդանոց ընկերքը տարան:

Է

Ծիծառը դարձավ դեպ՛ իրա բույնը,

Կարգեց, նորոգեց՝ ավերված տունը,
Բայց մեր մշակից դեռ չըկա համբավ:
Ընտանյաց վիշտը դառն էր, անբավ:
Հին պարտատերը շատ շատ էր տանջում,
Նորա կնկանից փող էր պահանջում:
Տանջվե՛ց խեղճ կինը, տանջվե՛ց անպայման,
Մանուկ հասակում մաշված, թառամած,
Անբախտ գլուխը տարավ գերեզման...
Փոխան նոցա հին պարտքի մուրհակին
Տիրեց պարտատերը կայք և տնակին:
Կորած պանդխտի դստերքը մատղաշ
Պարսկի հարեմում եղան ղարավաշ:
Հայերից մի տան մարեցավ օջախ:
Բայց քանի՝ հարյուր տներ այդպես հաճախ
Անհետանում են ամենայն տարի...

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ի բիւր ձայնից, բնության շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Չունին ձայն այնքան մի սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:
Մ. ՊԵՇԻՔԹԱՇԼՅԱՆ

Տո՛ւր ինձ ձեռքդ, մենք եղբայր ենք,
Ե՛կ տանք սիրո միմյանց համբույր,
Այն ի՞նչ ծաղիկ է անուշհոտ,
Քան զսեր եղբարց՝ սուրբ, բարեբույր:
Եղբայր ենք մենք, մի հզոր զավակ,
Մեր երկուսիս երակներում՝
Մաքուր, պայծառ և անարատ՝
Հայկա արյունն է միշտ վազում:

Հայ ենք, եղբայր, հա՛յ երկոքյանս,
Հայը հային է՞ր պիտի ատե,
Այդ կաթոլիկ, պրոտ անուններ
Ինչո՞ւ մեզի պիտի զատե:

Սեր, միություն, եղբայրություն
Մեր դրոշի վերա գրենք,
Մենք միասին ձեռն ի ձեռին
Մեր գործերը հառաչ վարենք:

Մենք միասին ուրախանանք,
Եվ միասին անենք մեր սուգ,
Հայնժամ մեզի կրքաղցրանա
Աչքեն հեղած դառն արտասուք:

Եղի՛ր, եղբայր, դավանմունքով
Դու կաթոլիկ և լուտերան,
Հավատավոր կամ անհավատ,
Գրիգորյան, կամ Վոլտերյան:

Այդ քո կամքից, համոզմունքից
Ունի ազատ միայն կախում,
Իսկ կրոնքի լոկ պատճառավ
Ինչո՞ւ ես դու ազգդ փոխում:

Հա՛յ ես դու, հա՛յ, Հայկա զավակ:
Դու պաշտե քո ազգության,
Սիրե՛ լեզուն քո հայրենի,
Սիրե՛ նորա ավանդություն:

Սիրե՛ երկիր քո հայրենի՝
Դրախտավայր մեր Հայաստան,
Սիրե՛ նորա հողն ու ջուրը,
Ավերակներն ու անդաստան:

Տո՛ւր ինձ ձեռքդ, հայ ենք, եղբայր,
Ազգության կնքենք համբույր,
Ով յուր ազգը չէ ճանաչում,
Մտքով, աչքով՝ խուլ է և կույր:

ԳԱՐՈՒՆ
(Հինգերորդ դարու Հայոց տիկինների երգը)

Բազում ձմերոց հալեցան սառնամանիք,
Եհաս գարուն և եկին նորեկ ծիծռունք,
Տեսին և խնդացին կենցաղասեր մարդիկ,
Եվ նոքա ոչ երքեք կարացին տեսանել
զանձկալիս յուրյանց...
ԵՂԻՇԵ

Անցա՛ն, անցա՛ն տարիներ,
Եկան, գնացին շատ ձմեռ,
Նորեկ ծիծառը ճռվռուն
Ավետում է նոր գարուն:

Լռե, լռե ո՜վ ծիծառ,
Դու մեր սիրելյաց դարձեն
Չես բերած ոչ մի խաբար
Պարսից հեռու աշխարհեն:

Ուր շղթայած բանտերում
Տանջվում են չարաչար,
Նոցա կարոտ աչերուն
Ոչ քուն կա և ոչ դադար:

Դու չե՛ս, չե՛ս նոր գարուն,
Գարունը Հայսատանի,
Դու հայոց տիկիններուն
Ողբը, լացը չե՛ս տանի...

Զի քո փառավոր դարձի
Այդ գեղեցիկ տեսարան
Հիշատակում է նոցա
Կորած սենր աննման:

Զյունը հալվեց, դաշտերը
Կանաչ խոտով ծածկվեցան,
Խնձորենին ու նշենին՝
Ծաղիկներով ծաղկեցան:

Թռչունք, սարյակ և սոխակ՝
Տոնեն նոցա հիշատակ,
Վարդ ու շուշան և մեխակ
Խնկեն բուրումն անուշակ:

Արարատա դաշտերում՝
Ժիր նժույգի խրխինջը
Շփոթում է վաղորդյան՝
Օդի հանգիստ, խոր նինջը:

Կարծես նա էլ զգում է,
Որ էլ ինքը տեր չունի.
Մամիկոնյան քաջերը
Ընկա՛ն, ընկան վշտալի...

Անտառներում եղջերուն,
Թռչկոտում է համարձակ,
Լորն ու կաքավ երգում են,
Էլ վախ չունի նապաստակ:

Կարծես նորանք էլ գիտեն,
Որսորդներից ազատ են,
Իշխաններն էլ չըկան,
Որ նոցա սիրտը շփոթեն:

Հայաստանի երկինքը
Թուխ ամպերով է պատած,
Սուգ է մտել Մասիսը,
Տխրադեմ է Արագած:

Ժողովուրդը տոնասեր
Չէ խմբում եկեղեցին,
Աղջիկները չեն պարում,
Թմբուկ, երգեր լռեցին...

Դու չե՛ս, դու չե՛ս նոր գարուն,
Գարունը հայոց տիկնաց,
Դու մեզի չես ավետում
Մեր քաջերի վերադարձ:

Այն օրն է նոր գարուն,
Երբ կընորոգվի Հայաստան,
Եվ մենք ազատ կըշնչենք,
Զգելով լուծը պարսկական:

ՈՂԲԸ ԶԵՅԹՈՒՆՑԻ ԿՆՈՋ ՏԱՆԸ ՄԵՌԱԾ
ՏՂԱՄԱՐԴԻ ՎԵՐԱ

Ափսո՛ս, որ այդպես անփառք և անշուք,
Փափուկ մահճի մեջ փչեցիր քո հոգին,
Ափսո՛ս, որ մահը քեզի հանդիպեց
Քո խաղաղ տնակի կամարի տակին:

Դու մի քաջ էիր՝ արի և հզոր,
Քաջերի սուրը թող նյութեր քեզ մահ,
Կռվի դաշտիցը քո արյունոտ մարմին
Ես տուն բերեի՝ սրտով գո՛հ... ուրա՛խ...

Ինձ դառն չէր հայնժամ թափել արտասուք
Քո արնով ներկված դիակի վերան,
Ինձ ցավ չէր հայնժամ ողբերով երգել
Քո պարծանքներով կանգնած գերեզման:

Զի Հայոց տիկնայք ինձի կասեին՝

— Փա՛ռք, պատիվ քեզի, երջանիկ այրի,
Դու բախտավոր ես կնիկների մեջ,
Զի կորուսիր այր՝ քաջ, հսկա, արի:

Ինձ քաղցր էր հայնժամ թափեք արտասուք
Արնով զարդարված դիակիդ վերան,
Եվ ծաղիկներով պճնել, զարդարել
Քո միշտ պաշտելի հողադամբարան:

Թո՛ղ պատերազմում, կռիվի դաշտում,
Մեր Հայրենիքի փրկության համար,
Սուրը քո ձեռին, փառավոր մահով,
Թո՛ղ դու զոհեիր քո արյուն արդար:

Ինձ քաղցր էր հայնժամ իմ ճեռով փակել
Քո այդ սև, հպարտ, շիջած աչքերը,
Զի հազար աչեր պիտ արտասվեին
Քո հզոր թրից սպանվածները:

Զի ես գիտեի, որ դու թոցրիր
Հարյուր գլուխներ թշնամու ուսերեն,
Զի ես գիտեի, որ դու զրկեցիր
Հարյուր կնիկներ յուրյանց այրերեն:

Այդ զարհուրելի խոր-խոր սպիներ
Քո արությանցը՝ վկա և նշան,
Չունի մի տղամարդ հայոց քաջերից,
Ո՛չ քուրդ, ո՛չ արաբ և ո՛չ մի թուրքման:

Բայց ափսո՛ս, քեզ հետ՝ ալ-արդակարմիր
Դու մի թարմ սպի չընտարար գերեզման,
Դու մեռա՛ր, անբախտ, հասարակ մահով
Փափուկ մահճի մեջ... քո բարձի վերան...

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ ԶԵՅԹՈՒՆՑԻ ՀԱՅ ՏԻԿՆՈՋ

Նանի՛կ արա, սիրուն որդյակ,
Դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ,
Նանի՛կ արա, շուտ մեծացիր,
Քեզ մատա՛ղ է իմ ջանիկ:

Օրորոցդ մոր ձեռքով՝
Մեղմիկ, հանդարտ, կըշարժեմ,
Քո մեռած հոր հիշատակը
Քեզ երգելով կըպատմեմ, —

Հայրդ էր հզոր առյուծ,
Այն քաջ — արին Երվանդ,
Նա ուներ դեպ յուր ցեղը՝
Շատ սեր, շատ գութ, շատ եռանդ:

Մի օր հեծավ յուր սև ձին,
Ելավ նա դեմ ոսոխին,
Յուր հետ յուր քաջ ծառաներ՝
Գնաց հալածել թշնամին:

Թշնամին էր քաշն Ռավո՝
Այն վիթխարի աժդահան՝
Զարկեց հորդ սրտի մեջ
Յուր նիզակը հոգեհան:

Զարկեց հորդ սպանեց,
Հոտերն ավար տարավ,
Վրանները կողոպտեց,
Նա մեզ ոչինչ չըթողեց:

Նանի՛կ արա, աչքի լո՜ւյս,
Նանի՛կ, որ շուտ մեծանաս,
Քո անտերունչ քաջ ցեղին
Հորդ փոխան տիրանաս:

Մեր ծաղկավետ սարերը,
Մեր խոտավետ արոտներ,
Արածում են թշնամյաց
Եվ օտարներու հոտեր:

Մեր պաղ, հստակ աղբյուրներ
Պղտորում են պիղծ շրթունք,
Թշնամուհյաց կուրծքերը՝
Զարդարում են մեր ծաղկունք:

Հպարտ, ազատ մեր ցեղը,
Ամոթալի՜ հիշատակ...
Առել է յուր պարանոց
Մեր հաղթողի լծի տակ:

Իսկ մենք պանդուխտ, անտերունչ,
Թափառում ենք սարից սար,
Օտար ձեռքերու կարոտ,
Հողին եղած հավասար:

Անարգ, գերի, անպատիվ,
Որպես պիղծ ազգ անամոթ,
Թքում են մեր երեսին,
Ապտակ զարկում մեր գլխին:

Նանի՛կ կասեմ, իմ հրեշտակ,
Նանի՛կ կասեմ երգելով,
Նանի՛կ կասեմ երգելով,
Ողբ երգելով ու լալով...

Երբ մեծացար աստուծով,
Առ հորդ նետ-աղեղը,
Հեծի՜ր նորա նժույգը,
Կրկին տիրե՜ քո ցեղը:

Խնդրե հորդ վրեժը
Այն քաջ, անգութ հաղթողեն,
Ա՜ռ նորանից հոտերը,
Արտաքսե՜ մեր սարերեն:

Նորա երկաթի կուրծքի մեջ
Դու էլ ցըցե քո մըզրախ,
Երկու բուռն արյունից
Դու խմե ուրախ-ուրախ2:

Խմե՜, և թո՜ղ հովանա
Քո մոր կրակված սիրտը,
Խմե՜, և թո՜ղ հանդարտվեն
Հորդ կարոտ ոսկերքը:

Նանիկ կասեմ, դու քնե՜,
Ո՜վ իմ հրեշտակ արդար,
Քնե, զի դու միայն ես
Մորդ սրտին մխիթար...

ՊԱՌԱՎ ՕՐԻՈՐԴ

Անցնում են միշտ սև օրեր,
Անդառնալի... սրընթաց...
Իմ աչքերի արտասուքը
Չէ՜ չորանում, է միշտ թաց:

Ժամանակը ձայն է տալիս՝ —
Դե՜, շո՜ւտ արա, հնացա՛ր...

Աննկատելի քո քայլերով
Գերեզմանին մոտեցար:

Վա՛յ իմ գլխին... անցան օրերս...
Դեռ չեմ գտել ոչ մի սեր,
Մինչև այսօր իմ կյանքին
Չեմ լծորդել մի ընկեր:

Այլ որպես մի խեղճ տատրակ,
Որ չուներ յուր վարուժան,
Մնաց ինձի միշտ լաց լինել
Իմ ողբալի բախտ դաժան...

ԵՐԱԶ

Եւ գայլը գառին հետ պիտի բնակի, ու
ինձը ուլին հետ պիտի պառկի, և որթը ու
առոյգ առիւծը, և պարարտ գուարակը, մէկ
տեղ պիտի արածեն և նրանց մէկ պստիկ
տղայ պիտի քշէ:
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ

Ես քնած էի հանգիստ և անուշ,
Ինձ երևում էր հրաշալի աշխարհ,
Այնտեղ թռչունն երգում էր քնքուշ,
Այնտեղ լուսինը շողում էր պայծառ:

Այնտեղ ծաղկունքը խնկեին ամբրոս,
Այնտեղ ծառն յուր չէր թափում տերև,
Եվ բյուրեղի պես կամարվեր ջրհոս,
Անուշ ջերմությամբ փայլում էր արև:

Ամեն ինչ այնտեղ խոսում էր անկեղծ
Բարեկամական սեր, եղբայրություն,
Եվ մշտագարուն — կյանքով անեղծ
Գեղափայլում էր անմահ բնություն:

Այնտեղ մահառիթ սուր և հրացան՝
Փշրելով՝ շինեին խոփեր արորի,
Եվ չըկար զինվոր, այլ յուր վարուցան
Գործում էր ազատ մշակն արի:

Խաղում էր գառը գայլի հետ անվախ,
Սերտ եղբայրության ուխտելով դաշը,
Եվ միամիտ ցուլն՝ աներկյուղ, ուրա՛խ

Լիզեր ամեհի առյուծի բաշը:

Եվ բազեի մոտ անհոգ ճնճուղիկ
Յուր ուրախալի երգում էր երգը,
Նա չէր վնասում մրգաբեր ծաղիկ,
Ոչ երկրագործի ցորենի բերքը:

Այնտեղ զինվորի գուժկան մուզիկան
Վառոդի ծխում մահ չէր պատճառում,
Այլ սրբանվեր սաղմոս, շարական
Խնկվում էր անուշ՝ աստծո տաճարում:

Եվ ժողովուրդը բնավ չէր կրում
Գառն հոգսերի ցավալի շղթան.
Հայրենի հողում՝ հունձքի և կալի
Էին պարապված, վարեին գութան:

Հրաշալի՛ աշխարհ... Հինավուրց Գուշակ3
Մարդկային կյանքին ձևեց այդ տարազ,
Բայց ես զարթեցա իմ քնեն անուշակ,
Ափսո՛ս, որ տեսածս՝ էր մի լոկ երազ...

ԱՆԿԵՂԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Սրբարանի անկյունում
Նստած էր քավողը մեղքի,
Եվ միջնորդը մարդկության
Հետ աթոռույն երկնքի:

Նա էր արդեն ալևոր
Վարդապետ մի վանական,
Որ զոհել էր չար աշխարհ
Երկնքի արքայության:

Նորա առջև չոքած էր
Մանկահասակ մի տիկին
Եվ տալիս էր համարը
Դեռ նոր գործած յուր մեղքին.

— Մի քանի օրով առաջ՝
Մեր դրացի Բարբարան
Բերավ իմ բարկությունը,
Հայհոյեցի ես նորան:

Երբ որ անցավ բարկությունս

Ես շատ ու շատ զղջացի,
Եվ գնացի նորա մոտ,
Ներողություն խնդրեցի:

—Օրինյալ լինես, իմ դուստր,
Ռաբբին տվեց պատասխան,
Այդպես պետք էր կատարել
Քեզ աստուծո հրաման:

—Միայն ասա՛, թե էլ ի նչ
Մեղքեր գործել ես, տիկին,
Որ քեզ ես տամ թողություն,
Աղտից սրբվի քո հոգին:

Քաջալերված այդ հուսով,
Սրբախնդիր մեր տիկին,
Հառաջ տարավ խոստովանք,
Ունկն դնե ռաբբին՝ —

—Հախճապակյա մի գավաթ
Գնել էր իմ ամուսին,
Չինական գեղեցիկ
Գործ էր այն թանկ կարասին:

Մի օր անզգույշ կերպով
Նորան դիպա, կոտրեցի,
Երբ այրիկս հարց արավ,
Կատուն կոտրեց, ասացի:

Նա բարկացավ խիստ սաստիկ
Եվ պատժեց խղճիկ կատուն,
Զի նորա մեջ յուր սուրճը
Խմում էր ամեն առավտուն:

Բայց ինձ խիղճս տանջում է,
Որ կատուն իմ պատճառավ,
Թեև ոչինչ մեղ չուներ,
Այնպես սաստիկ ծեծ կերավ:

Տիկինը շատ այդպիսի
Մեղքեր ծանր և թեթև,
Անկեղծորեն, պարզաբար
Թափում էր սուրբ հոր առջև:

Բայց գործել էր մի այլ մեղք,

Խոստովանելն էր դժվարին,
Զի պատկառանք և ամոթ
Կապ էին դրած լեզվին:

— Ասա՛, դուստր, թե այլևս
Փորձել է քեզ սատանան,
Զի ձեր բոլոր գաղտնիքը
Պետք է գիտենա քահանան:

Իսկ մեր տիկնոջ ամոթխած
Դեմքը փոխվեցավ իսկույն,
Նորա ճերմակ թըշերը
Կարմիր ներկեց վարդի գույն:

Բայց ուժգին էր նորա մեջ
Կրոնքի եռանդը մոլի.
Քան թե ամոթխածության
Պատկառանքը գովելի:

Այդ պատճառավ նա թափեց
Գաղտնիքն յուր հոգուն,
Որո հետ խիստ կապակից էր
Հիշատակն անցելույն:

Երբ որ սիրո կախարդը
Դեռ նոր թովել էր նորան,
Վրդովելով կուսական
Անմեղ սրտիկն աղջկան...

— Դեռ ես ազապ, նորահաս,
Աղջիկ էի իմ հոր տընում,
Մեր դրացի Իվանեն
Խելքս, միտքս կը իմ տանում:

Նա սիրում էր ինձ, հայր սուրբ,
Ախտաբորբոք, ջերմ սիրով,
Մեր երկուսիս սրտերը
Կապված էր պինդ կապերով:

Ուղիղն ասեմ ձեզ, հայր սուրբ,
(Զի աստուծից չէ թաքուն)
Մինչև այսօր նորա սեր
Միշտ վառվում է իմ հոգում:

Նա է մի սիրուն տղա,

Սիրո՛ւն, որպես հրեշտակ,
Թեև աղքատ ծնողաց
Է չքավոր, խեղճ զավակ:

Եվ մենք աստուծո առջև
Ուխտ էինք դրած երկուքով,
Մեր սերն ամուսնության
Կապել ոսկի պսակով:

Բայց իմ լացն ու արտասուք
Անցան իզուր, անօգուտ,
Չըկարացին մեղմացնել
Ծնողաց սիրտն անգութ:

Նոքա սրտիս սիրական
Իվանեից զրկեցին
Եվ ինձ հարուստ, ծերունի,
Քոռ-Գևոյին տվեցին:

Մինչև այսօր Քոռ-Գևոն
Ինձ թվում է որպես դև,
Իվանեի սերը քաղցր,
Պաշտելի է իմ առջև:

Քանի այդ բռնակալն
Եղավ խեղճիս ամուսին,
Էլ չըտեսա ես նորան —
Իմ ցանկալի հին փեսին:

Այդ նախանձոտ ծերուկն
Ինձ պահում է վանդակում,
Նա դահի՛ճ է, գութ չունի,
Ինձ այրում է և մրկում:

Ես էլ նորան գինու մեջ
Թմրեցուցիչ տըվի դեղ,
Նա թուլացավ և մնաց,
Որպես մեռյալ տեղն ու տեղ:

Գիշերային խոր պահուն
Ես դուրս եկա մեր այգին,
Այնտեղ ինձ սպասում էր
Իմ սիրելին թանկագին:

Ավելորդ է մանրամասն

Պատմել ձեղ, հայր պատվական,
Դուք ինքներդ լավ գիտեք,
Թուլությունքն ամեն կնկան...

Ես ձեզ բոլորը ճիշտ, անկեղծ
Խոստովան եղա պարզաբար,
Ինչ ապաշխարանք ինձ վերա
Կրդնեք, դուք եք խաբար:

Միայն խնդրում եմ, հայր սուրբ,
Այդ ինձ համար չէ թեթև...
Մի՛ պատվիրեք Իվանեին
Չսրել այսուհետև:

ԿՅԱՆՔԻ ՀՈՍԱՆՔԸ

Ի՛նչ զվարճությամբ սահում են ժամեր
Գեղեցկափթիթ իմ կյանքիս գարնան,
Ի՛նչ անուշահոտ ծաղկում են վարդեր,
Զարդարում եդեմ անհոգ մանկության:

Սահո՛ւմ են ժամեր, վազում ժամանակ,
Բայց Կռոնոսի անիրավ ձեռքեր՝
Ամեն մի րոպե քաղում են անհագ՝
Կյանքիս դրախտեն գեղեցիկ վարդեր...

Տիրում է սարսափ՝ զարհուրանք և դող,
Երբ մտածում եմ, ամեն մի վայրկյան՝
Քանի քայլ հառաջ՝ դիմում եմ դեպ՛ հող,
Ուր մարդիկ անդարձ իջան հավիտյան:

Ի՞նչ է իմ կյանք՝ ուրեմն մի ծաղիկ՝
Գարնան ոգիով բացված գեղեցիկ,
Գալիս է աշուն՝ տերևը թառմում,
Փչում է հողմը՝ փոշի է դառնում...

ՆՎԵՐ «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՎՈՒՅՆ»

Հավուր միում համախմբյալք
Գիշերահավք ի մի վայր,
Ատյան կազմյալ մեծ խորհրդոց՝
Զրույց առնեն այր ընդ այր:

Անդ էր բուռց և չղջիկանց
Միահեծան ծերակույտ.

Որոշեին՝ — զի՞նչ աշխարհին
Յուրյանց է վնաս, կամ օգուտ:

«Լուարո՛ւք ասեր, պետք և արքայք,
Որ ի գլուխս կապեք թագ.
Դուք, տիրապետք ժողովրդոց
Մութ գիշերուն ժամանակ»:

Հարյավ ի յոտս ոմն ի նոցունց,
Քարոզ կարդաց նա սաստիկ,
Եվ ամբոխն բազմաժողով
Ուկն դներ հույժ մնջիկ:

«Գիտե՞ք, ցորչափ սիրյաց զմեզ
Տարտարոսյան Պլուտոն.
Մինչ գիշերի արար մեզ հավ
Հայաստանին ի կեդրոն:

Աստ ի խավար չիք մեզ մռայլ,
Ո՛չ տիրե և նինջ Մորփյան,
Յորս ելանեմք ազատորեն,
Միշտ երջանիկ ի հանգստյան:

Մյուս կենդանիք գիշերամարտք
Անկյալ դնեն ի թմբիր.
Մինչ Ուզումպյան Ֆեբոսի
Լույս ծագե ի երկիր:

Իսկ ես այժմ զնոր աղետից
Զչարաց լինիմ ձեզ գուժկան.
Թեպետ խոցք սիրտս ի ներքուստ
Եվ շփոթն միտք իմ համայն:

Զի՞նչ այս ճաճանչք, որք ցոլանան,
Զի՞նչ լույս ցայտե շողշողուն,
Տեղի տա մութն ի խորս լերանց,
Եվ արշալույս փայլե սիրուն:

Ահա Վարագ բոցավառյալ
Արփիանան գեղանիդ,
Միթե ի հանգ ո՞չ ելանեն
Բանք զոր ասացին մեր նախնիք.

Թե յավուր միում Վարագյան
Ի բարձրաբերձ գագաթան,

Ուր Դիոսի մեծ Արծվին
Քառաթևյան մահարձան:

Զերթ զեփյուռիկ հրաշանորոգ՝
Արծիվ ոմն լայնաթև՝
Վեր կենցի շքեղափառ
Խավարելոց նա պարգև:
Նա ի Վարագ սրբանվեր,
Ի գլուխ լերին բարձրագահ,
Աթենյան կառուսցե՝ տաճար
Իմաստուհվույն հզոր, անմահ:

Անդ ժողովյալ զմատղերամ
Քնքուշ մուզայս Վասպուրական,
Կրթեսցին հուսում, արհեստ,
Յանուշ ի կյանս Պառնասյան:

Հաջորդեսցին այս վաղեմի
Կյանք խոհական, գերերջանիկ,
Ո՛չ նինջ լիցի և ո՛չ մռայլ —
Հինավուրց դար ոսկեղինիկ:

Անդ Ապոլոն, դափնապսակ,
Յուրն ախորժ ներդաշնակ,
Զարթուսցե զթմրյալ ոգիս
Ի դյութական նվագ:

Եվ մուզայից երգք քաղցրիկք,
Քան Սիրենյան անուշ սրինգ,
Մտած բազմաց լեցին գրգիռ,
Վերամբառնալ անդ ուր երկինք:

Եվ դալկացյալ Հայոց արեգ,
Առույգ լուսով կենսանորոգ,
Ճախարակյալ՝ շրջան առցե
Հայաստանին ի յոլորտ:

Ծագիցե լո՛ւյս... և արփենվույն
Ոսկիաձույլ սուր սլաքի
Վանեն զմութն ընդ բնակչաց
Ի խորս լերանց ամրափակ:

Այսպես յուր ճառ է ած յավարտ
Բազմախորհուրդ ծերունին,
Եվ բոթաբեր ազգյաց սարսափ

Խավարասեր խուժանին:

Մինչև ոմն ի չղջկանց
Հարյավ ի յոտս անդստին
Եվ ողբալի կարդաց բարբառ,
Զայնը հատավ յանձուկ սրտին:

Ծագյա՛վ լույս եղերական՝
Կործանման մեր չար գուշակ՝
Ա՛խ, մաշեցինք ի փահարս,
Ի խորշս լերանց սովաստակ.

Քանզի ազգ մեր խավարաբնակ
Չը կարե որսալ ի լույս ցերեկ.
Զի մեր աչեր կուրացուցանե
Յուր ճաճանչոք պայծառ արեգ:

Իսկ աչք է՛. մեր ի՞նչ է հնար,
Ի՞նչ և ընդ այս խորհուրդ լավ,
Քանզի հատավ հույս մեր կենաց,
Ազատություն մեր կորյավ:

Եվ չղջկանն ընդմիջյալ խոսք
Յոտին եկաց ծերունին.
Եվ ընդհատյալ զյուր բանին թել
Այսպես կցյաց խոհունին.

Ընդդեմ կքրել վեհ արծվիդ
Է աքացել ընդ խթան.
Բա՛վ է, եղբայրք, որչափ կերայք
Զազգ կենդանյաց ի մթան:

Իսկ այդ այժմ ամենուրեք
Ծավալվեցավ լույս ճշմարտին.
Եվ մենք թողուցք մթին խավար
Եվ զխորշն աղջամղջին:

Եվ Արծիվդ այդ չէ ումպետ ոք
Պատգամաբեր է Դիոսին,
Մատիցուք հոժար սրտով
Ընդ հովանյավ թևոց նորին:

Եվ հինավուրց կիրքք նյութականք
Ի սրտից մեր թո՛ղ ջնջեսցին.
Եվ ոչ անձինք մեր նանրասերք

Ի սնոտիս մաշեսցին:

Որպես նախնիք մեր քաղցրաձայն՝
Եվ մեր երգոց ներդաշնակ՝
Ի Վարագյանն յարտևանանց՝
Թո՛ղ հնչեսցին անուշակ:

Կարի զչարյալ յոտս եկաց
Չղջկին բան հերքյանց բուն.
Խավարաբնակք հաճ և հավան
Եղեն նման ողջ, համբուն:

Ուխտ ուխտեցին երդմամբ հաստատ
Ընդդեմ լինել Արծվին,
Գործոց լինել խոչընդակ,
Ջնջել զճիգս բնավին:

Զի արգելցի լուսույն ծագում,
Տիրեսցե միշտ մահ և խավար.
Եվ կենդանիք թմրյալ ի քուն,
Կապտել կարեցին նոքա ավար:

Կեցցե՛ հավերժ, կեցցե՛ բուն...
Զայն որոտաց յամենուստ,
Կեցցե՛ հաղթողն, կեցցե՛ բուն...
Գոռաց դժոխքն ի ներքուստ:

ՄՇԱԿ
(Նվեր Խրիմյան Հայրիկին)

Օ՛ր գարնանային, օ՛ր թարմ և սիրուն,
Շնչում է արփին նոր կյանք, ջերմություն.
Բայց դեռ դաշտերը ձմեռվա քնով
Թմրած նիրհում են, զարթնել չեն ուզում:
Եվ լի հույսերով մշակը ժրաջան
Նիհար եզներով վարում է գութան:
Զարթե՛ք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,
Մինչև ե՞րբ պիտ՝ ննջեք, ամայի դաշտեր:

— Հաջողություն քեզ, ո՛վ անբախտ մշակ,
Մշակ՝ անպտուղ, խոպան դաշտերի,
Բարեմաղթում է մշակը մտքերի,
Որ կարեկից է քո դառն վշտերի:
Քո տխրության մեջ՝ խնամքով թաքցրած,
Քո ճակատագրի մեջ դարերով ծանրացած,

Կարդում է և նա յուր դառն վիճակը,
Մտքեր սերմանող անբախտ մշակը:
Նա ևս քեզ պես կորդ անապատում
Յուր ամբողջ կյանքը մաշում է, աշխատում, —
Անապատումը համառ սրտերի
Եվ անպտղաբեր մարդկանց մտքերի:

Եվ նրա ազնիվ ճգնաց փոխարեն
Տգետը փշյա պսակ է հյուսում.
Իսկ նա լի հույսերով յուր սերմն է ցանում
Եվ ապագայում հունձքի է սպասում:

ՀԱՅԱՍԵՐԻ ՈՂԲ

Քանի տարի է, Հայրենիք սիրուն,
Դառն ցավերովդ եղել եմ ջունուն.
Սար ու ձոր ընկած իբր խենթ մաջնուն.
Վեր առ զքնարդ մուսայդ դյուցազուն.
Ողբամք Հայաստան, ափսո՛ս Հայաստան:
Մըթնեցավ հայոց պայծառ լուսատուն,
Խեթիվ հայեցավ Ակըն գերաբուն.
Միշտ այդպես ձմեռ, ե՞րբ հապա գարուն.
Արի նըստեմք լամք, ո՛վ Հայ իմաստուն: Ողբամք Հայաս.:
Վախում եմ մի օր անտեր՝ անպաշտպան,
Մեռնի այս հիվանդը, ո՛չ դեղ, ո՛չ դարման,
Ու այնպես կորչի ազգըն աննըման,
Մեզ մնում է սուգ ո՛վ Հայ գիտնական: Ողբամք Հայաս.:
Եկեք ի հանդես, սգավոր տեսարան.
Ո՛վ մեծըդ Ներսես, Սահակ Պարթևյան,
Մեսրովպ և Մովսես արփիք Թորգոմյան.
Եկեք երջանիկ Հարքրդ սրրբազան: Ողբամք Հայաս.:
Չը կան ազգասեր նախնի իշխաններ,
Ցըրված է հոտը, չկան ժողովներ,
Հավատն է միայն, ոչ միություն, ոչ սեր,
Լեր դու ողբակից, ով Խորենյան ծեր: Ողբամք Հայաս.:
Հայաստանի մեջ զանազան ազգեր,
Յուր խեղճ որդիքը պանդուխտ ու անտեր,
Քաղաքք ու ավանք անբընակ, ավեր,
Ավերակ ու անշեն են հայոց տներ: Որբամք Հայաս.:
Ինչո՛ւ դու այդպես ո՛վ վերին տնտես,
Հայոց խեղճ ազգը արեցիր անտես.
Ե՛րբ արդյոք մեզ դու լույս պիտի ծագես,
Ե՛րբ բարի իշխան մեզ պիտի կարգես: Կանգնյա Հայաս.:
Մի՛ թողուր, մի՛ թողուր ավեր Հայաստան,

Հարո՛ դու կրկին զազգըն անկենդան.
Լուր մեզ դու, լուր մեզ փըրկիչ բարեխնամ,
Փայլեցո՛ կըրկին փառքն Արարատյան,
Կանգնյա զՀայաստան, ափսո՛ս Հայաստան:

ՈՂԲ ՕՐԻՈՐԴԻՆ

Հայ օրիորդ եմ ես, քույրեր,
Հայաստանի երկրեն,
Որբ օրիորդ եմ ես, քույրեր,
Հեռու իմ հոր աշխարհեն:

Չար թշնամին խարձուց ավեր
Իմ տնակը հայրենի,
Գերի վարեց քույր, եղբայրներ,
Ծնողքս զոհ եղան սրին:

Այժմ պանդուխտ օտար աշխարհ
Թափառում եմ անտերունչ,
Օտար երկնի կամարի տակ
Ես քաշում եմ դառն շունչ:

Ոչ ոք ինձի չէ ողորմում,
Որ տա խղճիս պատառ հաց,
Ոչ ոքի գութ բնավ չէ շարժում
Իմ արտասուքն ու իմ լացը:

Դուք բաշխեցեք ինձ հաց, քույրեր,
Որ չմեռնեմ սովեմեն,
Դուք հագցրեք հալավ, քույրեր,
Որ չսառչեմ ցրտեմեն:

Ես էլ ձեզի պես աղջիկ էի՝
Գոհարներով պճնված,
Ես էլ ձեզ պես սիրուն էի՝
Ոսկիներով զարդարված:

Այժմ նայեք իմ երեսին,
Որքա՛ն նիհար, գունատ է,
Եվ իմ հանգչած թուխ աչերս
Ամեն տղա կը ատե:

Բայց էր մի օր... երբ իմ ձեռքին
Կարոտ էին իշխանորդիք,
Որ իմ պսակի ճոխ փառքովը

Կատարեին հարսանիք:

Իսկ այժմ ինձ չարժանացնում
Գոնյա՛ չնչին հայացքի,
Ո՛չ մի մանուկ հայ տղամարդ,
Ո՛չ ալևոր հայազգի:

Մի՞թե այդչափ սառն սառած է
Ձեր սրտի մեջ հայ արյուն,
Որ տալ ձեր սերն դուք չեք կարող
Հայաստանի որբերուն:

Ճնճղիկն ունի յուր բույն
Լի կուշտ փորով օթելու,
Բայց ես չունեմ ոչ մի անկյուն
Անբախտ գլուխս դնելու:

Դուք սրբեցե՛ք, ազնիվ քույրեր,
Իմ արտասուք և իմ լաց,
Ինձ բաշխեցեք, աստծո համար,
Ուտելու մի պատառ հաց:

Հայ օրիորդ եմ ես, քույրեր,
Հայաստանի երկրեն,
Որբ օրիորդ եմ ես, քույրեր,
Հեռու իմ հոր աշխարհեն...

ԹԱՔՈՒՑԱԾ ԳԱՆՁ

Ասեմ. — աղջի, արմենուհի,
Թե քո աստված կսիրես,
Ձգե՛ քողը ծածկած դեմքեդ,
Գոնյա տեսնեմ քո երես:

Ասաց, — Լռե՛, դու, ո՛վ մանուկ,
Դեռևս անփորձ տղամարդ,
Մի՞թե չես տեսել ծածկոց,
Երբ վառվում է կարմիր վարդ:

Ասեմ. — աղջի, արմենուհի,
Ցույց տո՛ւր տեսնեմ քո աչերը,
Ի սեր աստծո ինձ շնորհե
Քաղել քաղցրիկ զույգ պաչեր:

Ասաց, — Լռե՛, դու, ո՛վ պատանի,

Ինչ հանդուգն ես դու եղել,
Միթե չե՞ս տեսել երկնքում.
Երբ փայլում են զույգ աստղեր:

Ասեմ. — աղջի, արմենուհի,
Տեսնեմ ի՞նչ է քո ծոցում,
Այնպես անուշ հոտով բուրում,
Ինձ բերում է հիացում:

Ասաց, — Լռե՛, դու, ով մանուկ,
Այնտեղ բուրում է թուրինջ,
Մի՞թե պարտեզում չե՞ս քաղել
Նուռն, լիմոն կամ նարինջ:

Ասաց, — Լռե՛, ով անամոթ,
Այդ պահանջե սեր և զոհ,
Դու նվիրե անձդ ինձի,
Որ ես լինեմ քեզնից զոհ:

ՀԱՅԻ ԿԱՂԱՆԴԸ

Համաշխարհային ժամացույց
Զարկեց վայրկյան յուր վերջին,
Հին տարին տեղի տվեց
Կաղանդին օր առաջին:

Դղյակների գագաթեն
Գոռացին թնդանոթներ,
Եվ բյուրավոր հրացայտ
Որոտացին անոթներ:

Հարա՛յ-հրոց, աղաղակ,
Երգ և աղոթք խառնաձայն,
Խառնիճաղանջ ամբոխից
Դեպի երկինք բարձրացան:

Շուկա, փողոց, հրապարակ,
Լի են մարդկանց բազմություն.
Նոքա ուրախ, խնդամիտ,
Խումբ-խումբ շրջեն տընից տուն:

Շնորհավոր նոր կաղանդ,
Շնորհավոր նոր տարի.
Բարեմաղթում են շատ բախտ,
Եվ ապագա կյանք բարի:

Դու մի՛ ժպտա, դժբախտ հայ,
Մի՛ նախանձիր օտարին,
Քեզ համար չէ՛ բերկրություն,
Քեզ համար չէ՛ նոր տարին:

Նա քեզ համար չէ՛ բերել
Ո՛չ նոր կյանք, ոչ նոր օր,
Քեզ երեկն և այսօր՝
Նույն վիճակն է դարևոր...

Ի՞նչ գործեցիր դու հերվան
Իզուր վատնած քո տարում,
Ո՞ր թերությանց, ո՞ր կարյաց
Տվեցիր դու կատարում:

Պանդխտության վարանքից՝
Քո որդիքը ցիրուցան՝
Դեպ բնիկ յուրյանց երկիր՝
Դարձա՞ն դեպի Հայաստան:

Թե նոքա դեռ թափառ են
Ամեն գոտի աշխարհաց,
Բոբիկ ոտքով, կիսամերկ,
Մուրանալու պատառ հաց:

Հայրենական յուր երկրում
Վաստակավոր մշակը
Բանեցնո՞ւմ է արորը,
Բարվո՞ք է յուր վիճակը:

Թե նորա հողն աղայի
Ժառանգական է կալվածք,
Յուր որդիքը սովատանջ
Չունեն տանում պատառ հաց:

Վտարեցա՞ն մեր միջեն
Վասակների սև ոհմակ,
Թե դեռ տիրեն՝ Բրքիշո,
Պապ, Մերուժան և Սուրմակ:

Կրոնական մրրիկով
Եղբայրք զատված մեզանից
Ազգայնության սուրբ ուխտով՝
Մեզ հետ եղա՞ն կապակից:

Թե դեռևս պրոտներ
Եվ եզվիտը դաժան՝
Մեր մեջ ձգեն հերձված,
Ազգն առնեն բաժան-բաժան:

Եվ ազա՞տ է մեր կրոնք
Մահմեդի հալածանքեն.
Թուրքն ու պարսիկ չե՞ն զրկում
Հային յուր սուրբ բաղձանքեն:

Թե մեր դստերք գեղեցիկ,
Նշնված հայի տղային,
Քարշ են տալիս դեպ հարեմ,
Տանեն թուրքի տղային:

Հալածեցի՞նք մեր միջեն
Այն դարևոր սև խավար,
Մտցրի՞նք արհեստ, գիտություն
Եվ լուսավոր գաղափար:

Եվ մեր մանուկ սերունդին
Տվի՞նք մտավոր զարգացում,
Թե դեռ սաղմոս, ժամագիրք
Տիրում են մեր դպրոցում:

Ո՛չ, հային չէ նոր տարի,
Դեռ դժբախտ է մեր վիճակ,
Հայը դեռ հին ախտերի
Վայելում է դառն բաժակ...

Հայնժամ է մեր նոր տարի,
Երբ կընորոգվի մեր դրություն,
Մանկահասակ նոր կյանքով
Կստանանք նոր գոյություն:

ԻՄ ՎԱՐԴԸ

Այն մի պարտեզ էր, ճեմելիքներով՝
Լուռ և միայնակ զբոսնում էի,
Թարմ ծաղիկների նախշուն գուներով
Իսպառ հիացած, զմայլում էի:

Ուր թռչունները մին մինից սիրուն
Հնչեցնում էին գեղեցիկ երգեր,

Կարծես, քերովբեք անթիվ և անհուն
Ընթեռնում էին սրբազան գրքեր:

Այդ մի երա՛զ էր... բայց կախարդական...
Թողեց իմ սրտում ցավեր անհամար,
Կամ չար վհուկի թլիսմ դյութական,
Որ կրակ վառեց հոգույս մեջ անմար...

Ինձ այն ժամանակ քանի գեղեցիկ
Երևցավ նա այն ծառերի տակ,
Տխո՛ւր էր դեմքը, շրթունքը՝ մնջիկ,
Որպես բախտազուրկ, սգավոր հրեշտակ:

Գլխի ծամերն արձակած անփույթ
Տատանվում էին թեթև զեփյուռեն.
Եվ կերպարանքի ամբողջ երևույթ
Էր խորհրդական և աստվածեղեն:

Նա մոտեցավ ինձ դանդաղ քայլերով,
Ո՛րքան վշտահար էին աչքերը...
Մի սիրտ գրավող, ցավալի ժպիտ
Արտափայլում էր երեսի վրա:

Նա գրկեց ինձի յուր թևիկներով,
Քանի՛ բերկրություն կար այն գրկի մեջ...
Ուր սերը բոլոր յուր ցնորքներով
Բոցավառվում էր սուրբ հրով՝ անշեջ:

«Ահա՛ այդ վարդը — նա ինձ ցույց տվեց. —
Է մեր վիճակի ստույգ օրինակ...
Նա այդպես խոսեց, ինձ մենակ թողեց,
Ինքը չքացավ այն ծառերի տակ:

Ես տեսա վարդը, ի՛նչ քնքշիկ վարդ,
Դեռ նոր էր բացվել կոկոն ու սաղարթ,
Դեռ նոր էր օդը նորանից ծրծում՝
Յուր եթերական անուշահոտություն:

Ես տեսա վարդը... մի բու զզվելի
Դեղին ճանկերով էր նորան գրկել,
Եվ յուր պիղծ կուրծքին՝ սև նախանձով լի,
Այն ճոխ ծաղիկն էր նա պինդ ճնշել...

Աչքերիս առջև մթնեց, սևացավ,
Այն տեսարանը խռովեց իմ հոգին.

Սիրտս պաշարեց հազար ու մեկ ցավ,
Գլուխս բորբոքեց մի կրակ ուժգին:

Երեսս շուռ տվի, շուտով անց կացա,
Որ էլ չտեսնեմ այնպիսի եղեռ,
Ոչ այնքան հեռու, այլ խիստ մերձակա
Տեսա ես մի այլ ցավալի պատկեր. —

Մի անբախտ սոխակ — վարդի ջերմ երգակ,
Նորա թուփի մոտ թռչում էր մենակ,
Թռչկոտում էր նա, լուռ մրմնջելով,
Հոգնած թևիկները մեղմիկ շարժելով:

Նա աշխատում էր մոտենալ վարդին,
Բայց արգելում էր ավերակաց որդին, —
Այն բռնակալն, այն զզվելի բուն,
Այն գիշակերը, դեմքով ահարկուն:

Սոխակը թրռվռաց, ճըչաց, ճլվլաց,
Թափեց աչերեն շատ արտասուք, լաց,
Թույլ թևիկները կախեց, վայր ընկավ,
Վշտալի կուրծքը փուշերուն զարկավ...

Նետը ցցվեցավ սրտումը անզոր,
«Վա՛րդն» էր սոխակի հառաչանք վերջին, —
Այդ իմ սիրտն էր, որ մինչև այսօր
Կրում է յուր մեջ այն վերքը խորին...

ՆԱ ԻՆՁ ԽԱԲԵՑ

Էլ չեմ հավատա ես քո խոսքերին,
Խաբեբա՛ ես դու, սիրուն օրիորդ,
Դու ինձ խոստացար հավիտյան սիրել,
Ուրիշին չառնել քո սիրույն հաղորդ:

Քանի՞ երդումներ ինձ դու երդվեցիր,
Երկինք ու գետինք կոչեցիր վկա,
Մինչև մեր մահը... դու ուխտ կնքեցիր,
Բայց խոսքերիդ մեջ ճշտություն չրկա:

Էլ չեմ հավատա ես քո խոսքերին,
Իզուր մի՛ թափիր աչքիդ արտասուք,
Ցնո՛ղք է ձեր սերը՝ միշտ փոփոխական,
Հիմար կրքերի խաղալիք եք դուք:

Ա՞յդ էր քո խոստմունք... անխիղճ ուխտազանց,
Սո՛ւտ է քո երդում, սո՛ւտ են քո խոսքեր,
Եվ ես սխալված էի չափազանց,
Որ զոհեցի քեզ իմ ազնիվ կրքեր:

Ես զոհեցի քեզ բոցեր սրբազան
Սիրո կրակով խնկված իմ սրտին,
Իսկ դու քո սիրտը տվիր, ով Նազան,
Ինձանից գաղտնի այլ տղամարդին:

ՔԵՖ

Երկու արհեստավոր մարդ,
Մինը՝ կոշկակար, մյուսը՝ դերձակ
Ման էին գալիս տոն օրում
Ուրախ սրտով, համարձակ:

— Գնանք, եղբայր, գինետուն,
Լավ քեֆ անենք միասին,
Ի՞նչ կա, թե որ մսխըվի
Մեր քանի մի աբասին:

—Գնանք, ասաց դերձակը,
Էլ չենք տեսնի էդպես տոն,
Կը դուրս բերե իմ ծախսը
Երեկ կարած մեկ պալտոն:

— Գնանք, — կրկնեց կոշկակար,
Ես ծախել եմ մի կոշիկ,
Նորա շնորհիվ կըխմեմ
Այսօր գինի անուշիկ:

— Ես էլ ընկեր ձեզի հետ, —
Ասաց տերտերը բազմագետ,
Ես թաղեցի մի մեռել,
Տասը մանեթ եմ առել:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Սիրուն, սև-սև աչքերով,
Որ պատած են կամարաձև
Բարակ նիշած հոնքերով:

Վարդն ու մեխակ իմ թշերեն

Ստանում են պայծառ գույն,
Եվ քան զամեն ծաղիկներն
Ես բուրում եմ գերագույն:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Եվ հայ տղա կըսիրեմ,
Նորան միայն իմ սեր, իմ սիրտ,
Հաճությամբ զոհ կըբերեմ:

Խավար օրին ես լույս կտամ՝
Թե չծագե արեգա,
Եվ գիշերը ես մրցում եմ
Լուսնի հետը համարձակ:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Հայկա զավակ հարազատ,
Հայոց երկրի հողի վերա
Ես կըսիրեմ կյանք ազատ:

Շրթիս վերա եդեմական
Հոտով ծաղկել է մի վարդ
Հեռո՛ւ, հեռո՛ւ, օտարական,
Թող քաղե հայ տղամարդ:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Չեմ տալ իմ սերն օտարին,
Օտարի հետ ես չեմ վարի
Կյանքիս ունայն իմ տարին:

Ես սիրում եմ ընտանեկան
Կարն ու գործը տնային,
Ես սիրում եմ ուսում, արհեստ,
Կրոն, լեզու ազգային:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Ինձ համար է հայ տղան,
Մի՛ նախանձիր, օտարուհի,
Մի՛ հրապուրե դու նորան:

Քո թշերի շինծու դեղը
Վաղանցուկ է և դժգույն,
Ծոցիդ միջումն օձ է բնակվում,
Շրթունքիդ մեջ դրած է թույն:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,

Քնքուշ, համեստ, աննման,
Սիրե՛, սիրե՛ ինձ, հայ տղա,
Դու չես լինի փոշիման:

ԱՐՏԱՎԱԶԴ

Եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր
ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին
յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես,
և զլոյս մի տեսցես:
ԽՈՐԵՆԱՅԻ

Կախարդուհի վհուկները
Նոր չարիք են հնարում,
Աժդահակա կնիկները՝
Վիշապների տաճարում:

Լույսը շողաց, ծագեց արև
Թուխ-թուխ ամպերու միջեն,
Մի ձիավոր անցավ շուտով
Արտաշատա կամուրջեն:

Գինա գետի ափերու մոտ
Սև նժույգը վազում էր,
Նա վազում էր որպես սև ծուխ
Մտքից արագ՝ թռչում էր:

Նորա վերա մի պատանի
Նստած էր քաշի նման,
Կապարճը լի էր նետերով,
Ուսին՝ աղեղ, լայն վահան:

Որսորդական յուր շները
Թափառում են սար ու ձոր,
Հոտ քաշելով՝ պտրում են
Էրե, թռչուն նորանոր:

Թուփի մեջեն հանկարծակի
Վազեց կինջը սոսկալի,
Սոսկալի էր ժանիքները,
Աչքերը վառ՝ կրակով լի:

Տեսավ նորան Արտավազդը,
Վերա հասավ ձիընթաց,
Նետեց նետը, վայրի կինջը

Ահեղ ձայնով որոտաց:

Օդը մթնեց, փոշին պատեց,
Բարձրացավ թունդ մրրիկ,
Եվ անդունդը խոր հատակից
Գոռաց ձայնով հույժ սաստիկ:

Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վիհ-փոս,
Ուր որսորդն յուր ձիու հետ
Ներս գլորվեց դյուրահոս:

Կորա՛վ արին՝ Արտավազդը,
Կորա՛վ խորին անդընդում,
Հոր անեծքը նորան պատժեց,
Որին նա շա՛տ էր ատում:

Իսկ քաջքերը Մեծ Մասիսի
Դարբնեցին շեկ երկաթը,
Հափշտակած՝ Արարատի
Տարան նորան՝ գագաթը:

Այնտեղ դրին խոր այրի մեջ
Ձեռքն ու ոտքը շղթայած,
Որ Արտավազդ մինչ հավիտյան
Մնա այնտեղ բանտարկված:

Չը հեռացան Արտավազդից
Յուր շները հավատարիմ,
Զույգ շները որսորդական
Մնացին նորան մտերիմ:

Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կրծոտում են հաստ շղթան,
Կրծոտում են, որ արքային
Տան հնար ազատության:

Եվ մաշվում է ծանր շղթան,
Նա մաշվում է օրեցօր,
Փոքր է մնում, որ կորցնի
Զորությունն յուր հզոր:

Հայոց երկրի դարբինները,
Մեծ Զատիկի գիշերին,
Երեք անգամ ծանր մուրճը

Զարկում են յուրյանց սալին:

Նույն րոպեում ծանրանում են
Արտավազդա շղթայքը,
Որ չազատվի, չրկարենա
Ջնջել բոլոր աշխարքը:

Մինչև այսօր աքսորված է
Արտաշեսի քաջ որդին,
Վիշապազանց դառն վրեժ
Մեծ տանջանք է յուր սրտին:

Աժդահակա կնիկները
Վիշապների տաճարում
Պար են պարում նվագներով
Եվ մեծ տոն են կատարում:

ԲԱԽՏ

Ճանճերն այնտեղ են հավաքվում,
ու որ մեղր կա:
ԱՌԱԾ

Կար ժամանակ, որ ես էլ
Էի ուրախ, երջանիկ,
Շողշողում էր իմ բախտի
Աստղը պայծառ, գեղեցիկ,

Ո՞վ չէր իմ սերտ բարեկամ,
Ո՞ւմ չէի ես սիրելի,
Իմ մոլությունքն անգամ
Էին հարգի, գովելի:

Քանգի լի էր իմ քսակ,
Առատ, ճոխ էր և սեղան,
Մինչ հալածող թշնամիքս
Քնքուշ եղբայր ինձ եղան:

Ամեն մարդ իմ պատվին
Դներ բարձր աստիճան,
Որպես մեղրը ճանճերից
Միշտ պատած էր իմ շրջան:

Ամեն բերան ջերմեռանդ
Հորինում է ինձ գովեստ,

Իմ հանճարն ու իմ տաղանդ
Էին գերագույն և համեստ:

Ամեն մի դատարկ խոսքիս
Պատասխանն էր միշտ այո՛,
Ձյունը սև է ասեի,
Սև՛ է, պարոն, սև՛, այո՛:

Ամեն հիմար գրվածքիս
(Թեև գայլի շարական(,
Գովասանքին չափ չկար,
Էր վսեմ, անզուգական:

Որքան ես իմ խոսքերում
Էի սխալ, շաղակրատ,
Բայց ոսկեղեն իմ բերնով
Խոսում էր մեծն Սոկրատ:

Կեղծավորքն այդպիսի
Փաղաքշանաց փոխանորդ՝
Իմ վերջին կոպեկներին
Էին ընկեր բաժանորդ:

Բայց երբ դարձավ անիվը
Չարանախանձ իմ բախտին,
Որպես օդեղեն ամրոց
Բոլորն անցան դառնագին:

Եվ հեռացան ամենքը,
Ձի դատարկ էր իմ քսակ,
Թառամեցա՛վ կեղծավոր
Ձեռքով հյուսված իմ պսակ...

Խավարեցա՛վ, կարծես թե,
Ոսկի ավուրց իմ արև,
Եվ ո՛չ ոք այնուհետև
Չէր ուզում տալ ինձ բարև:

Այդպես է միշտ աշխարհի
Անիծված կարգն ու կանոն,
Երբ բախտը ծռվեց քեզանից,
Ծուռ է գծում միշտ քանոն...

Հրեշտակի լեզվով խոսե,
Ինչ կուզես դու մտածե,

Ո՞վ բանի տեղ կրդնե,
Կասեն՝ խելքը ցնդած է:

Այժմ եղբայր, իմացիր,
Քո հաշիվն և քո սակ,
Չունես կյանքի իրավունք,
Երբ դատարկ է քո քսակ:

ՆՎԵՐ №... — Ի ՀԻՇԱՏԱԿԻՆ

Միթե արյունո՞վ երկնային դրպիր
Գրեց դժնդակ քո ճակատագիր, —
Երկաթի կապանք, բանտ և աքսորանք,
Եվ հայրենիքից լինել տարագիր:

Այո՜, երբ կույր բախտ բաժաներ վիճակ,
Ընտրեցիր բաժին քեզ փշյա պսակ,
Անվեհեր սրտով, հոժար, համարձակ
Խմեցիր կյանքի դառնության բաժակ:

Այդ քո սրբազան զոհաբերություն
Բաշխեց դիցական քեզ անմահություն,
Եվ քո անմոռաց վսեմ հիշատակը
Կավանդե հայը ապագա որդուն:

Դեռ մանկությունից այդ անգութ աշխար,
Ուղղեց քո առջև փշոտ ճանապար,
Երբ դու չքավոր, անտեր, անխնամ,
Քո ծնողքներից որբացար իսպառ:

Ցավալի հոգսը դառն աղքատության
Շրթուլացրուց թափը քո բնության,
Ուսում, գիտություն էր քո խնդրածը,
Քո սիրտը չրկապեց արծաթի շղթան:

Ն... քաղաքի կեղտոտ փողոցում
Փակված էիր դու խոնավ մի խրցում,
Ուր թոքախտական բարակացավը
Բոթաբեր հազը դրեց քո ծոցում:

Բայց չէր քեզի փույթ ցավը մարմնավոր,
Կամ աշխարհային վշտերն անսովոր,
Քո հոգին լի էր առողջ կյանքով,
Սիրտդ՝ ուժերի նոր, թարմ հոսանքով:

Եվ մոլորողի հրապույրը փառքի
Չըգերեցին քո՝ ոչ սիրտը, ոչ հոգի,
Դու նվիրեցիր բոլոր քո ջանքը
Հօգուտ հայրենյաց, հօգուտ քո ազգի:

Ազգն ի՞նչ փոխարեն շնորհեց քեզ, անբախտ,
Եռ եկան կրքեր, բորբոքվեց չար ախտ,
Եվ մոլենախանձ կղերի խրատով
Հայհոյեց քո գործը խուժանն ապերախտ...

ՈՍԿՈՒ ՄԱԴԱՆ

Աղքատությունից հանկարծ մի պարոն
Եղավ բախտավոր, արծաթով հարուստ,
Տալիս էր խնջույք, գնում էր թատրոն,
Ուներ ճոխ սեղան և հանգիստ ապրուստ:

Նա շինեց մի տուն՝ մեծ ու փառավոր,
Մուտքն էր պատած պարտեզ, բուրաստան.
Եվ մարդիկ ամեն՝ աղքատ, մեծավոր՝
Նորան հայրությամբ միշտ գլուխ կըտան:

Եվ զարմանալու չըկա մի առիթ,
Միշտ հեղաշրջիկ անիվը կույր բախտին,
Հանկարծ բարձրացնե մեկին մինչ զենիթ,
Մյուսին գլորե դեպի խորն անդնդին:

Բայց մարդկանց զարմանքը չափիցն անցավ,
Որտեղի՞ց արդյոք այդ նոր Կրեսոս
Առանց քրտինքի ոսկու տեր դարձավ,
Այդ հարցի լուծումն էր դժվար, ափսո՛ս:

Թե ինձնից հարցնեն, այս է պատասխան՝
Գանձարանումը նա մի ժամատան
Ամբողջ տաս տարի էր նա երեսփոխան,
Ուր գտավ առատ նա ոսկու մադան...

ԿԻՐԹ ՃԱՇԱԿ

Ես չեմ սիրի սովդաքար
Ու չեմ գնա բազազին,
Որ աստուծո ողջ օրը
Զոռ է տալիս իր գազին:

Եվ գիշերն անհանգիստ

Նրա չոթքի չըկչըկոց,
Մարդի զահլա է տանում
Դաֆթարների ողջ կապոց։

Գնա՛, կորչե՛ սովդաքար
Իր փողի սնդուկներով,
Նրա արծաթը չէ բերում
Այրված սրտիս հանգիստ զով։

Ես չեմ սիրի փեշաքար
Ու չեմ գնա ոսկերչին,
Նրա զոհարը չէ արժում
Սիրուն աղջկա մի պաչին։

Խիստ ազահ է ոսկերիչ,
Թեև ոսկու հետ խաղում
Եվ ժանգակեր մետաղից
Իր օգուտն է նա քաղում։

Գնա՛, կորչե ոսկերիչ,
Նա է նույնպես մեքենա,
Որպես իր մուրճն ու փուքսը,
Որով իր գործը գործե նա։

Ես չեմ սիրի քահանա,
Ու չեմ գնա տերտերին,
Նա որսում է շիլափլավ
Սնունդ տալու իր փորին։

Եվ գիշերն անդադար
Նրա սաղմոս, շարական
Չեն իմ ականջներին
Անուշ ձայներ դուրեկան։

Թո՛ղ կորչե տեր Մարկոսը,
Նա մի քուրմ է կեղծավոր,
Եվ իր մաշտոց, տոնացույց
Շինեց ուռկան զորավոր։

Ես չեմ սիրի չինովնիկ,
Թեև ծերուկ գեներալ.
Թո՛ղ թե, ուներ նա գյուղեր,
Հարյուր հազար իմպերիալ։

Ես զզվում եմ նայելով

Նրա ահագին քրթին.
Ուր սպիտակ բեղերը
Դեղին է ներկել բուռնոթին:

Գնա՜, կորչե՜ չինովնիկ,
Ինձ զարհուրանք է բերում,
Եվ արյունոտ ձեռքերեն
Մահվան հոտ է միշտ բուրում:

Ես կըսիրեմ ստուդենտ,
Մի նորահաս ուսանող,
Սիրո պաշտող մտերիմ,
Գեղեցկության է հարգող:

Թեև նա ման է գալիս
Հին հագուստով, կոշիկը ծակ,
Պանդոկումը պարտք ունի,
Եվ գրպանն է միշտ դատարկ:

Բայց սրտումը կիրք ունի,
Բորբոքվում է նոր կյանքով,
Երակներումը վազում է
Արյունը ջերմ հոսանքով:

Երբ իմ առջև ծնկաչոք
Մորմոքում է՝ նա լացում,
Եվ ախտալից աչերեն
Տաք արտասուք է բացում:

Քանի՛ ազդու հայտնությունք,
Որքա՛ն անուշ հրապույր,
Երբ քաղում է իմ թըշեն
Մի վարդենի տաք համբույր...

Կեցցե՜, կեցցե՜ ուսանող,
Նոր սերունդը մարդկության,
Ես իմ անձն և իմ սեր
Նրան կըզոհեմ հավիտյան:

ՇՈՒՇԱՆ

Շուշան, նստե՜, կարըդ կարի՜,
Հերիք այդքան ծուլանաս,
Այդ անիծված լուսամուտեն
Ե՞րբ պիտի դու հեռանաս:

Ասաց մայրը բարկանալով
Մանկահասակ աղջկան,
Որ կանգնած էր, լուսամուտեն
Մտիկ կըտար դեպ շուկան:

Իսկ Շուշանը տհաճությամբ
Եկավ յուր տեղը նստեցավ,
Նորա դեմքը խիստ տխուր էր,
Եվ սրտումն ուներ ցավ:

Հանկարծ դրսեն անցնող կառքը
Սաստիկ ձայնով որոտաց,
Եվ Շուշանը կրկին վազեց,
Փակ լուսամուտն արեց բաց:

Աղջի՛, նստի՛, կարըդ կարի,
Հերի՛ք նայես դու շուկան,
Այս առավոտ դու չես գործել,
Օրից անց է երեք ժամ:

— Ամա՛ն, մայրի՛կ, հոգուդ մատաղ, —
Աղջիկն ասաց քնքշաբար,
Ա՛յս բոպեիս, ա՛յս բոպեիս
Կըվերջացնեմ ես իմ կար:

Բայց նա տեսավ, որ անցնողն
Էր մի ծերուկ չինովնիկ,
Դեմքը խոժոռեց, տեղը դարձավ,
Հետքից կնքեց յուր մըճիկ4

Առեց գործը, բայց էր տաղտուկ
Չէր ախորժում կար կարել,
Նորա սիրտը վրդովված էր,
Նա չէր կարում համբերել:

Կրկին անգամ կառքի ձայնը
Հնչեց նորա ականջին,
Վազեց Շուշանը դեպ լուսամուտ,
Ուխտյալ տեղումն առաջին:

— Աղջի՛, էլի՞ դու գնացիր,
Ա՛խ, աներես, անամոթ,
Ինչո՞ւ այսօր դու գըժվել ես,
Չես գործում այս առավոտ:

— Մայրի՛կ, մայրի՛կ, հոգուդ մատաղ,
Մի բարկացիր իմ վերա,
Այս րոպեիս, այս րոպեիս,
Ես կրկարեմ իմ կարը:

Նայեց Շուշան, մի աֆիցեր
Անց էր կենում յուր կառքով,
Գեղեցիկ էր, մանկահասակ,
Թեքված կողքին շնորհքով:

— Աղջի՛, արի՛, կարըդ կարի,
Հերի՛ք շուկան մտիկ տաս,
Հիմա կըգա վարժապետդ,
Դու չես սերտել դեռ քո դաս:

Բայց աղջիկն էլ չըլսեց,
Թե ինչ խոսեց նորա մայր,
Ջեհիլ տղան կրակ վառեց
Նորա սրտումն անմար:

Երկար այնպես աչքը ձգած
Մտիկ կաներ մեր Շուշան,
Մինչ պատանին շարժեց ձեռքով՝
Բազմախորհուրդ մի նշան...

ԱԶԳՈՒՐԱՑ

Դառն մահվան օրհասով
Մի մարդ թողեց լույս աշխարհ,
Դեպ Պլուտոնի պետությունն
Ուղևորեց ճանապարհ:

Նա, անցնելով Ստիքսեն,
Դիմեց դեպի տարտարոս,
Առաջը կտրեց դռնապան —
Հրեշավորն Կերբերոս:

— Ի՞նչ ազգից ես, հարցրուց
Երեքգլխյան ամեհին:
(Իսկ խղճալի այն ոգուն
Սահման չըկար մեծ ահին):

—Ես Հռովմի սուրբ պապի
Եմ ուղղափառ կաթոլիկ.

Ասաց ոգին, սարսափեն
Հատավ ձայնն յուր վախլիկ:

—Ես ազգդ եմ հարցնում,
Հո՞ւյն ես, թո՞ւրք ես, թե՞ պարսիկ:
Դողդողալով ուրվականն՝
Դարձյալ կրկնեց՝ «կաթոլիկ»:

— Կաթոլիկն է կրոնքի
Եվ ոչ ազգի մի անուն,
Դու պատասխանե ինձ այն
Ինչ քեզնից են հարցնում:

—Ես չըգիտեմ ի՛նչ է ազգ,
Նոր եմ լսում ես այդ բառ,
Մեր հայրերի ուսմունքով՝
Կաթոլիկ եմ ուղղափառ:

Սարսափելի մի ծիծաղ
Ցընցեց շրթունք Կերբերին,
Դժգոհ սրտի յուր թունդը
Բերնից լորձունք վեր բերին:

— Ով չըգիտե ինչ ազգի
Է հարազատ նա ծնունդ,
Նա անօրեն, անկանոն
Ամուսնության է սերունդ:

Տարտարոսիցը հեռու,
Այդ խուժանն աննշան,
Առանձին կայարանում
Բնակվում են անդ բաժան:

Ուր թունդ է հուրը բորբոքվում,
Եվ դժնի են կատաղիք,
Ուր օձ, կարիճ զոհերի
Քրքրում են լերդ, աղիք:

Ահա՝ դուռը, — ցույց տվեց
Կերբերոսը վիթխարի:
Ոգին դիմեց դեպ այն կողմ
Թույլ ոտքերով, անարի:

Ղռան գլխին նկարած էր
Լոռլայի կերպարանք,

Եվ վերնագիր այդպիսի՝
Ազգուրացների կացարան:

Զարհուրելով ներս մտավ
Եռանդամոլ մեր ոգին,
Տեսավ ազգուրացների
Նա բազմություն ահագին:

— Հասո, ախպար, քե՞զ էլ հոս
Չարքերը վռնդեցին...:
Կրակի միջից հարցրուց
Ծերունի Սեբաստացին:

— Էկո՛ր, էկո՛ր, քեզ պագնեմ,
Մեր աշխրքեն ի՞նչ խաբրիկ,
Ո՞ղջ, առո՞ղջ է մեր պապը,
Մեր սրբազան ծեր հայրիկ:

Մեր Վենետկու, Վեննայի
Ընդո՞ր են մեր փարախներ,
Հայի ճըժեր որսալու
Կըբանի՞ն անոնց յարախներ:

Չը կարաց պատասխանել
Դեռ ազգուրաց այն ոգին,
Զգեց վզիցն հաստ շղթան
Սոսկալի դև մի ահագին:

Եվ քարշ տվեց դեպ ներսը
Ծծումբի վառ բոցերին,
Զարհուրելի դառնությամբ
Սկսեց տանջել յուր գերին:

Հուրը բորբոքեց, նա կոչեց՝
«Ինչո՞ւ չըսեմ, թե եմ հայ...
Ինչո՞ւ ուրացամ ազգս...
Վա՛յ իմ գլխուս... վա՛յ... վայ... վա՛յ... »

ԿՏԱԿ
Ա

Թըվին հազար ութ հարուր
Օխտանասուն ու մեկին,
Հայուց քրոնիկոնի
Ղվինոբիս թըվի հընգին:

Ես՝ Ղաղո Իվանիչս
Դեդեյուլ ու մամեյուլ
Օջախի վուրթի, քաղկցի,
Օխտը պուրտից պատվավուր:

Ուշքս ու միտքս գլխումս,
Լավ ուղուփով, խելացի,
Իմ մեղավուր ձեռքովս՝
Էս անդերձը գըրեցի:

Իմ խոստովնահեր տերտերը՝
Տեր Ճիպինն ու Բաստամը,
Սամիլն ու Սիմոնը
Չուրսնեվետ ին մոծամա:

Ճակտիս գիրը թամամ է,
Ես էլ շատ չիմ ապրի,
Երեք քսան տասնիրեք
Անց իմ կացրի էս տարի:

Ես շատ ումբըր քաշեցի,
Շեն մնա աստծու տունը,
Քեփ ու սափա արեցի,
Դարդ չըմնաց իմ սրտումը:

Փող ու փարա դադեցի,
Տուն ու տիղի տեր դառա,
Փողոցումը դուքաննիր
Ու մե քարվանսրա առա:

Աշխըքիս ամեն փառքիրը
Վիյիլեցի, լիացա,
Մագրամ փուղիցը մենակ
Ջըլիս ես չըկշտացա...

Կախեթու գինին էնքան,
Վունց որ իմ դեդի կաթը,
Ես շատ անուշ արեցի,
Առա նրա լազաթը:

Դոշ, զուրգիել, խիզիլալեն
Միշտ դրած էր իմ սուփրում,
Առանց թերխաշ ցոցխալի
Ճաշ չիմ կերի իմ օրում:

Օրթաճալի բաղերում
Քեփ իմ արի համաշա,
Իմ զուռնայի ձենեմեն
Ո՞վ չէր գալի թամաշա:

Բայց ծերության հասակում
Դարդս էլավ անդարման,
Էլի աղքատ, առանց փուղ,
Ես գնում իմ գերեզման...

Բ

Իմ քաղկըցի ախպրտիք,
Մեռնի՛մ ձիր ազնիվ հոգուն,
Ձի՛զ ես օրթում եմ տալի՝
Զրկինինց եկեղեցուն:

Ձի՛զ ես օրթում եմ տալի
Սուրբ Մողնի, սուրբ Թելեթին,
Սուրբ Ջիգրաշնին զորավուր,
Մեկել սուրբ Շահնաբաթին. —

Վուր դուք էս օրես էդնեն
Էս իմ անդերձը կարթաք,
Ու իմ գըջլտած հոքուն
Օղորմին էլ հիտը տաք:

Իմ կկինքիս պատմութինը
Ձի՛զ թո՛ղ ըլի օրինակ,
Ինձմեն դուք խիլք սովրեցեք,
Վուր չըմնաք խիղճ, դարդակ:

Երբ արևի դուք ծեքին
Աստրծուն աղոթքնիր կոնիք,
Ան ձիր դուշմընի գլխին՝
Ուշունց, անիծք կու թափիք:

Պարտական ըլիք, թե չասիք
Էս անիծքնիրն՝ էսթավուր՝
«Սուրփ Բեթխային, Թաճմինդա՛
Ծիրանավուր զորավուր,

Ըշկոլեքը, վարժատնիր,
Արեք քարքանդ, բրիշակ,

Վուր միր վուրթիքը խիլքեմեն
Չրլին, ու չդառնան էշակ»:

Ա՛խ, ի՛նչ ասիմ, ախպըրտիք,
Ըշկոլեք մոգոնողին,
Վուրթիքս ուսման տվի,
(Ափսո՛ւս մսխած իմ փուղին...):

Բայց դուս էկան շարլատան,
Իմ տունն արին վիրան,
Շայի-բիստիս մսխեցին,
Ջան ու ջիգարս կերան...

Գ

Էդ ուսում ասած բանը՝
Դրուստ անիծք է, դիախ,
Ով վուրթուն ուսում կուտա
Նա տուտուց է ու սարսաղ:

Չիր տղերքը թող սովրին
Վրացեվար գրիլ, կարթալ,
Էլ չէ նրանց հարկավոր
Ուրիշ բանով ուսում տալ:

Աղջկերանցը խո պետքը չէ՛,
Վուր էստունք էլ սովըրին,
Ու սիրեկնին գիր գրին,
Ջըհել տղերք հուրս անին:

Չիր քուլփաթի հիտ խոսիք
Ամեն վուխտ վրացեվար,
Հայուց լիզուն պետքը չէ՛
Անճոռնի է ու խավար:

Թե հայեվար դուք խոսիք,
Ան սովրեցընիք ձիր տղերքին,
Աստված վկա, էն կինքում
Էլ չի պրծնի ձիր հոքին:

Չիզ կըպրի կարասումը
Կերե վառած թեժ կըրակ,
Չուն ձիր վուրթիքը կուլին
Կռռ ու զոկ, շանճըրագ:
Հայեվար դուք մեկ մեկուն

Չըլի վուր բարևներ տաք,
Ան ձիր մեռըլի հոգուն
Էդ լիզվով աղոթք կարթաք:

Չուն հայեվար աղոթքը
Աստուծ իսկի չի լսի,
Աստուծ ինքը վրացեվար
Միշտ կոսե ու կու խոսի:

Չիր կնանիքը, տղամարդիք,
Թե մեռըլին կոնին սուք,
Վրացեվար վուխբ ասին,
Վուր ընդունվի արտըսուք:

Թե վուր Թելեթ, Խութեբա
Չիր քուլփաթով ուխտ գնաք,
Վրացեվար սըրփերուն
Չիր աղոթքնիրը կարթաք:

Վուր ձիր լեզուն հասկանան,
Ու կատարին ձիր մուրազ,
Հայոց լեզվի աղոթքով
Սըրփերուն կոնիք տնազ:

Դ

Չիր տներումը հայերից
Դուք չըպահիք քոծ ու բիջ,
Թե վուր պահիք ձեր գլխին
Կուլի աստծու մինձ պատիժ:

Չունքի ձիր պստիկները
Կուլի վուր նրանցմեն սովրին
Հայուց լեզվի խոսիլը,
Կոռ դառնան ու գըժվին:

Միշտ վրացի, իմերել,
Թուշ ու. խեվսուր, օսերուն,
Պահեցեք ձիր տներում,
Վուր լավ կոթին ձիր վուրթուն:

Չիր դուքներու դավթարը
Չըլի դուք գրիք հայեվար,
Վրացեվար գըրեցեք,
Լավ շնուքով, մարթավար:

Թե հայեվար դուք գրիք,
Կուլի տուտուց մի հեքիաթ
Ու աստուծ ձիր առուտըրին
Չի տա խեր ու բարաքաթ:

Չիզ, գեթաղվա, մի բան էլ
Միտս էբի սուրբ Թելեթ, —
Թե ուզում իք փուղ դադիլ՝
Պիտի ծախիք ղալբ բիլեթ:

Շանփուրի տղեն, Բուրնութին
Հազարներով դադեցին,
Զազրանիցեմեն բերին
Շինովի ասիգնացին:

Չուն հալալ աշխատանքով
Ո՞վ դադի միլիոններ,
Հառամ փուղն էր, վուր շինից
Փաբրիկեք ու մինձ տընիր:

Ուխտ դրեցեք՝ ձիր կինքում
Տասն անգամ կուտր նընկնիլ,
ՈԼ հարյուր հազարներով
Ամեն գամին կըլանիլ:

Էն վուխտը դուք կու թողնիք
Չիր տղերանցը, անգուման՝
Միլիոններով մանեթնիր
Ու հարուր հազար թուման:

Էստունցմեն մի ամանչիք,
Էս է հիմի ադաթը.
Հառամ փուղը հալալ է
Վունց վուր ձիր դեդի կաթը:

Նետավի, ինձի աստված
Ծիրութինս դարձըներ,
Ան իմ դեդեն՝ Կեկելոն
Ինձ նուրից վուրթի ծներ,

Մեկել կուտը ննգեք,
Մեկել փոդրաթ բռնեի,
Ու նրա էդնեն ուրախ,
Հանգիստ սրտով մեռնեի...

Կ

Բայց հիմի ջէր աշխըրքից
Չէ կշտացի իմ աչքը,
Երբ վուր ես փիքր իմ անում՝
Էն կինքումը բան չըկա...

Ասում ին, բաղ ու բաղչա
Ունի աստըծու դրախտը,
Թե ինձ էնտեղ կու տանին,
Ինչ լավ կուլի էն վախտը:

Ախ, միր օրթաճալի պես
Վո՞ւնց կուլի էն բաղն ու բախչեն,
Ո՞վ տըվի էնտեղ քեփ,
Զուռնա, դափն ու քամանչեն:

Ասում ին, արթարներուն
Գինի կու տան անպատճառ,
Բայց էն գինին վո՞ւնց կուլի
Կախեթու քաղցըր մաճառ:

Ասում ին, էն կինքումը
Մարդիկ վուչինչ չին ուտում,
Աստըծու փառքով կշտացած
Մարդն ուրախ է իր սրտում:

Դե՛, արի դու դիմացիր,
Ի՞նչ պիտ ըլի քու հալը,
Երփ սուփրում չունենաս
Գինի, զուրգել, խիզլալա:

Ասում ին, էն կինքումը
Մարդիք տընիր չին շինում,
Վուչ մշակնիր ին բանում
Միրզոնի մաշինում:

Թե վուր ղուրթ ըլի էստունք,
Վայի մե, էլ չի ըլի փոդրաթ,
Ինչո՞վ պիտի փուղ դադիս,
Տուն, տիղ պահիս ու քուլփաթ:

Ձիզ գեթաղվա, քաղկըցիք,
Էդ խոսքիրը միտը բերեք,

Քանի սաղ իք քեփ արեք,
Փուղ դադեք, անուն հանեք:

Արքայութենում ախպըրտիք,
Էնտեղ վունչինչ ձիզ չին տալ,
Վուչ Ստանիսլավ, վուչ Աննա,
Վուչ օսկեմեն մին մենդալ:

Արքայութենում, ախպըրտիք,
Փողրաթ չըկա, փուղ չըկա,
Ինչո՞վ պիտի լիանա
Փուղի կարոտ միր աչքը:

Հրիշտըկնիրը էնտեղ
[Աղքատ, տկլուր] ին դիփուն,
Ումի՞ց պիտի փուղ գըջլինք,
Վայ միր օրին, միր հոքուսն...

ՄԵՐ ՀԵՐՈՍԸ

Ցնծա՛, ցնծա՛, Հայաստան,
Ահա՛ դարձավ քո որդին,
Քո մեծ հուսո առարկան,
Եվ անձկալին քո սրտին:

Մայրաքաղաքից յուր հետ
Բերել է մեր պատանին
Նոր սիրտ, նոր միտ, գիտություն,
Լուսավորել հայրենին:

Մայրաքաղաքից, գիտե՞ս,
Այդ չէ՛ թեթև ինչ կատակ,
Ուր յուր վարքին գերագույն
Թողեց անմահ հիշատակ:

«Որբիկներու տանումը»
(Մեր մեջ մնա այդ զրույց),
Բարոյական յուր կյանքին՝
Ունի մի ճիշտ ապացույց...

Գուցե կանցնին շատ տարիք,
Դստերք Նեվյան պրոսպեքտի,
Թատրոնական դերուհիք,
Բաքոսուհիք՝ թույլ-լկտի:

Պանդոկապետ, վարսավիր,
Հարճ-աղախնյայք, սիրուհի՝
Կըհիշեն առատաձեռն
Որդին Հայոց աշխարհի...

Իսկ ճշմարիտն եթե
Պետք էր լինել խոստովան,
Թեև վատնեց նա յուր հոր
Մինչ հազար կարմիր թուման.

Բայց չէր իզուր այդ կորուստ,
Շահեց նա մեծ հատուցում՝
Ստուդենտի դիպլոմը
Ունե արդեն յուր ծոցում:

Թողյալ այդ, և ձև արտաքին
Ապացույց է բավական,
Թե չէ նա հասարակ մարդ,
Այլ խելացի գիտնական:

Տեսեք, արդյոք ո՞վ ունի
Մեր քաղաքում այդպես բան՝
Այնպես ֆրակ և բրյուկ,
Բայց հրա՛շք է շլյապան:

Ձեռնոցների բանգը
Չունե որոշ մի անուն,
Ծիածանի մեջ միայն
Կըգտնվի այնպես գույն:

Տե՛ս, նորա գանգուր մազեր
Դեմքին ինչ գեղ են բերում,
Ամբողջ անձը վարդի պես
Անուշ հոտով է բուրում:

Աչքը զինվորած է ակնոցով,
(Բայց չէ՛ զրկված նա լուսեն)
Այդ նշան է հատկապես,
Որ ուսյալ է նա արդեն:

Նա արհեստից չէ խոսում,
Դուք կարծում եք, չէ՞ գիտում,
Նա հերքում է բնավին
Ամեն հեղինակություն:

Ներկա դարուս գիտնականք
Համարում է խենթ-խելառ,
Մտածում է նոր գյուտով
Զարմացնել բոլոր աշխարհ:

Դեպի լուսինը ճանապարհ
Կամի հորդել օդային,
Թե զբաղմունք յուր բազում
Նորան միջոց կըտային:

Բայց ի՞նչ էր նա մտածում
Արդյոք խեղճ հայի համար,
Նորա սիրտը շարժո՞ւմ էր
Ազգի վիճակը թշվառ:

Նորա համար ազգություն
Չունի ինչ նշանակություն.
Կոսմոպոլիտ է սրտով,
Սիրում է ողջ մարդկություն (??):

Նա սիրում է կյանքի
Ճոխությունքը փառավոր,
Հոր դադած ոսկիներն
Են նորան նպաստավոր:

Լուսաճաճանչ բալերի
Նա հերոսն է գեղեցիկ,
Եվ աղջկերանց ցնորքը,
Նոցա երազը քաղցրիկ:

Նա է զարդը թատրոնի,
Եվ դերուհյաց բարեկամ,
Որոնց ընծայք թանկագին
Պարգևում էր շատ անգամ:

Նա է պաշտպան ֆեբոսի
Մուզիկական ակումբում,
Յուր բաժակը մի ռուբլով
Նա լիմոնատ է ըմպում:

Ազնվականաց կլուբում
Թղթախաղն է առաջին,
Հազարները նորա մոտ՝
Այդ գումար է խիստ չնչին:

Նա առյուծն է տարփավոր
Քնքուշ, գեղեցիկ սեռի,
Աստղկական հեշտությունք
Երբեք նրանից չեն հեռի:

Երբ նստում է նա կառքը
Սան-Սուսի գնա ճաշել, —
(Նա երդվել է խիստ վաղուց
Հետևակ ոտք չրմաշել):

Նա գնում է, յուր հետքից
Աղջկերանց խումբը սիրուն
Ըշտապում են, որպես հունդ
Զգում է սիրտը հավերուն:

Երեկոյան թողնում է
Կախարդական Սան-Սուսին,
Դեպ Մուշտայիդ տանում է,
Յուր գեղեցիկ սիրուհին:

Անցնում է աննըկատ
Կես-գիշերից երկու ժամ,
Վայելում է նա այնտեղ
Յուր ընթրիքը համադամ:

Լուսաբացին հազիվ թե
Հոգնած, դառնում է նա տուն:
Մինչ երկուքը ցերեկին
Վայելում է անուշ քուն:

Էլ ի՞նչ է գործում մեր հերոս,
Չունի՞ ուրիշ պարապմունք,
Յուր ճակատի քրտինքով
Ունի՞ արդյոք մի շահմունք:

Հը՛մ... ճակատի քրտինքը...
Այդ էր պակաս մեր ծույլին,
Նա յուր անձը չենթարկում
Ադամական անեծքին:

Յուր հոր նման բազարում
Կլանել փոշի և քրտինք,
Ուսումնական դիպլոմին
Համարեր մեծ նախատինք:

Եվ ազգային գործերը
Նորան չէին հետաքրքրում,
(Նա հայերեն չըգիտեր)
Նա ազգը չէր համակրում:

Նա ուներ յուր սրտումը
Միակ եթ նպատակ,
Թե երբ մահն յուր հորը
Կըտաներ մի օր հողի տակ:

Այնուհետև փառավոր
Նա կապրե, կյանք կըվարե,
Զի հոր դադած փողերու
Մսխելըն լավ սովոր է:

Ցնծա՛, ցնծա՛, Հայաստան,
Ահա կրթյալ քո որդին,
Թեև դեռ հին էշն է նա,
Բայց ներկված է յուր մորթին...

Ոչինչ նրանից մի հուսա,
Իմ նազելի Հայաստան,
Նա քո կյանքի դահիճն է,
Օտարացած, անպիտան...

ՄՈԴԱ

Էս ամսումը մեր քաղքում
Եկել է մի նոր մոդա,
Ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ սիրուն,
Հրաշք ասեմ, հավատա՛:

— Քո արևը, է՛յ Նինո, —
Ասաց Նորան մեր Լիզեն,
Էդպիսի սիրուն մոդա
Ջեր չէ եկած Փարիզեն:

Կեկելն ու Նատաշան,
Էս նոր մոդի նոր շորով,
Էրեկ շիկով հագնված,
Պտըտում էին փողոցով:

Բայց ես տխուր, ամոթից
Տանիցը դուրս չեմ գնում,
Զի իմ շորի տեսակը

Հիմա ո՛չ ով չէ հագնում:

Ա՛խ, մեռնում եմ նախանձից,
Երբ ուրիշն է հագնված,
Ես տընումն ընկած եմ,
Որպես մի խեղճ բանտարկված:

— Դարդ մի՛ արա, իմ քույրիկ,
Ասաց Նինոն մեր Լիզին,
Գնա մարդեդ դու փող բե՛ր,
Դիմենք մոդնի մագազին:

Ո՞ւմ կնկանիցն ես պակաս,
Որ մոդիցը ետ մնաս,
Գործն այլ է, երբ որ դու
Մսխելու փող չունենաս:

— Ա՛խ, անբախտ եմ ես, Նինո, —
Լիզեն տվեց պատասխան,
Թեև ունեմ ամուսին
Հարուստ, ծերուկ մի իշխան:

Գրո՛ղը տանե թո՛ղ նորան,
Գուցե ես էլ պրծընեմ,
Նա ինձ համար չէ առնում
Մոդնի շորեր, որ հագնեմ:

Ես էլ նրա ջիգրիցը
Մի ուրիշին կըսիրեմ,
Նա կառնե ինձի համար
Մոդնի շորեր, որ հագնիմ:

ՕՍԱՆ

Ինձ ասում են — Օսան,
Գոհ չեն մարդիք քո վարքից,
Թե դու քարշ ես ընկնում
Ջեհիլ տղորց շըլինքից:

Էդպես մ’արա, — ասում են,
Կոտրած աման կըդառնաս,
Ո՛չ ուրիշը կառնե քեզ,
Ո՛չ ձեր տանում պետք կըգաս:

Հողե՛մ գլուխն ասողին,

Միթե չե՞ս գիտում, աստված
Ջեհիլ տղեն ու աղջիկ
Միմյանց համար է ստեղծած:

Ման եմ գալիս բուլվարով,
«Օսան, — ասում է դեդեն,
Ամո՛թ է, ինչո՞ւ էդքան
Մտիկ կըտաս դես ու դեն:

Ուղիղ գնա քու ճամփան,
Դեմքդ ցույց տուր ամոթխած,
Որ նայողի աչքերուն
Պարկեշտ աղջիկ ձևանաս:

Ա՛խ, ի՞նչ անի Օսանը,
Նա ո՞ր ջուրն ընկընի,
Որ իր սրտի դարդերեն
Շուտով մեռնի, պրծնի...

Երբ որ ջեհիլ մի տղա
Անց է կենում իմ մոտեն,
Ո՞նց համբերի Օսանը,
Մտիկ չըտա դես ու դեն:

Չէ՛, քանի ես կյանք ունեմ,
Ջեհիլ տղա կըսիրեմ,
Առանց քեփի ո՞նց ապրեմ,
Ո՞նց իմ դարդին համբերեմ:

Թո՛ղ ողջ լինի իմ հերը,
Նըրա փողի սընդուկը,
Կը կատարե իմ սրտի
Խիստ ցանկալի փափագը.

Նա կըտա իմ օժիտը՝
Մանեթներ հազար քսան,
Ու կըգնե ինձ համար
Սրտիս ուզած լավ փեսան:

Աչքը տրաքի՛ Սոփոյին,
Նըրա հերը վաղ չունի,
Թող մոր տանումը պառավի,
Առանց սիրուն փեսայի:

Չէ՛, քանի ես կյանք ունեմ,

Ջեհիլ տղա կըսիրեմ,
Առանց քեփի ո՞նց ապրեմ,
Ո՞նց իմ դարդին համբերեմ:

Ջեհիլ տղա կըսիրե,
Ու քեֆ կանե միշտ Օսան,
Գլուխ քարին, որ մարդիք
Յու վերա վատ կըխոսան..

ԱՈԻՏՈ-ԴԱ-ՖԵ

Վաղ առավոտ զարթեցա
Ես անհանգիստ իմ քնից,
Աղախինս մոտ եկավ
Տխուր դեմքով հայտնեց:

— Աղա, էսօր մենք չունենք
Ո՛չ վառելու ածխաքար,
Դուք կըմնաք առանց թեյ,
Ո՛չ չայ ունենք, ո՛չ շաքար:

Այդ բոթաբեր խաբարը
Ինձ պատճառեց վրդովմունք,
Եվ խռոված իմ սրտի
Սաստիկ եղավ խիստ հուզմունք:

Քանզի այսօր իմ գրպան
Փողից փարատ էր իսպառ,
Եվ չունեի ոչ մի բան
Ուղարկելու ես բազար:

Փայփայելով աղախնուս
Փափկիկ գիսակ շիկահեր,
Եվ գրկեցի նորա մեջք,
Համբուրեցի զույգ թշեր:

—Առանց թեյի, ա՛խ, Մաշա,
Չէ կարելի, գնա՛ բազար,
Դու ծանոթներ շատ ունես,
Մի տեղից առ անվճար:

— Վատ է, աղա, ժամանակ,
Հիմա անփող ի՞նչ կըտան,
Այժմ առանց գրավի
Հազիվ մարդի կըհավատան:

Ի՞նչ էր մնացել, էլ ի՞նչ կար,
Որ Մաշան բազար տանի,
Գրավված էին բոլորը՝
Ժամացույց, թանկ մատանին:

— Ահա՛, Մաշա, իմ կայքից
Մնացորդն այդ վերջին,
Տա՛ր փողոցում վաճառե,
Թեև գին տան խիստ չնչին:

Այս ասելով տվեցի
Երգերիս ժողովածուն,
Գնաց շաքար գնելու
Իմ պայմանյալ հարսնացուն:

Բայց մեծ եղավ իմ զարմանք,
Երբ որ գիրքը թնքի տակ,
Առանց ոչինչ գնելու՝
Մաշան ետ դարձավ դատարկ:

— Ողջ բազարը ման եկա,
Ասաց նա ինձ վշտագին,
Գիրքդ ամենին ցույց տվի,
Մարդ չը տրվավ գրոշ գին:

Տարա մանդրուք ծախողին,
Ասաց՝ «Ինձ չէ պետքական,
Այդ մրոտած թղթերից
Ինձ մոտ այժմ խիստ շատ կան:

Թե թերթերը լինեին
Մի փոքր լայն և երկար,
Լոբի, փըլփիլ փաթթելու
Մեզի համար պետք կըգար:

— Ասացի, հին դավթար չէ,
Այլ տաղեր են՝ կոկ, քնքուշ,
Հայոց անբախտ պոետի
Դոքա երգեր են անուշ:

Թըթվեցրուց ռեխը,
Պատասխանեց դուքանչին՝
«Այժմ այդպիսի գրքերը
Անարգ լաթեր են չնչին»:

Կատաղության արյունը
Բորբոքվեցավ իմ գլխում,
Ես մոռացա իմ թեյը,
Նախաճաշիկ, կերուխում:

— Ուղիղ է ասել, Մաշա,
Այն խելացի դուքանչին,
Այժմ մեր գրվածքներն
Այո՛, լաթեր են չնչին...

Քան թե շինել նրանց ջնջոց,
Լավ է վառել մեզ կրակ,
Գիտեմ, փայտդ էլ պրծել է,
Թող տաքանա գեթ սենյակ: —

Ես ձգեցի անխնա
Բոցերումը կրակին,
Իմ անքուն գիշերների
Ճգնաց ծնունդն անգին:

Եվ ես, նստած սառնասիրտ,
Նայում էի խարույկին,
Որտեղ ոսկի կայծերով
Խորովվում էր իմ հոգին...

Խե՛ղճ, առտո-դա-ֆե.
Ահա՛ մեր գործը, հայե՛ր,
Օղակ-օղակ ծուխի հետ,
Վերցնդում են դեպի այեր:

Երկար մարած մոխիրին
Նայում էի տխրագին,
Հանկարծ ինձ թեյ ներս բերավ
Սիրուն Մաշան իմ անգին:

— Ուսկի՞ց բերար դու թեյը, —
Հարց արի ես, — Մաշա ջան,
Ասաց՝ — «Գրավ դրեցի
Իմ ոսկի ապարանջան՝:

ՓՈՂ

Երբ շիշով ազնիվ գինին
Դրած է սեղանիս վերան,

Երբ արծաթով պարարտ է
Իմ փողերի պահապան,

Եվ թանկագին ցիգարը
Իմ բերնումը ծխում է,
Հրաբորբոք իմ սրտեն
Քանի՛ մտքեր բըխում է...

Իմ գրիչը թունդ վազում է
Ոգևորված այդ պահուն,
Եվ երգերս տողվում են
Կոկ, հանգավոր և սահուն:

Բայց երբ որ գինի չըկա,
Երբ դատարկ է իմ գրպան,
Մտածում եմ, մտածում,
Մտքիս չէ գալիս մի բան:

Աշխատում եմ ակամա
Անհամ հանգեր կարկատել,
Իսկ սատանան նույն ժամուն
Սովոր է միշտ ընդհատել:

Դուռը ճռաց, դուքանչին
Պարտքի հաշիվ ներս բերավ,
Բոլոր մտքերս ցնդեցան,
Սրտիս աշխույժը կորավ:

Տեսանում եմ, իմ մուզան
Նա էլ հեռացավ իսկույն,
Երբ որ տեսավ նա ռեխը
Խանութպանին այն տժգույն:

Հա՛, վախեցավ խղճալին,
Չիցե ուզեմ իրմեն պարտք,
Ա՛խ, և քեզ մոտ, է՛յ թշվառ,
Կորուսե՞լ եմ ես իմ վարկ...

Ո՞ՒՐ Է ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքին, քո սիրելի հայրենիքին
եղիր դու կից.
Այնտեղ են քո զորության քուն արմատները
ՇԻԼԼԵՐ

Ա

Կարծես կայենի անեծքով նախկին
Թափառում եմ ես քաղաքից քաղաք,
Եվ անգութ բախտն ուժգին և ուժգին
Հալածում է ինձ ընդ ծով և ցամաք:

Իսկ այժմ դեպ ո՞ւր: — Գնամ Պարսկաստան,
Օդն է քաղցրաշունչ, երկինքն պարզ և ջինջ,
Ուր անուշահոտ շնչե բուրաստան,
Եվ մշտագարուն ծաղկում է նարինջ:

Ուր մարմարիոն շատրվանի մոտ,
Սիրուն հարեմը չոքած առաջին,
Արբված ղեյլանի ծխովն ամբարհոտ,
Անուշ բերկրությամբ ապրում է հաջին:

Ո՜չ, չարժե բնակվել այնպիսի երկրում,
Ուր չկա օրենք, — չըկա և աստված,
Ուր բռնակալը միշտ թուր է կրում
Անմեղ զոհերի արյունով ներկված:

Քրիստոնյա հային խո՜րթ է Պարսկաստան,
Ուր ձայն զանգակի չէ հնչում ականջիս,
Որպես հնդկական պարիա-պինժ, խոտան,
Պարսիկը զզվանոք ինձ կոչե նաջիս...

Բ

Ուրեմն լավ է դիմել Տաճկաստան,
Դեպի տերությունն հզոր սուլթանի,
Կիսալուսնի տակ խնդրել ապաստան,
Անդ ապրել կարե ամեն կենդանի:

Հարուստ է երկիրն և դաշտ վարդենի
Ոռոգեն ջրով Տիգրիս և Եփրատ,
Անդ մշտականաչ ծաղկե ձիթենի,
Հացն և գինին՝ էժան են, առատ:

Անդ ճոխ հարեմում օսմանցի խաթուն
Սեր է գրգռում ամեն մի րոպե,
Իսկ լերկ — սևամորթ ներքինին արթուն
Հսկե հարեմին, որպես քերովբե:

Եվ զվարճասեր օսմանի որդին

Յուր օձապտույտ ծխե նարգիլեն,
Սերիցը սառած հեշտասեր սրտին
Բորբոք է տալիս՝ միշտ դառն դահվեն:

Ո՛չ, Տաճկաստանում չունեմ ես դադար,
Ուր հալածասեր ոգին Ղորանի
Ճնշում է հայի իրավունքն արդար,
Կոչում է գյովուր, խնզբր յաբանի...

Գ

Դեպի Գաղիա ուրեմն դիմել,
Հեղափոխության բնիկ օրորան,
Արթուն կյանքի ճոխ վարդեր քաղել,
Ազատ իրավանց է անդ կայարան:

Անդ չըկա հարեմ, չըկա ներքինիք,
Այնտեղ է ջեննաթ, ժպտում են հուրիք,
Անդ մուզիկայի ձայնը չէ լռում,
Եվ անուշահոտ փրփրում են գինիք:

Ուր կախարդական Պարիզ գեղասեր
Համաշխարհական մոդայի օջախ,
Գեղեցիկ սեռին վառում է միշտ սեր,
Պչրանք պաճուճանք դարբնելով հաճախ:

Դեպի Գաղիա, Պարի՛զ սիրելիք,
Դեպ մուզաների նորոգ հայրենիք,
Սիրել գեղարվեստ, պաշտել կնանիք,
Մանուկ զորության քաղել թարմ դափնիք:

Իսկ այդ բերկրությունը չե՛ն, չե՛ն ինձ համար,
Նոքա հրճվանք չեն բերում սրտիս,
Երբ կաթոլիկը կոչե ինձ հիմար,
Հերետիկ բառը կնքե ճակատիս...

Դ

Դեպի Գերմանիա էլ լավ է դիմել,
Արհեստ, գիտության է անդ կենտրոն,
Պրուսակների հետ գարեջուր քամել,
Անաղոտ լուսով փայլե անդ կրոն:

Անդ ակոսի մեջ երկրին արգավանդ
Հատու արորի խոփն է փայլում,

Ազատ մշակի երգեն ջերմեռանդ
Միշտ անցավորի հոգին է զմայլում:

Եվ հազարավոր գործատներում
Զորավոր շոգին դարձնում է չարխեր,
Օտար աշխարհից արծաթ է բերում
Արհեստով մշակած երկրին բերքեր:

Ուր պատվի պաշտպան՝ ահեղ հրացան,
Ազգասիրական վառվեց կրակով,
Աստղերից վերև, վերև բարձրացան
Դրոշի փառքն ազգին քաջագով:

Բայց ի՞նչ շատ ինձի փառքն օտարի,
Եվ գերմանացու միշտ թթված ռեխ,
Երբ նա ինձ չի տալ, անվարձ կամ ձրի՝
Յուր հոտած կալբաս՝ չորացած տրեխ:

Ե

Ռուսաստանում լավ է ինձ համար,
Հնարավոր է հանգիստ ապրուստի,
Կյանքն այնտեղ անհոգ է, հարմար,
Իսկ պետությունն՝ յուր փառքով հարուստ:

Այնտեղ միմյանց հետ գռեհիկ-մուժիկ
Ապրում են որպես սանահեր — սանիկ,
Եվ լիքը բաժակ թթված կըվասով
Ուրախ է մշակ և շատ երջանիկ:

Այնտեղ ոխ, նախանձ՝ ծանոթ չէ մարդկանց,
Հանկարծ հայհոյանք, ապտակ և կռիվ,
Իսկ երբ որ մեկը դեմ արեց վոդկան,
Հաշտվում են կրկին սիրո համբուրիվ:

Եվ ջինջկապուտակ աչերը ռուսալկի
Թովում են մարդի և սիրտ և հոգի,
Ա՛խ, որպես նոքա հնազանդվում են,
Երբ գրկում եմ նոցա մեջք սիրամարգի:

Զ

Գնամ Հայաստան՝ իմ բնիկ հայրենիք,
Մեր քաջ նախահարց արյունով սրբված,
Ուր ստեղծագործության առաջին կնիք

Արարիչ ձեռքով դրոշմեց աստված:

Անդ առավոտյան երգը սոխակին
Հիշեցնում է միշտ կորուսյալ Եդեմ,
Եվ տղամարդի կախարդե հոգին
Սևորակ աչերն կուսին լուսադեմ:

Անդ փլատակաց մեջ ավեր դրախտին
Դեռ անմահների հնչվում է քնար,
Կանաչ, ծաղկազարդ վառվում է գետին,
Վաղորդյան ցողը սփռում է գոհար:

Հարո՛ւստ բնություն, ջուրը՝ մեղրահամ:
Օդը՝ քաղցրաշունչ, մարդիքը՝ բարի,
Կանայքը՝ սիրուն, իսկ ժողովուրդը՝
Ժիր և գործունյա է ամբողջ տարի...

Տիրում է խավար և աղքատություն,
Մշակը թշվառ գործում է, գործում,
Աղան խլում է դառն աշխատանքը,
Նորա արյունը քամում է, ծծում...

Սիրո՛ւն Հայաստան, ուր Ադամ, Եվան,
Ադինյան Եդեմ՝ ստեղծեց Եհովան,
Ուսկից բխելով Փիսովն և Գեհուն
Ջրեր սառնորակ գլորեն անհուն:

Ուր ծաղիկների միջով Արաքսին,
Կուրի հետ գրկված, հոսեն միասին,
Ուր բարձրագագաթ հսկե Արարատ
Կանաչ դաշտերին՝ պտղատու, առատ:

Ուր չըկա դորշակ, չըկա բորեաս,
Բյուր ծաղիկներով փայլում է Արագած,
Եվ ֆշֆշալով գժված Հրազդան՝
Ջրում է անհուն արտեր, անդաստան:

Այնտեղ ծերունի Նոյը՝ մեր նախկին՝
Իջուց յուր տապան Մասիսի գլխին,
Հիմնեց Ակոռին, բաշխեց մեզ գինի,
Որ հայաստանցին միշտ ուրախ լինի:

Այնտեղ Հայկ դյուցազն՝ հսկան մեր արի,
Սատակեց գոռոզ Բելին վիթխարի,
Եվ արյունովն որդվույն տիտանի

Կնքեց դաբալան սուրբ Հայաստանի:

Ը

Այնտեղ քաջն Արամ մեխեց Նյուքարին՝
Հպարտ մետացուն՝ պարսպի քարին,
Անդ Արշակունին՝ միշտ հանապազօր՝
Ջարդեր լեգեոն Պոմպեին հզոր:

Անդ սկզբաննե սերմունք սրբազան
Ավետարանի բուսնիլ սկսան,
Երբ արքայն Աբգար ինքն առաջին
Ի ճշմարտություն հավատաց փրկչին:

Եվ ջարդեց Տրդատ՝ հզոր թագավոր,
Մեր աստվածների արձաններ շատվոր,
Եվ Արմավիրի սոսիներիցը
Մեր դիցուհիքը գնացին աքսոր:

Էլ ծաղիկներով հայոց աղջիկներ
Զրզարդարեցին Անահտա տաճար,
Եվ աստղկական պարերգ և տոներ,
Ուրախ ցնծությունք լռեցին իսպառ:

Թողին Վահունիք Վահագնի պաշտոն,
Մեր քաջ դյուցազի ողջակեզ և տոն,
Եվ հերոսական մրցություններից
Յուր խաղերի մեջ՝ զրկվեցավ Տարոն:

Թ

Մայրի՛կ Հայաստան, սիրո՛ւն հայրենիք,
Ընդունի՛ր ծոցումդ տարագիր որդիդ,
Բա՛ց արա նորան քո հին վերքերը,
Պատմի՛ր թաքուցած դարդերը սրտիդ:

Բայց ի՛նչ խաժամուժ է աստ ժողովուրդ,
Ինձ բնակվելու չրկա մի անկյուն,
Թուրք և պարսիկ, ղզլբաշ և քուրդ՝
Տիրած են երկրի ամեն մի կանգուն:

Զլանում է այստեղ հայի բաժակին
Յուր ազնիվ բերքը գինևետ Գողթան,
Եվ օրհասական նորա վիճակին
Ապառնում է մահ աղայի շղթան:

ԹԻՖԼԻՍԵՑՈՒ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վա՜տ ադաթներ ներս բերավ
Միր քաղկումը Եվրոպեն,
Քեփն ու սափեն դիփ կորավ,
Փընացավ էսղանցոբեն...

Ո՞վ էր տեհի մե մանեթ
Կախեթու գինու թունգին,
Մե աբասով էր առաջ, —
Էն էլ շատ-շատ խիստ թանկ գին:

Դե՜ արի դուն, իմ պարուն,
Կուշտ փուրով խմե գինի,
Ո՞վ կու դիմնա էդ մխսին,
Շուտով կուդր չի նընգնի:

Ու էնպեսդ էլ է լոքոն,
Յոցխալ, փիչխուլն ու զութխին,
Արնի գնով ծախում ին,
Ի՞նչ ձեռք կու տա միր խալխին:

Թե առնում իս, — էդքան փուղ
Դուն ի՞նչ սրտով պիտի տաս,
Թե չիս առնում, — ուփրո վատ,
Ջուկիցը պաս կու մնաս:

Միտս է գալիս վաղորոք,
Ճիպինի — տղա Պոխրոն,
Ես, Ջանդակինց Թաթուխը,
Ի՞նչ մարդ էր էն օխերոն...

Մեկն էլ պաճո-Սոսիկոն,
Թուշինի-տղա Ճանճուրը,
Ու Կոճլո-Արտեմը՝
Մախոխի տղի պուճուրը:

Դիփ էլ ազնիվ քաղկըցիք,
Օջախի վուրթիք պատվավուր,
Չըկեր միր մեջ Շան-ճրաք,
Կոռ կամ Ջոկ մոթրեվուլ:

Օրթաճալումը դիփունանքս
Նստիլ ինք Քռի ափին,

Ո՞վ կանա պատմել հիմա
Զողն ու սափեն միր քեփին...

Սազանդարնիր ունեինք՝
Ամենքը՝ լավ-լավ տղա,
Նրանց համն էս ըժուկում
Ո՞վ է տըվի, իմ աղա:

Քեչալ-Դառչոն էր մեկը,
Ամենքը լավ կըճանաչեն,
Ո՞վ կարա ածել հիմա
Նրա թառն ու քամանչեն:

Ու էնպեսդ էլ Գիգոլին,
Երբ կոծեր իր դայիրան,
Սաղ աշխարքն արմըցած
Մտիկ կոներ իր վրան:

Ա՜խ, քոռ-Գաբոյի զուռնի
Գիտե՞ս ձենն ո՛ւր էր էրթում,
Սոլոլակում կը լսեիր,
Երբ նա կ’ոծեր Թելեթում:

Խոսրոենց Բաղդանոսի
Ո՞վ կոծե դիպըլիպիտոն,
Հեստի ղոչախ, մասխարա,
Օյինբազ էր էն կինտոն...

Չոփուրի — տղա Ծատուրի
Ճիանուրն ու սազը...
Հիմա ի՞նչ աշըղ կո’սե
Էն թուրքի մուխամբազը:

Մագրամ հիմա վուչ մեկը
Չեն մնացել էս աշխրքում...
Աստված օղորմի նրանց
Ամենքի էլ լիս հոքուն:

Նստիլ ինք Քոի ափին,
Լոբու տղա Յագուլը
Ղամբ է գցում, նավեմեն
Դո՛ւրս է տալիս փիչխուլը...

Ափին կրակ ունինք վառած,
Վրեն պղինձն է դրած,

Մե կողմից չալաղաջին
Շամփրով անում խորոված:

Մեկ կողմից էլ պղնձի մեջ
Ածում ենք սաղ ցոցխալը,
Դուն տե՛ս հիմա մեր տղորց
Քեփի, զովղի դիփ հալը...

Տկճուրներով լավ գինին
Շարած ունինք չուրս կողմով,
Ամպա՛ր ասա՛, ի՞նչ գինի, —
Լավ ռանգով, լավ համով:

Հազար-փեշեն ձեռից ձեռ
Պտուտ է գալիս պլպլուն,
Խմե՛ ու խմե՛ գինին,
Վուրքան կուզես, իմ պարուն:

Ծափ ինք տալիս, դե՛ ծա՛փ տուր,
Հարա՛յ հրո՛ց ղիժինա՛ ...
Ո՞վ չի ուզի էդպես քեֆ,
Գինի խմե, գըժանա:

Սազանդարնիրը զոռ ին տալի
Իրանց սազին, չոնգուրին,
Թուշինի տղեն խաղում է
Հեստի ղոչաղ լեկուրին:

Ի՞նչ գլուխդ ցավացնիմ,
Կարճն ասիմ, իմ պարուն,
Էհենց մինք սաղ մե շաբաթ
Քեփ արինք Օրթաճալում:

Էնդու էդնեն քաղկումը
Միր մխսը հեսաբ արինք,
Մե մինալթուն կես շայի
Ամեն մեկս փըսոն տվինք:

Հիմա ո՞ւր է էն վուխտը,
Գնա՛ց... մեկ էլ յիդ չի գա,
Վուր էլ էնպեսդ քեփ անենք,
Ո՞ւր է էն գինին... էն ձուկը...

Վադ ադաթնիր ներս բերավ
Միր քաղկումը Եվրոպին,

Քեփն ու սափեն դիփ կորավ,
Փըչացավ էսղանցոբեն...

ՇՌԱՅԼՈՒԹՅՈՒՆ
(Թիֆլիսեցու գանգատներ)
Ա

Վա՛տ ըժուկի ռաստ էկա
Ծեր հասակումս, իմ պարուն,
Կոսես Նեռը ծնվիլ է,
Մոտ է աշխարք քանդվելուն:

Էդ ի՞նչ բանիր չին տեհնում
Իմ մե ղավոր աչքերը,
Մեղքն ու մահը միր մեչում
Էրևնում ին աշքարա:

Վուչ ամոթ կա, վուչ նամուս,
Մարդն իր քեփովն է գնում,
Սատանի նընկրութենից
Նա իսկի չի՛ հեռանում:

Էդպես կի չէր վաօրոք
Քրիստոնի ադաթը,
Աստծու ահն իր սրտում
Ուներ կնիկն ու մարթը:

Ուշունցնիր էինք տալի,
Ծեծում էինք մենք կնկան,
Նրա լիզուն միշտ մունջ էր,
Նա չէր խոսում վուչ մի բան:

Հիմի կնանիքը մարդու
Գլխին դրիլ ին նոխտան,
Իշի նման ետևից
Վուրթենը կուզին, քաշ կու տան:

Աղջկերքը խո՛ ուրիշ բան
Իսկի փիքր չին անում,
Ջհել տղերանց սերեմեն
Նրանց խիլքն է միշտ գնում:

Էլ չին տնտղում տղամարդի
Էլած-չելածն ու հալը,
Իրենց քեփին մխսում են

Խեղճի դոլվաթն ու մալը:

Չին փիքր անում, թե մարթը
Ի՛նչ օրով է փուղ դադում,
Նա զրկում է իր կյանքը
Վուչ խմում է, վուչ ուտում:

Գազումը կարճ է նա չափում,
Քարումը՝ թեթև քշռում,
Կեխտուտ ստերն ու օրթում
Բոլ է մխսում բազարում:

Սատանեքին ծախում է
Նա իր հոգին փողոցում,
Ինչկլի քանի մե շայի
Ջլիվ իր ձեռքն է գցում:

Մագրամ, նրա էդ ամեն
Արնի, քրտինքի գի՛նը՝
Մաղազինում, խաղերում՝
Դիփ մխսում է իր կինը:

Մեկ էլ տեհար, ասում ին
Ծղալոբը Կուտըր նընգավ,
Էլ չին ասում՝ կնիկը
Էն խեղճի տունը քանդավ:

Բ

Էդ անիծված չար մոդան
Էլ չէ տևում մե տարի,
Գելաքնուրի ծախողն
Էնքան չունի մուշտարի:

Մեկը, տեհնում իս, պոչը
Թրև է տալի ղայրաթով,
Կոսես, քուչեքի ավլելը
Վիր է կալի փոդրաթով:

Մեկելն՝ օխչարի նման՝
Էդնեն կապիլ է դըմակ,
Կոսես, դարբնի մինծ փուքսով
Փրչած ըլին իր քամակ:

Մեկը՝ ձկնորսի դամբի պես՝

Լեն բացիչ է խաբարդոն,
Ճամփա տվեք, անցկենա
Միր քաղկի աղջիկ-պարոն:

Մեկն էլ՝ յուփկեքն էնքան
Հագած ունի իր վրան,
Կոսես, դաշտումը սալդթի
Դու տեհնում իս մինծ վրան:

Վո՞ւր մեկն ասիմ, ախպրտիք,
Անուննիրն էլ չիմ գիտում,
Սատանան ինքն է խաբար,
Ինչ վուր նրանք ին հաքնում...

Ա՜խ, էն հավի կուդիով
Գլխին դրած շլապկեն,
Թարաքամի մոթլի պես
Մուֆթն հաքիլ ին ձեռքեն,

Ա՜խ, էն դամբի պես գործած
Էրեսների էն քուղը,
Սապոկների ճռճռոցը
Քանդում են իմ ըղուղը...

Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,
Մեջքը կոտրած կատվի պես
Երբ չափում են բուլվարը:

Չիմ կանացի, հա՜խ աստծու,
Բարկութինն իմ սանձել,
Սկսում եմ վա՜յ տալով՝
Միր կնանիքն անիծել...

Երբ որ սիրտս էրվում է,
Ասում եմ, թե էդ թավուր
Ադաթնիրը խիստ վատ ին,
Ինձ շինում են մեղավուր:

Տեհար, մեկը՝ շլապով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կտորն աչքերին՝
Լուս նընկավ քո առաջին:

Պետրբուքում միթում

Ավարտիլ է իր ուսում,
Փիլիսոփա է, կոսես,
Խուրը տրկեմեն է խոսում:

Մե ձեռը նա փրքվելով
Ունի շալվարի ջիբում,
Կոտրատվելով՝ մյուս ձեռով
Յուղած մազերն է քոքում:

Աստուծ վուչ գիտի նրա
Գլուխն ու արևը,
Շառրշուռ է, մե խոսքով,
Էնդուր տված բարևը:

Չիս հասկանում՝ ի՞նչ լեզվով
Էդ մոթրեվուլ սարսաղը՝
Կոտրատվելով, փքվելով՝
Սկսում է իր խաղը:

Ծերուկ, կոսե, դու լուռ կա՞ց,
Անցավ արդեն ձեր դարը,
Մարդկությունն որոշեց
Կյանքի պատշաճն, արդարը:

Այժմ ազատ իրավունք
Վայելում է ամեն կին,
Չէ նա այլևս ամուսնի
Գերի, ստրուկը նախկին:

Նա ընկեր է հավասար
Այժմ յուր տղամարդին,
Նա ազատ է կատարել
Բաղձանքներն յուր սրտին:

Նորա շքեղ պաճուճանք,
Նորա գեղն և զարդը՝
Մեր բոլոր վայելչության՝
Է հոտավետ թարմ վարդը:

Նորա թըշի մի համրույր,
Քաղցր ժպիտը դեմքին,
Են մեր բոլոր վշտերի
Եվ հոգսերի միակ գին:

Երբ տղամարդը նորա

Գրկում է մեջքը սիրուն,
Մոռանում է սրտամաշ
Դառնությունքը ցավերուն...

Ա՛խ, արժե նոցա սիրուն
Աշխարհ և երկինք զոհել,
Նորանց քնքուշ վարդի պես
Միշտ փայփայել ու պահել:

Ա՛խ, կանայք, կանայք, կանայք,
Հայոց սիրո՛ւն աղջիկներ,
Ձեզ մատա՛ղ իմ կյանքը,
Ձե՛զ, դրախտի հրեշտակներ:

Դուք եք սրտիս առարկան,
Դուք եք մտքիս ցնորքը,
Ես սիրում եմ ձեր բոլոր
Ճոխ, պճնազարդ շնորհքը:

Ես սիրում եմ օդային
Ձեր հագուստը թափանցիկ,
Ես պաշտող եմ մոդային,
Տարազների գեղեցիկ:

Ես սիրում եմ խշխշուն
Ձեր յուբկա և կրինոլին,
Տարի լալե... լա լալե...
Տարի լալե... տայ լալին...

Գ

Մեկ էլ տեհնիմ էն գժի
Իծաննիրը մոտ էլան,
Նա երգում էր, պարում էր
Ծռեց էշն իր փալան...

Տրտինկն էր տալիս, թռչկոտում,
Զոնչում էր ու զոնչում.
Ռսնակն էլ մե կողմից
Կապում էր խազի պոչում:

Պարտական եմ, թե մե խոսք
Ես կարացի հասկանալ,
Ո՞վ կարող է էն տուտուց
Փրանտի խոսքերն իմանալ:

Մագրամ էդքանը լուս ընկա,
Որ նա ասիլ էր ուզում —
Կնկտիքն այլ տեղ ազատ ին,
Ինչո՞ւ գերվին Թիֆլիսում:

Ես էլ նրա խոսքերին
Էդպես տրվի պատասխան,
Բալքամ, կուլի պրծացնիմ
Էն սարսաղեն իմ յախան:

— Լավ, էս իմ աչքիս վրան,
Խոսքդ շաքրով, իմ պարուն,
Մեզի համար պետքը չեն
Աղաթնիրն էս գարուն:

Թող կնկտիքն ըլին
Մեզնից մե բանով ավել,
Բայց մեզ գերի շինելու
Իրավունքն ո՞վ է տվել:

Թե վուր միզ հետ նրնկիր ին,
Ինչպես կոսես՝ հավասար,
Մեր գործերում թո՛ղ ըլին
Մարդի հետը բարեբար:

Մենք բարեբար փայ անենք
Մեր սև օրվա դարդերը,
Ու բարեբար մենք քաղենք
Ուրախության վարդերը:

Թո՛ղ նա նստի իր տանը,
Երեխերքին շոր կարե,
Նրանց լվացքը լվանա,
Բանելու միշտ գործ ճարե:

Կուխնից ըլի մուղայիթ,
Բան չըգողնան բըջերքը,
Շաքրի ղութին փակ պահե,
Վուր չուտին երեխերքը:

Իմ գուլբեքը կարկտնե,
Շուտ-շուտ նրանց չըփոխեմ,
Մի քանիսն էլ թո՛ղ գործի,
Իրա համա ես ծախեմ:

Առավոտը զարթնելիս,
Երբ որ գնում իմ ես ժամ,
Ինձ միշտ տաք ջուր պատրաստե,
Վուր երեսս լվանամ:

Հետո գթնե, ինձի տա
Սանդրն իմ մորուքին,
Վուր չար Կոլեն գողնալով՝
Ջգրեցնում է իմ հոգին:

Երբ որ էհենց կնիկը
Կուլի ղոչաղ տանտիկին,
Փուղի ղադրը կիմանա,
Տունը կու պահե կարգին,

Ինչո՞ւ պետք է նրանից
Անենք իզուր մենք գանգատ,
Էն վախտ մարդն էլ կունենա
Իր խերն ու բարաքաթ:

Ե

Պետրբուրգի փրանտը
Էլ չը տրվեց ժամանակ,
Նա կտրեց իմ խոսքը
Իր խաղերովն ռսնակ՝

Фу! Старичок какой!
Հետո կցեց — Господа,
Вы отсталый народ,
Ваша песня спета...

Տիկնանց գանգուր գիսակներ,
Նոցա ժպիտն անուշիկ,
Այդ հրա՛շք է, боже мой!
Նոցա հոգուտը՝ просто шик!

Ես հեռացա էն գըժեն,
Թող չըտվի վուր խոսե,
Վախում էի, չըլի թե
Տտրի լալեն սկսե...

ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԵՏՈՆ

Տե՛ս, տե՛ս, եղբայր, ահա հեռվից
Սևին տվեց մի հրեշ,
Որ ծանրաքայլ, դանդաղ կերպով
Շարժվում է որպես գոմեշ:

Նա մոտ եկավ: Նշմարում եմ
Մարդու ձև և կերպարանք:
Բայց ինչո՞ւ է սիրտս զգում
Այսքան զզվանք, զարհուրանք:
Հա, տեսնում եմ՝ կարճլիկ շլինք,
Նա հաստ է որպես գերան,
Նորա վերա կա մեծ գլուխ,
Ուռած թշեր, լայն բերան:

Եվ երեսի խորշոմներից
Պրսպղում են նեղ ծակեր,
Դոքա անշուշտ պետք է լինեն
Կարճատես նորա աչքեր:

Հնդկահավի գլխի նման
Դեմքի գույնն է լրջացած,
Իսկ արծրվի յուր մեծ քիթը
Կեռ կտուցով կընայի ցած:

Ժպիտ և կյանք դեմքի վերա
Միշտ չեն եղել... չրկային...
Իսկ վայրենի բացատրությունքն
Չունեն ոչինչ մարդկային:

Բայց ինչո՞ւ է նորա փորը
Այնքան լայնացել սաստիկ,
Կարծես է նա փուքսով փրչած
Մի ահագին գոմշի տիկ:

Մի՛ զարմացիր, ազնիվ եղբայր,
Ի՛նչ բան չարեց նախանձը,
Երբեմն վատնեց, երբեմն դիզեց
Աշխարհի կայքն ու գանձը:

Երբեմն արնով նա ողողեց
Պատերազմի դաշտերը,
Երբեմն սիրով, խաղաղության
Ցանեց անուշ վարդերը:

Իսկ նախանձը նորա փորի

Չուներ չար ինչ նպատակ,
Ընդհակառակն, նա բարի էր,
Իրավացի և շիտակ:

Երբ նա տեսավ շիրախանումը
Թիֆլիսու մեծ ըռումբին,
Հարյուրներով յուր մեջ կառներ
Կախեթու գինու թունգին,

Շարժվեցավ յուր ցանկությունն,
(Այդ ձգտումն էր բնական(
Մի՞թե տանել փորն չէր կարող
Այնքան գինի պատվական:

Այնուհետև այդ բարեբախտ
Գոմշի տիկն ահագին
Լիակատար տաներ պաշտոն
Հայ Բաքոսի հեղուկին:

Բայց ինչո՞ւ է գիրցած այնքան,
Հաստացրել է յուր անձը,
Չիցե խոզի՞ օրինակը
Շարժեց նորա նախանձը:

Այդ չէ պատճառ նորա այդքան
Գիրանալուն, իմ բարեկամ,
Այստեղ արդեն մի գաղտնիք կա,
Ունի խորհուրդ բնական. —

Գիտե՞ս ինչն է մեռցնում մարդի
Մարմինն, ոսկրն ու հոգին,
Չէ՞ արդյոք նա մեր սրտամաշ
Ցավն ու վիշտը դառնագին:

Բայց մեր պարոն քաղաքացին
Ձերձ է կյանքի վշտերին,
Կարծես մեռած անզգա սիրտ
Ժառանգեց նա յուր տերեն:

Որտեղ պետք էր լինել խոնարհ,
Նա թեքվում է, սողում է,
Եվ գետնաքարշ որդնի նման
Ցեխի միջով լողում է:

Յուր ցածության և կեղտերի

Ծանրությունը չէ զգում,
Ազնվության, ազատ կյանքի
Բաղձանք չունի յուր հոգում:

Որտեղ պետք էր լինել հպարտ,
Բռնակալ է և գազան,
Մանավանդ, երբ տկար լիներ
Անգթության առարկան:

Անմեղ զոհի լացն ու սուգը,
Նորա հառաչանք տրտում
Մեռած խղճին, խավար հոգուն,
Սառած սրտին՝ չեն ազդում:

Նա գիտության և արհեստի
Թշնամի է դժնդակ,
Զի ուսման լույսը մերկացուց
Նորա պատկերն այլանդակ:

Բայց յուր քեֆին և յուր փորին
Նա երբեք չէ խնայում
Նորա աչքն այլոց վերա
Միայն կույր է միշտ նայում:

Ապա ի՞նչը նրան կըմաշե,
Որ չըգիրնա խոզի նման,
Երբ նորա սիրտ, հոգին և միտք՝
Է սառն, մթին գերեզման:

Երբ մարդկային ո՛չ մի զգացմունք
Չըկա բնավ յուր միջին,
Ազգ, հայրենիք, սեր և նախանձ՝
Նորա աչքումը՝ զրո չնչին:

Դե՛, հաստացի՛ր, քաղաքացի՛,
Թող քո կաշին լայնանա,
Մարմնիդ միջումն անպետք մթերք
Օր ըստ օրե ավելնա:

Քո հաստ լեշը, դարտակ գլուխդ
Թեև ազգիդ պետք չեղան,
Գոնյա՛, ճըճիքը գերեզմանումդ
Կունենան միշտ ճոխ սեղան:

ԽՐԱՏ

Մեռանո՛ւմ եմ ես, սիրելի որդյակ,
Ա՛խ, շատ օրերի եմ արդեն հիվանդ,
Եվ քեզ, աչքի լույս, իմ վերջին կտակ՝
Հայրական խրատը թողնում եմ ավանդ:

Թե կամենում ես լինել բախտավոր,
Հետևի՛ր ծեր հորդ դու օրինակին,
Եվ այս որպեից եղի՛ր ուխտավոր,
Կատարել իմ խրատ յուր ժամանակին:

Ուղիղ, անմոլոր քո հայրենական՝
Ընտրե քեզ համար՝ կյանքի ճանապար,
Չըլինես հպարտ, երբեք, սիրական,
Ծըռե՛ գլուխդ, եղի՛ր միշտ խոնար:

Հեռո՛ւ պահիր քեզ աղքատ մարդերից,
Քսվի՛ր բոլորտիքը դու միշտ հարստին,
Եվ միշտ խնայե քո բարեկամներից
Դու մեկ սև փողիդ իզուր կորստին:

Խելացի մեղվեն ա՛ռ դու օրինակ,
Դիմել դեպ ծաղկունք և կազմել խորիսխ,
Այդ մեղրն է արծաթ, լսիր, իմ որդյակ,
Մարդկային կյանքի հաստատուն խարիսխ:

Թե որ շահերիդ կըբերե օգուտ,
Ներելի է միշտ ասել թեթև սուտ,
Կեղծել փոքր ինչ, մրոտել պատիվ,
Դոցանով երբեք չես վնասի հոգուդ:

Թե լինես ներքո դու ծառայության,
Խոնարհի՛ր սրտով քո մեծավորին,
(Բայց զանց մի՛ արա յուղալի ընծան...
Մի խնայե եղբոր, քո մերձավորին:)

Թե որ դու լինես մի օր սովդաքար,
Թո՛ղ կարճ լինի քո արշին և կանգուն,
Թո՛ղ թեթև լինի քո կշիռքի քար,
Թո՛ղ փոքր լինի սոմարիդ մեծություն:

Իսկ երբ պարապվիլ պետք էր կապալով,
Օրինակ, զորքի տալ գինի, արաղ,
Երբեմն լավ է խառնելը ջրով...
Ի՛նչ կըհասկանա սալդաթը սարսաղ:

Թե վնասվեցար դու առևտրում,
Էլ մի՛ վճարե քո պարտատերին,
(Այդպիսի դեպքում չեն մեղադրում...(
Պահի՛ր ունեցածդ ապրուստ սև օրին:

Ուսման, կրթության, այդպիսի դարտակ
Բաներին չընտաս քո սիրտը, որդյակ,
Հեռու պահի՛ր քեզ ազգասերներից,
Չընբացես նոցա առջև քո քսակ:

Հարուստ աղջկա հետ դու կապե պսակ,
Փույթ չէ թե լինե տգեղ կամ ախտավոր,
Կընլեցնի ոսկով քո դարտակ քսակ,
Կընլինես երջանիկ, գոհ և բախտավոր:

Դու կատարե այդ խրատները անգին,
Դոցանով շատերն երջանիկ եղան.
Հետևի՛ր ծեր հորդ դու օրինակին,
Կունենաս առատ, լի հացով սեղան:

ԴԱՅԱԿ

Մեր մեջ, հայրենի ծածկի տակ,
Դեռ չէ ընկել և ոչ մի
Մարդկային թարմ կյանքի՝
Պտղաբեր սերմը հստակ:
ՆԵԿՐԱՍՈՎ

Ժամն էր կեսօրվա: Շնչավորքն արդեն
Կընհանգստանային արևի տոթեն:
Խրճիթի դռանը ճապուկ ուռենին
Թել-թել ոստերով սփռում էր հովանին:

Այնտեղ նստած էր պառավ դայակը,
Եվ օրորում էր քնած զավակը,
Մերթ հորանջելով և մերթ նիրհելով
Եղանակում էր երգը՝ երգելով. —

Քնի՛, քնի՛, սիրուն թռչնակ,
Քնի՛ անուշ դու քնով,
Օրորոցդ հանդարտ կընշարժեմ
Ես մայրական ջերմ սիրով:

Քնի՛, քնի՛ անմեղ հրեշտակ,

Քնի՛ անուշ դու քնով,
Քեզ օ՛ր կասեմ, քաղցրի՛կ օ՛ ր... օ՛ր...
Քեզ օ՛ր կերգեմ մեղմ ձայնով:

Աչքդ փակի՛, իմ աղավնյակ,
Այդ աչերդ վառվռուն,
Հանգիստ քունը վերադ կըփռե
Յուր թևիկները նախշուն:

Աչքդ փակի՛, իմ սիրական,
Քնի՛, որ շուտ մեծանաս,
Քո վատաբախտ ծնողաց համար
Խելոք տղա դու դառնաս:

Երբ մեծացար, իմ նազելի,
Մանուկ եղար դու քնքուշ,
Տերտերի մոտ կուղարկենք քեզ,
Սերտել տաղեր, երգ անուշ:

Քեզ կըսորվեցնե տեր հայրիկը՝
Սաղմոս, Ժամագիրք, Նարեկ,
Փառաբանել աստծո անուն,
Ամբողջ գիշեր ու ցերեկ:

Երբ որ ծաղկեն սև մորուքով
Այդ լուսափայլ քո թշեր,
Անապատը կուղարկենք քեզ,
Ճգնիլ անդ օր ու գիշեր:

Քնի՛, քնի՛, սիրուն որդյակ,
Քո մոր սրտին մխիթար,
Քնի՛ և շուտ մեծացի՛ր դու,
Ինձ քո ձեռքով հողը տար:

Այդ հրեշտակի սուրբ լեզվովդ
Աղոթք կարդա ինձ վերա,
Տերը շուտով կըլսե քեզ
Իմ մեղքերու ճարն արա՛...

Երբ որ դու մտնելու լինես
Կյանքի մեջ աշխարհային,
Պատվե՛ ծերի դու ալիքը
Լսե՛ նորա խրատին:

Պահպանի՛ր դու մեր պապերի

Օրենքն ու ավանդություն,
Գլուխդ ծրռե քեզնից մեծին,
Չունենաս հպարտություն:

Դոցանով դու կրվայելես
Օրեր հանգիստ և պայծառ,
Քնի՛, քնի՛, սիրուն թռչնակ,
Քո մոր սրտին մխիթար:

Եվ դայակը օրորելով
Քաղցրիկ երգը երգում էր,
Փոքրիկ տղան աչերը փակած
Անուշ քնով նիրհում էր:

Նոցա մոտեն դանդաղ քայլով
Անցավ հոգնած ուղևոր,
Երիտասարդ էր հասակով,
Դեմքն՝ ազնիվ, փառավոր:

Բայց պառավի երգի ձայնը
Նորա սիրտը գրավեց,
Նա ուռենու շուքի տակին
Հովանելու ըշտապեց:

—Թո՛ղ ինձ, դայակ, ես օրորեմ,
Դու հոգնել ես, դու քնի՛:
—Բայց դու տըղին նանիկ ասա՛,
Որ քնիցը չըզարթնի:

— Նանիկ կասեմ, դու հանգիստ կա՛ց,
Բայց ոչ քո երգի նման:
Պառավը նիրհեց: Ուղևորը
Սկսեց օրորել տղան:

— Մի՛ հետևիր դու փտած, հնացած՝
Հիմար պապերիդ ծուռ օրինակին,
Մի՛ հարմարիր քո մանուկ ուժերը,
Դու եռանդամոլ նոցա ճաշակին:

Զի նոցա անշարժ մտքի ծնունդը
Խավար կյանքի է արտադրություն,
Ծաղկի՛ր նոր կյանքով, նոր հոգով, սրտով,
Տո՛ւր նորանց նոր ձև և նոր զորություն:

Մի՛ խեղդիր քո մեջ ձգտողությունքը

Մարդկային ազատ հառաջադիմության,
Տո՛ւր նորանց աճել, ազատ զարգանալ,
Պահանջմունքի հետ ազատ բնության:

Առանց երկյուղի, համարձակ, վստահ,
Սովորե իրական կյանքի պետքերին,
Գիտություն, արհեստ կոչվում են նոքա,
Մի՛ զոհիր նորանց տխմար կրքերին:

Եվ հերոսական դառն ատելությամբ
Նախապաշարմանց դու փշրե՛ շղթան,
Հեռո՛ւ վաղեմի սուտ ցնորքներեն,
Պաշտպան կանգնի՛ր միշտ ճշմարտության:

Կըլինես, այո՛, մի նոր երևույթ
Քո անբախտացած, խեղճ հայրենիքին,
Կըտաս մի նոր զարկ, զա՛րկ դեպի հառաչ,
Թույլ — անշարժական նորա կյանքին:

—Եվ այն ժամանակ... — Ուղևորն յուր
Չավարտեց խոսքը: Հանկարծ երեխան
Ծըվաց ճչալով, զարթեցավ քնեն:
Դայակը կրկին օրորեց նորան,
Կրկին հին երգը սկսավ երգել,
Եվ յուր գոգի մեջ փայփայել, գրկել:

ՊԱՆԴՈՐԱՅԻ ՏՈՒՓԸ

Գայթակղոսի աստիճան
Ստանում է նենգ Հասուն,
Չարանախանձ դևերի
Խառնվում է նա դասուն:

Երբ Հռովմեն դեպ Պոլիս
Կամեր հորդել ճանապարհ,
Կրկին անգամ նա գնաց
Պագնել պապի գարշապար:

Անսխալական հովիվը
Տվեց նրան փոքրիկ տուփ,
Նա դրոշմված էր կնիքով,
Ուներ վերան ամուր խուփ:

— Ա՛ռ այս տուփը, — նա ասաց, —
Դա կըլինի քեզ պիտանի,

Դորանով դու կորսաս
Որդիքը Հայաստանի:

Տա՛ր քեզի հետ այդ տուփը
Այդպես կնքված, այդպես փակ,
Դորա մեջն է ամփոփված
Մեր նպատակը, մեր փափագ:

Կախարդական այդ տուփը,
Ունի յուր մեջ մեծ խորհուրդ,
Կը հիմարացնե հայոց
Թեթևամիտ ժողովուրդ:

Ուր որ բացես դու դորան,
Կըցնորվին հայոց որդիք,
Նոքա կըմոռնան յուրյանց
Ազգ և կրոն, հայրենիք:

Նոքա կըմոռնան յուրյանց
Բնական լեզուն մայրենի,
Եվ ազգային ողջ ծեսեր,
Ավանգդությունք հայրենի:

Եվ լատինական ոգվով
Կսկսեն խոսել և դատել,
Լատինական ծեսերով՝
Մեր աստվածները պաշտել:

Լատին կըլինեն ազգությամբ
Հայերն այնուհետև,
Մեր կրոնը կըպնդվի
Նոցա մեջ երկարատև:

Ուրախ — ուրախ ընդունեց
Պապից տուփը նենգ Հասուն,
Դիմեց դեպի Բյուզանդիոն
Նեռի որդին մոլասուն:

Ազգավաճառ այդ Վասակ
Բացեց այնտեղ տուփը զոց,
Սորա մեջեն դուրս վազեց
Վառուն կրակ, ծուխ և բոց:

Եղբայրն եղբորից բաժանվեց,
Հայրն ուրացավ յուր որդին,

Կինը թողեց ամուսին,
Տիրեց ախտը ժանդախտին:

Հայկա հարազատ որդիք
Սկսան միմյանց ատել,
Խմել միմյանց արյունը,
Եվ միմյանց միսն ուտել:

Վատիկանի գագաթեն՝
Պապը խիստ ուրախ սրտով
Այդ արյունոտ հանդեսին
Աչք էր ածում անվրդով:

ՎԱՍԱԿ

Միհրներսեհը... խոստացավ նորան տալ ավելի մեծ իշխանություն. քան ինչքան ուներ ինքը...: Նա ասում էր՝ իբր թե Վասակը կարող է հասնել մինչև թագավորական աստիճանի, եթե մի հնար գտնի հայոց ուխտի միաբանությունը քանդելու և թագավորի հրամանը նրանց կատարել տալու:
ԵՂԻՇԵ

Ասաց պարսիկն՝ ահա՛ քեզ, Վասակ,
Ստացի՛ր մեզնից լի ոսկով քսակ,
Եթե ուրանաս քո ազգությունը,
Կստանաս այլն՝ փառք, պատիվ, պսակ:

Վասակը նորան տվեց պատասխան՝
— Հոժար եմ կամքիդ, վեհափառ իշխան,
Ես ուրանում եմ իմ ազգությունը,
Այդ մեծ շնորհաց թո՛ղ լինի փոխան:

Ասաց պարսիկն՝ արի դու, պարոն,
Քո հայրենական ուրացիր կրոն,
Այլև աշխատիր, քո համազգիքը
Մեր օրենքների կատարեն պաշտոն:

— Այո՛, կաշխատեմ, իմ տեր, անդադար
Եվ այդ հրամանն ածել ի կատար,
Թե ձեր վեհությունն ինձ Հայաստանի
Թագն ու գահը փոխարեն կըտար:

— Կստանաս բոլորը, վկա է երկինք,
Միայն աշխատիր, որ քո ազգայինք
Մեր լեզվով խոսեն, մեր գրով գրեն,
Թողնեն հայրավանդ դպրություն, օրենք:

— Այդ ինձ կատարել է խիստ դյուրին,
Թեև չափազանց գործ է դժվարին,
Բայց ես կընջնջեմ, միամիտ կացեք,
Ողջ սրբությունքը համառ հայերին:

— Մենք ճանաչել ենք քեզ այր գործունյա,
Մեր նպատակին մտերիմ պաշտոնյա,
Եվ քո փառք, պատիվ՝ կավելանան կրկին,
Վերջին իմ հրաման կատարե, գոնյա՛ :

Ցանիր ազգիդ մեջ խռովության սերմեր,
Բաժա — բաժանությունք՝ ընդ ամեն կողմեր,
Մատնի՛ր դու մեզ քո երկիրը հայրենի,
Տարածիր այնտեղ իշխանությունը մեր:

Եվ այդ հրամանին հաճեցավ Վասակ,
Առեց նա յուր վարձ՝ լի ոսկով քսակ,
Վազեց դիվաբար դեպ սուրբ Հայաստան՝
Յուր հետ մոգերի ամբողջ հրոսակ:

Հեռ, խռովություն սերմեց ընդհանուր,
Ձգեց բաժանմունք, հարուց հուր և սուր,
Եվ եդեմատիպ՝ խաղաղ Հայաստան
Ավերեց, շինեց անապատ տխուր...

ՍԵՐ

Փափկիկ կուսին շիկահեր
Գունատվեցան վարդ թշեր,
Նա հալվո՛ւմ էր, մաշվո՛ւմ էր,
Նա քուն չուներ ողջ գիշեր:

Նորա դեմքը չէր ժպտում,
Նա տխուր էր և տրտում,
Կարծես սիրո բոցերը
Բորբոքվում էին սրտում:

Դադարեցավ այն անուշ
Երգի ձայնը միշտ քնքուշ,
Խաղն ու պարը թվում էր
Նորա աչքին ծակող փուշ:

Մի օր խիստ վաղ-առավոտ
Մական եկավ նորա մոտ,
Ընկերուհու տեսությանը

Նա շատ օրով էր կարոտ:

Զարհուրելով այն աղջիկ
Տեսավ ընկերը գեղեցիկ,
Բայց թառամած և տխուր
Էր նոքա դեմք քնքշիկ:

— Ինչո՞ւ այդպես, էլ ի՞նչ կա,
Մաշվում ես դու, Անիչկա,
Ինչո՞ւ այդպես դու լուռ ես,
Քո երեսին գույն չրկա:

Ասա՛, ի՞նչ է քո դարդը,
Չըլի՞ սիրո կախարդը՝
Տվեց քեզի հոտ քաշել
Ձեռքի դյութական վարդը...

Ասա՛, ասա՛, սիրական,
Ինչ է սրտիդ առարկան, —
Կարեկցաբար հարց արեց
Նորանից սիրուն Մական:

Քաղցր ժպտելով Անիչկա՝
(Այնպես քաղցր էլ ի՞նչ կա...)
Ասաց յուր ընկերուհուն՝
— Սիրահարված եմ, Մակա...

Ուրախացավ օրիորդ,
Երբ գաղտնիքին եղավ հաղորդ,
Եվ գրկելով նրան կոչեց՝
— Սիրահարված ես, ղո՞րդ:

— Ուղիղ է, քո արևը...
Ասա՛, խնդրեմ, ո՞ւմ վերա,
Ասա՛, քո հոգուն մատաղ,
Ասա՛, ասա՛, ո՞վ է նա:

— Չէ՞ կարելի, Մակա ջան,
Բացվիլ մինչ այդ աստիճան,
Ես ինքս էլ չրգիտեմ
Սիրույս սկիզբն ու վախճան...

Չըկարացավ խեղճ Մական
Համբերությունը սանձել,
Սկսեց նոր հարցերով

Ընկերուհուն թախանձել.

— Դու բա՛ց արա, իմ ջանիկ,
Փակած սրտիդ խոր կնիք.
Ինչո՞ւ ես քեզ համարձակ
Ասում եմ միշտ գաղտնիք:

— Ինչպե՞ս ասեմ, Մակա ջան,
Նա չէ սիրուն սիրեկան.
Կրծիծաղես ինձ վերա:
Պատասխանեց Անիչկան:

— Մի՛ ամաչի, պարզն ասա՛,
Թե սիրել եմ մի փեսա.
Մի՞թե փեսա ընտրելը
Աղջկա համա միշտ պա՞ս ա:

Անիչկան եղավ խոստովան,
Մի ծերուկի էր հավան,
Նա հարուստ էր, չին ուներ,
Ուներ գյուղեր և ավան:

Թուլացավ ծիծաղելուց
Երբ նա լսեց այդ զրույց,
Երգիծական խոսքերով
Մական նորան դարձրուց՝

— Լա՛վ է, լա՛վ է, Անիչկա,
Թո՛ղ լույս լինի քո աչքը,
Ես նախանձվում եմ բախտիդ,
Դու սիրել ես... հնար չըկա...

Իսկ Անիչկան սառնությամբ,
Այդ սուր կատակի փոխան,
Յուր անկեղծ ընկերուհուն՝
Այդպես տվեց պատասխան՝

— Մինը սիրում է մանիշակ,
Մյուսը՝ վարդը անուշակ,
Բայց ես փուշն եմ սիրում,
Այդպես է իմ կոշտ ճաշակ...

Բայց Մական, ընդունելով
Ավելի ծանր կերպարան,
Ցավակցական խոսքերով

Խրատում էր նա նորան.

— Այդ ցնորք է խեղճ աղջիկ,
Կը փոշմանես, իմ ջանիկ,
Դու այն փտած ծերուկով
Չես լինի գոհ, երջանիկ:

Այդ ի՞նչ խելք է, ի՞նչ ճաշակ,
Մեռելի հետ ի՞նչ ախորժակ
Կապել կյանքդ դեռահաս,
Քամել դարդի դառը բաժակ:

Այդ պսակ չէ, այդ բա՛նտ է,
Չէ՞ որ նա միշտ հիվանդ է,
Էսօր, էգուց՝ ո՞վ գիտե,
Նա յուր հոգին կավանդե:

Բերնումը չունի ատամ,
Լուծված են՝ ձեռք, ոտք անդամ...
Թե որ նա շուտ կըմեռնի,
Բոլորն աստծուն փառք կըտան:

Ի՞նչ է քեզի հրապուրում,
Զոհվելուդ ես համբերում,
Չէ՞ այն հրեշ կմախքեն
Մահվան հոտ է միշտ բուրում:

Ափսոս չէ՞ սիրուն մեխակ
Փնջել փուշի հետը խակ,
Ընտրե քեզ ջահիլ տղա,
Դու վարդ լինես, նա՝ սոխակ:

Ուշադրությամբ լսում էր
Այդ խոսքերն Անիչկան,
Նա ժպտելով ընկերին
Ասաց՝ Մակա, սիրական:

— Ճշմարիտ է քո խրատ,
Այո՛ քուրիկ հարազատ,
Լավ է սիրել ջեհիլին,
Վարել կյանք՝ թարմ, ազատ:

Բայց ես ունեմ նպատակ...
(Խոր գաղտնիք կա նորա տակ),
Գիտեմ, խիստ դժվար բան է

Կյանքի հետ խաղալ կատակ:

Պսակվում եմ ես նորա
Միայն փողերու վերա,
Գիտեմ — սիրել չեմ կարող
Այլանդակված այն ծերը:

Շա՛տ եմ սիրում ես, Մակա,
Նորա ոսկու քսակը,
Այն ինձ համար բաց կանե
Ամուսնական պսակը...

Շա՛տ եմ սիրում, Մակա ջան,
Նորա օրդեն, աստիճան,
Իշխանուհի կոչվելուն՝
Զո՛հ լինելն է միշտ արժան:

Նորա փողով, իմ քույրիկ,
Կըլինեմ գո՛հ, երջանիկ,
Մի՛ նախատիր ինձ, Մակա,
Արժե՛ սիրել այդ ծերիկ...

Արժե՛ լինել սիրահար,
Կրել թավիշ և գոհար,
Եվ ձեռքումը միշտ բռնել
Ճոխ, թանկագին հովահար:

Այդ խորհրդից, Մակա ջան,
Ես չեմ լինի փոշիման,
Ցանկալի է բազմաթիվ
Աղախնի տալ հրաման:

Ունենալ՝ տան կարգուսարք,
Սիրուն ծառայք, շքեղ կառք,
Եվ շռայլաբար վայելել՝
Քաղցրիկ կյանք և ճոխ փառք...

Դիմել կրուժոկ, թատրոն,
Ուրախության կենտրոն,
Ամեն կողմից քեզ նայեն
Սիրուն տղերք և պարոն...

Լինել թագուհի Թիֆլիսին,
Դիմել մոդնի մագազին,
Ամեն օր մի նոր շիկ տալ

Նոր մոդայով Փարիզին...

Դե՜, ինձ ասա՜, ի՞նչն է վատ,
Բալ-մասկարադ, տանցովատ,
Ով որ դոքա չէ՜ սիրում
Վայրենի է, անհավատ:

Նորա խոսքը կտրելով
Մական ասաց՝ — Անիչկա,
Աշխարհումս առանց փող
Իրավ, վայելչություն չրկա:

Բայց քեզ պետք է ամուսին,
Լա՜վ մտածիր այդ մասին,
Ջեհիլ, առողջ մի տղա,
Սեր վայելեք միասին...

Պատասխանեց Անիչկան՝
— Ազնիվ քույր իմ սիրական,
Միթե դու չե՞ս իմանում
Գաղտնիքն աղջկան...

Միթե դու չե՞ս իմանում
Աշխարհի չարն ու բարին,
Միթե դու չե՞ս ճաշակել
Պտուղն արգելված ծառին...

Ես կունենամ, իմ հրեշտակ,
Իմ ժառանգն և զավակ,
Որպես անբախտ մի խեղճ մայր,
Չեմ մնա ազգիս նշավակ:

Եվ իմ այրը ծերուկ
Կառնե որդիս յուր գրկուկ,
Եվ ալիքին ճնշելով,
Կասե՝ «Սիրելիդ իմ ձագուկ...

Կըգա մի օր բարի հյուր՝
Մահ...: Կըպահանջե ավանդ յուր,
Եվ իմ այրիկն անգուման
Շնորհ կըտանե խոր գերեզման:

Անթվելի հարստություն,
Կահ-կարասիք և մեծ տուն,
Ինձ և իմ զավակներին՝

Կը մնան ժառանգություն:

Հասկացա՞ր դու, իմ հրեշտակ,
Սրտիս խորին նպատակ.
Քանի՛ մեծ արտոնություն
Տալիս է ինձ այդ պսակ...

— Հասկացա... — ասաց Մական,
Հիմար սիրույդ առարկան,
Որին, անխիղճ, զոհում ես
Մի այդպիսի զոհ պատվական...

ՆՎԵՐ

Ձե՛զ, հայոց օրիորդնե՛ր,
Նվիրեմ այս փոքրիկ փունջ,
Թեև չէ նա հոտավետ,
Բայց մի՛ արեք դուք տրտունջ:

Մեր աշխարհի թառամած,
Գունատ, ցամաք վարդերեն
Ես հյուսեցի իմ փունջը,
Զուրկ թարմ ծաղկանց զարդերեն:

Քանի անգութ վիճակը
Ավերեց մեր բուրաստան,
Էլ հոտավետ, գույնզգույն
Ծաղկունք չունի Հայաստան...

ՄՈԳՊԵՏ

Սև մոգպետին դիմեցի
Հետս առա ես իմ «Փունջ»,
Եղանակը շատ վատ էր,
Հով էր փչում դառնաշունչ:

Ես ունեի նպատակ...
Ուղիղն ասած, խիստ սխալ,
Սատանայից ի՞նչ բարիք
Կարելի է մեզ հուսալ:

Պատահում է, երբեմն
Մարդ այնպես է մեղանչում,
Խոստովանվելն անգամ
Կարմրում է, ամաչում:

Ի՞նչ օգուտ... Ո՞վ յուր կյանքում
Չէ գործել հիմարություն,
Մոլորությանց ենթակա
Է տկար մեր բնություն:

Ըշտապ-ըշտապ վազելով՝
Հասա նորա կացարան,
Սաստիկ ցրտից սառչելով՝
Էլ չէր բացվում իմ բերան:

Ես քաշեցի զանգակը,
Հայտնվեցավ մի ծառա,
Իմ սխալման առաջին
Արդեն լազաթն առա...

Կերբերոսից ավելի
Դժնետեսիլ այդ հիմար՝
Ինձ ստիպեց քառորդ ժամ
Դրսում սպասել չարաչար:

— Պարո՛ն, — ասացի նորան,
Դուք հայտնեցեք իմ մասին,
Թե ներկայանալ կամիմ
Ես մոգպետի սպասին:

— Որպե՞ս է ձեր ազգ, անուն, —
Հարցուց ինձանից ծառան,
Պաշտոնական յուր ոճով.
Ես հայտնեցի շուտ նորան:

Նա չքացավ: Ես երկար,
Երկար սպասում էի դրսում,
Անիծելով իմ խելքը,
Զի շատ սաստիկ էի մրսում:

Վերջապես հրավիրեցին
Ինձ մոգպետի կացարան:
Շուտ՝ անուն հոր՝ ասեցի,
Տեսնելով նորա կերպարան:

Բավականին զարդարուն
Էր դահլիճն այն շքեղ,
Նորա կահն ու կարասին
Էր թանկագին բարեգեղ:

Բազկաթոռի մի վերա
Նստած էր քուրմն այն սուրբ,
Մետաքսեղեն հագուստը
Էր փառավոր և շատ նուրբ:

Աստղի նման փայլում էր
Ալմաստի մեծ մատանին,
Ականակուռ մանյակը
Լույս էր բաշխում խավարին:

Երբ որ տեսա ես նորան
Վերարկուն լայնաքղանց,
Կարմիր մախմուռ հողաթափ,
Քնքշությունքը չափազանց՝

Կարծում էի, թե արդեն
Դա չէ՞ սևլիկ մի մոգպետ,
Այլ ես շնորհ ունեի
Մի պճնասեր կնոջ հետ:

Ինձ այդ իսկ սխալմունքեն
Ազատեց նորա մորուք,
Մտածելով, թե այդ ազգ
Զարդարվում է որպես կուռք:

Հակամայից ստիպված,
Ես մերձեցա դեպ հառաջ,
(Էլ ի՞նչ մ մեղքը գաղեմ(
Համբուրեցի նորա աջ...

Խոսակցությունը սկզբից
Էր տաղտկալի, կցկտուր,
Զի անհամ, անգույն խոսքերին՝
Միշտ անհամն է տրիտուր:

Գանգատվում էր մոգպետը
Մերթ հիմար ժողովրդից,
Թե նոքա չըգիտեն հարգել
Փառքն ու պատիվն անմահ դից:

Մերթ գանգատվում էր տարվա
Անպիտան եղանակեն,
Զի բանտարկյալի նման
Դուրս չէր գալիս սենյակեն:

Մերթ անիծեր խոհարար,
Ճաշը վատ էր պատրաստում,
Մինչ զզվանոք ամեն օր
Նա խմում էր և ուտում:

Նկատեցի, վերջ չունեն
Այդ գանգատները տրտում,
Զի բացատրում է լեզուն
Ինչ որ ամբարված է սրտում:

Հակամայից ես նորա
Ընդհատեցի այդ տրտունջ,
«Ահա՜, հայրիկ, ասացի,
Ձեզ բերել եմ ես իմ «Փունջ»:

Իսկ մոգպետն էլ չեղավ
Իմ ասածին ուշադիր,
Խիստ ծանր հորանջելով՝
Ծուռը մեկնեց իմ խնդիր՝

— Է՜հ, այդ անիծված փունջն
Ինձ խիստ շա՜տ է վնասում,
Ես նորանից մի օգուտ
Ինձ բնավ չեմ սպասում:

Լավ է ըմպել կոնյակ,
Ռոմ, խերես և շամպան,
Դոքա փոքր ի շատե
Օրինավոր են մի սան:

— Ա՜խ, ես ձեզ սխալեցրիմ,
Ասացի, — հայր պատվական,
«Փունջ՝ և պունշ են դոքա
Որոշ բառեր զանազան:

«Փունջ» ասածս նվաստիս
Է հորինած երգարան:
Այս ասելով՝ ես գիրքը
Տվեցի ձեռքը նորան:

Առեց, թերթեց նա գիրքը,
Նայեց թվին և ամսին,
Որպես թուրքը զզվանքով
Նայում է խոզի մսին:

Նա ետ տվեց ինձ գիրքը, —
«Կարդացեք, ասաց, մի բան.»
(Երբ որ արջն է քո տեսուչ,
Վա՛յ քո հալին, պարտիզպան...(

Մինչ մոգպետը քնքշաբար
Հարդարում էր յուր մորուք,
Սկսեցի ես կարդալ
«Դժոխքի կապալառուք»:

Ուշադրությամբ հայրիկը
Լսում էր իմ ընթերցում,
Որ բորբոքեց նորա մեջ
Սրտի սաստիկ զայրացում:

Գրգռվեցան, վառվեցան
Նորա ողջ չար կրքերը,
Քանզի տեսավ այն ճիվաղ
Հայելումն յուր պատկերը:

Նա ընդհատեց ընթերցում,
Գոռաց ամպի որոտով,
Ես կատաղի նրա դեմքը
Զննում էի անվրդով:

— Այդ ինչե՞ր ես դու գրել,
Լի՛րբ, անամոթ, անիծված,
Ես քեզի ըմպել կըտամ
Այդ թունավոր հորինված:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, դուրս կորի՛,
Էլ չըտեսնեմ քո երես,
Դու կստանաս քո վարձը,
Դու իմ ուժը լսե՞լ ես...

Ես քեզ այնտեղ կորցնեմ,
Լույս չըտեսնես էլ բնավ,
Ուր չէ ծաղկում նշենին,
Բույն չէ դրել ագռավ...

— Այո՛, գիտեմ այդ բոլոր,
Ասացի ես սառնաբար,
Միայն եկա ես քեզ մոտ,
Լավ զննել քո տիպար:

Չի լրացնե պոետը
Քո կյանքի նկարագիր,
Նորան փույթ չէ լինելը
Օտար աշխարհ տարեգիր...

ԽՐԱՏ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Քո ազատախոս տաղերն անաչառ
Կըզրկեն հացից քե՛զ, խե՛ղճ բանաստեղծ,
Կըլինես աղքատ, կըմնաս թշվառ,
Քանի քո քնար հնչում է անկեղծ:

Կեղծավորաբար դու երգե գովեստ՝
Թե կամիս դու հաց՝ անգութ հարստին,
Շողոքորթության լա՛վ ուսիր արհեստ,
Եվ մի՛ ափսոսիր պատվիդ կորստին:

Կղերի առջևը դու խնկե կնդրուկ,
Ապրուստ շահելու թե ունես փափագ,
Որպես գետնաքարշ գերի, կամ ստրուկ,
Կուռքին մամոնի եղի՛ր երկրպագ:

Հայնժամ կըգտնես դու քեզ մեկենաս,
Որ աշխատությանցդ կըհարգե տաղանդ,
Մինչև գերեզման դու խեղճ կըմնաս,
Թե ճշմարտություն երգես ջերմեռանդ:

ՊՈԵՏ

Թո՛ղ կույր ամբոխը ծաղրե քեզ, պոետ,
Թե երազամոլ քո հոգվո ցնորք՝
Դարուս իրական պահանջմանցը հետ՝
Էլ չէ համաձայն, զո՛ւր է քո շնորք:

Եվ խաժամուժի պետք չէ քեզ գովեստ,
Թո՛ղ ասեն՝ մարդու կյանքը գործնական
Պահանջում է հաց, ապրուստ և արհեստ,
Եվ ոչ սնոտիք բանաստեղծական:

Դու, մուզաների որդի սիրելի,
Անվեհեր սրտով հնչեցո՛ւր քնար,
Երգ քո ոգելից, վերին ազդմամբ լի
Մինչև հավիտյան կըսիրե աշխար:

Թո՛ղ արհեստասեր չոր փիլիսոփան
Քարոզե կյանքի մարմնավոր հոդված,
Բայց դու, հոգեկան խորհրդոց թարգման,
Քո սուրբ շրթունքով խոսում է աստված:

Երգե՛ դու պոետ, երգե՛ երգ անուշ,
Հնչեցուր քնարիդ լարերն ուժգին,
Եվ ոգևորված քո տաղեր քնքուշ
Գուցե զարթեցնեն հայի քնած հոգին...

ՎԵՐՋԻՆ ԵՐԳ

Զո՛ւր թղթեր մի՛ մրոտե,
Հայոց անբախտ հեղինակ,
Թե չըկամիս քաղցած մեռնել,
Կյանք վարե այլ եղանակ:

Զո՛ւր ես մաշում աչքիդ լույս,
Զո՛ւր է, դու ինձ հավատա՛,
Այդ սրբազան քո ճգանց
Ո՞վ մի սև փող գին կըտա:

Թո՛ղ տուր, եղբայր, քեզ ի՞նչ փույթ,
Հոգսը հոգալ ողջ ազգին,
Նորա օգտին զոհ բերել
Կյանքիդ րոպեքն անգին:

Թող նա գնա՛ յուր ճամփով,
Էլ ի՞նչ պետք է քո խրատ,
Թե այդ ուղին տանում է
Դեպի կորստյան խորխորատ:

Թո՛ղ կղերի փառասեր,
Արծաթամոլ, սև խուժան՝
Ազգի ծուծը ծըծելով՝
Կյանք վայելեն անարժան:

Թո՛ղ տուր մարդիք անպիտան,
Անգործ, տգետ, անվաստակ՝
Հանգիստ ապրուստ որսալու՝
Պատսպարվին փիլոնի տակ:

Թո՛ղ սրբապիղծ յուր ձեռքով
Ոսկերիչ իսրայելացին
Մեր վանքերի անոթները

Թո՛ղ զոհե յուր հալոցին:

Թո՛ղ տուր պրոտ, կաթոլիկ
Մեր մեջ հերձված սերմ-անեն,
Ազգի կապերը խզելով,
Եղբայր եղբորից բաժանեն:

Եվ մեր անհոգ հովիվներ՝
Գայլի գառը գողնալուն
Միշտ սառնասիրտ մտիկ տան:

Թո՛ղ ամբոխը կուրորեն
Խավարի մեջ խարխափե,
Մոլորցնողի կեղծ լույսը
Նորան շլացնե ու խաբե:

Թո՛ղ թավալվի ցեխի մեջ
Նա մինչև վերջն յուր վրզին,
Այդ միայն է ցանկալի
Աղտեղասեր, գարշ խոզին:

Թո՛ղ ազգը միջին դարու
Մահահրավեր քնի մեջ.
Յուր հին երազն երազե,
Դեռ քրքրե կրոնքի վեճ:

Թո՛ղ նա քնեն չրզարթնի,
Մի՛ վրդովիր դու նորան,
Թեև այդ քունը տանում է
Դեպի անշարժ գերեզման:

Թո՛ղ մեր կանայք, օրիորդք,
Սրտով զոհվին մոդային,
Զուրկ ճիշտ կրթությունից
Կյանք վարեն օդային:

Եվ ամուսնին պարտքի մեջ
Թաղեն մինչ վերջ բողազին,
Նորա ձեռքի վաստակը
Թափեն մոդնի մագազին:

Թո՛ղ տուր մեր նոր սերունդը,
Թողյալ մայրենի ստինք,
Օտար կաթնով սնանին,
Ազգը համարեն նախատինք:

Օտար հոգվով կրթվին
Եվ սիրեն օտարուհիք,
Օտար ազգերի համար
Բազմացնեն շատ որդիք:

Թո՛ղ տուր խղճուկ գյուղացին՝
Այդ ստրուկը, այդ գերին,
Կարոտ օրական հացին՝
Մշակե հողն յուր աղային:

Նորա որդիքը կիսամերկ,
Բախտախնդիր, սովատանջ,
Պանդուխտ աշխարհ հածելով,
Թող կրեն չարիք աննահանջ:

Թո՛ղ հարուստները մամոնի
Կուռքի ոտքերը լիզեն,
Ազգը թողնեն անխնամ,
Ոսկու ամբարներ դիզեն:

Թո՛ղ դավաճան վասակներ
Վայելեն ճոխ ապրուստ,
Պատվի և փառքի համար
Ազգը մատնեն ի կորուստ:

Թո՛ղ հոգևոր հայրիկը
Եվ ազահ հոգաբարձուն՝
Յուրյանց շահերին մատնեն
Մեր դպրոցներ, վարժատուն:

Թո՛ղ Այսմավուրք և Ճաշոց
Տրպե մամուլն մեր հիմար,
Ոչ արհեստի գրքերը
Բազմացնե ազգի համար:

Ո՛չ օրագիրք, լրագիրք
Նորա աչքը բաց անեն,
Եվ գիտության սերմերը
Նորա սրտումը ցանեն:

Թո՛ղ տուր, եղբայր, քո խրատ,
Հայը կամակոր, համառ է,
Քո գրվածքներն ու քարող
Անապատի բարբառ է:

Հայը սիրում է գովեստ —
Փաղաքշական, կեղծավոր,
Մոլությունքը մերկացնողին
Է թշնամի վտանգավոր:

Ճշմարտությունն՝ որպես լույս՝
Հիվանդոտ աչքը կըծակե,
Ճշմարտություն քարոզողի
Վարձը՝ փշյա պսակ է...

ՍԿԶԲՈՒՆՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Արմենուհի, ազնիվ տիկին,
Քեզ մատա՛ղ լինի իմ հոգին,
Երբ ստինքեն քո մայրական
Կըծորես կաթն քո մանկեկին՝
Դու ներշնչե՞ նորա սրտում
Մեր հայրենյաց, սերն յուր ազգին:

Երբ օրորոց քո մանկեկին
Կըօրորես, ազնիվ տիկին,
Երբ աչերուն նորա պարզ-ջինջ՝
Կըհրավիրես քաղցրիկ նինջ՝
Դու անուշիկ՝ այդ երգ քնքշիկ՝
Երգե՛ նորան՝ ուշիկ-ուշիկ. —

— Նանի՛կ, նանի՛կ, իմ աչաց լույս,
Խեղճ հայրենյաց դու միակ հույս,
Նանի՛կ և շուտ մեծացի՛ր դու,
Ընկած ազգիդ եղի՛ր ձեռնտու:
Սիրե՛ Հայաստան, սիրե՛ հայ ազգը,
Սիրե՛ դու նորա ժպիտն, արտասուքը:

Արմենուհի՛, ազնիվ տիկին,
Երբ նստած մոտ տաք օջախին,
Ընտանեկան քո շրջանում
Հեքիաթ կասես քո երեխին,
Առասպելներ պառավախոս
Մի՛ սերմանիր նորա գլխին:

Դու պատմի՛ր, տիկին, վեպը հայ ազգին,
Նորա քաջերի արությունք նախկին,
Նորա վատերի գործն ամոթալի,
Բյուր չարիքներով և արյունով լի:

ԳԵՐԵԶՄԱՆՔ

Անապատ դաշտում, խուլ, լայնատարած,
Սփռված են անթիվ հիշատակարանք,
Այստեղ մարդերի, հինավուրց մեռած,
Պահվում են խնամքով մարմնի փշրանք:

Ահա՛ նոր աշխարհ, ուր որ տիրում է
Աստուծո հանգիստ միաբանություն,
Այստեղ ճշտորեն հանդիսանում է՝
Սեր, եղբայրություն, հավասարություն:

Արքա և կայսր, — երկրի տիրապետ,
Բավականացած քանի գազ հողով,
Յուրյանց ստրուկ հպատակաց հետ
Են պառկած միասին՝ հաշտությամբ, սիրով:

Եվ բռնակալն, — արյան ծարավին,
Թափելով սրտեն թույն և չար նախանձ,
Վրեժխնդիր սիրտն էլ չէ բնավին
Խորհում յուր զոհերն առնել գիշախանձ:

Եվ հարստականն, — արծաթո մոլին,
(Փողից կշտացած է սիրտն անհագ)
Էլ չէ աշխատում խաբել ընկերին,
Որսալ նորանից շահավետ վաստակ:

Եվ ավազակը՝ թողելով կողոպուտ,
Նա էլ աչք չունի հարստի կամքին,
Չէ հափշտակում նա այլոց օգուտ,
Կարծես, զղջացել է նորա հոգին:

Եվ մուրացկանը, — օտարի կարոտ,
Ձեռքը չէ ձգում խնդրելու դրամ,
Անգութ ագահի դեմքը կնճռոտ
Չէ՛ զարհուրեցնում խղճին անխնամ:

Եվ ախտաբորբոք, մոլի տարփածուն,
Հուպ գեղագանգուր, մատղահաս կուսին,
Նորա սիրտն որսալ էլ չէ մտածում,
Հանգած է սերը նոցա երկուսին:

Ահա՛ մարգարեի5 գուշակած աշխարհ,
Ուր բնակվում են գայլն ու գառնուկ,

Ուր են հավասար, միմյանց եղբայր՝
Իշխան, թագավոր, գերի և ստրուկ...

ԱՆՑԱԳԻՐ

Ոգիներու աշխարհը
Շնորհ տարավ մի պարոն,
Ստիքսեն անցնելու համար
Դիմեց դեպի Աքերոն,

Ցո՛ւյց տուր, տեսնեմ անցագիրդ,
Ասաց նավապետ աստված.
Պարոնը տվեց մի լայն թերթ
Պապի կնքովը դրոշմված:

Զգելով թերթի վերա
Յուր աչերը բոցավառ,
Սարսափելի Աքերոնն
Այդպես արձակեց բարբառ՝

— Նորոգությունից հետո
Աստվածային Լուտերի՝
Մենք էլ չենք հավատում
Այդպիսի կեղծ թղթերի:

ԿՈՒՅՐ ՀՈՎԻՎՆԵՐ
(Եսայի մարգարեություններից)

Ուտելու եկե՛ք, դաշտի գազաններ,
Գիշատե՛ք հոտը, անտառի գայլեր,
Զի հովիվները հիմար են և կույր,
Նոցա շները համբր են և լուռ:

Նոքա թմրության քնովն են քնած,
Անհոգ շներուն հոտերը հանձնած,
Ա՛խ, կույր հովիվներ, տխմար հովիվներ,
Անիրավ վարձուց՝ մոլի ծառաներ:
Նոքա երգում են
Այդ միակ երգը՝

Եկե՛ք, բերենք մենք գինի
Եվ ցքիով արբենանք,
Վաղն էլ այդպես կըլինի,
Ամենն առատ կունենանք:

ՀՈՎՎԻ ԵՐԳԸ

Ես Արարատ սուրբ սարի վերա
Արածեցնում եմ, տեր, իմ հոտերը,
Գիշեր ու ցերեկ քո տեսույն կարոտ
Քեզ սպասում են իմ ոչխար, իմ հոտ:

Արդյոք կըլինի՞, որ քեզի մի օր
Տեսնեմ ու սիրեմ, որպես գթոտ հոր,
Արդյոք դու մի օր կըլինի՞ որ գաս,
Իմ վրանումը բարի հյուր դառնաս:

Երբ, տեր, դու մի օր ինձ մոտ հյուր կըգաս,
Եվ բարի ողջույն սիրով ինձ կտաս,
Ոտքերդ կըլվանամ ջրով պաղ, հստակ,
Քեզ հանգիստ կըտամ իմ վրանիս տակ:

Որպես Աբրահամ ծերունի հայրիկ,
Կըհյուրասիրեմ քեզ, տեր իմ քաղցրիկ,
Քեզ համար կըզոհեմ գառն անարատ,
Կըխնկեմ բուրումն ամբողջ Արարատ:
Կաթ, սեր, կարագով՝ կըկազմեմ սեղան,
Եվ ծաղիկներով կըզարդարեմ նորան,
Քեզ կըխմեցնեմ մեղրից օշարակ,
Կածեմ իմ սրինգով երգ քաղցրանվագ:

Թարմ շուշաններից՝ կարմիր, սպիտակ,
Քո գլխի համար կըհյուսեմ պսակ,
Ասրից իմ գործած փափուկ պատմուճան,
Տե՛ր, քեզ կընծայեմ մեր սիրո նշան:

Ինձնից կըհեռանաս, տե՛ր, դու գոհ սրտիվ,
Դու բարյավ մնաս, կասես, հեզ հովիվ.
Քեզ կառաջնորդեմ մինչ լերան կատար,
Եվ համբուրելով կըդնեմ ճանապարհ:

Այց արա՛ մի օր քո սուրբ Արարատ,
Այց արա՛, ով տեր, տե՛ր իմ գթառատ,
Զի սկզբանե դու հովիվներին
Էիր բարեկամ և պաշտպան վերին:

Մի՞թե Արարատա հովիվը նույնպես
Չունի՞ այնքան շնորհ, որպես քո Մովսես,
Մի՞թե Աբրահամ, Իսահակ և Հակոբ,
Միայն սիրելի եղան քեզի մոտ:

ՄՈՌԱՑՎԱԾ ՇԻՐԻՄ
(Նվեր Ա.…-ի հիշատակին)

Դո՜ւ, փափկաթև անուշ հովիկ,
Ո՞ւր այդպես լուռ մըրմնջելով՝
Կը սավառնիս մեղմիկ-մեղմիկ,
Ծաղկանց ոգի ներշընչելով։

— Դեպի թավուտքն նոճիների,
Որք մենավոր կծածկեն շիրիմ,
Նվիրել համբույր փոշիների,
Որ հայրենյաց էր մտերիմ։

Իսկ դու, սոխակ, բարի հրեշտակ,
Այդպես քաղցրիկ և հանդարտիկ,
Տերևախիտ այդ ծառի տակ՝
Ո՞ւմ կնվիրես քո մեղեդիք։

— Ես երգում եմ զոհի մ’աճյուն,
Որ կամփոփե այդ սուրբ դամբան,
Ի սեր ազգին թափեց արյուն,
Ճշմարտության էր նա պաշտպան։

Կանաչագեղ դուք վարդենիք,
Ձերթ քույրիկներ ջերմ՝ կարոտով,
Մի՞թե եղբայր գըրկած ունիք,
Կը փայփայեք անուշ հոտով։

— Այո՜, եղբայր։ Այդ գերեզման,
Ուր կա ազգի մի նահատակ,
Նա ուներ կամք, սեր անսահման,
Պաշտելի է յուր հիշատակ։

Իսկ սիգաճեմ դշխոյդ երկնից,
Ո՞ւր նազելով այդպես հուշիկ,
Արծաթափայլ քո վարսերից
Կը թափես շողերդ անուշիկ։

— Դեպ այդ ձորը Մասյաց լերին,
Ուր մի շիրիմ՝ կծածկեն սոսիք,
Հավերժ հարսունքն Արմավիրին
Նորա շուրջը կհյուսեն դափնիք։

Ո՞վ է դրած շիրմի միջին,

Դու խո՛ գիտես, ասա՛ լուսին,
Ես էլ գնամ տամ մի համբույր,
Տանեմ ծաղկունք վրան բարեբույր:

— Երիտասարդ մի դրած է անդ,
Անխոնջ գործիչ հայրենիքին,
Որ յուր ջանքը և ջերմ եռանդ
Ողջ նվիրեց նորա փառքին:

Փլատակների հին մոխիրից
Կուզեր կանգնել հայությունը,
«Այբ ու բենի՝ մեջ էր գտնում
Նորա միակ փրկությունը:

Հայի արտասուք նա սրբում էր,
Ազատության էր միշտ պաշտպան,
Նա չուներ սուր, մարտնչում էր,
Նորա զենքն էր — գրիչ ու բան:

Բռնակալի ձեռքն դավաճան,
Բարօրության միշտ անհամբեր,
Նորա կյանքին տվեց վախճան
Հասուց հարվածք յուր մահաբեր:

Այդ շիրիմն, որ Հայաստանի
Կրում է զոհն յուր միջում,
Այժմ մոռացված է հայերից,
Իմ արտասուքն է նորան թրջում:

ԲԱՆԱՍՏՆՂԾԻ ՎԻՃԱԿԸ

Այդ ախտաբորբոք ոգևորությամբ
Պատանի, ո՞ւր ես դու հափշտակված,
Արդյո՞ք դեպի երկինք քո միտք սրաթռիչ
Եթերս ճախրելու կոչում է աստված:

Հրեշտակաց հետ հրճվում ես դու,
Եվ մոռացել ես քո բոլոր շրջան,
Քո հոգեզրվարճ այդ ցնծությունը
Չունի բնավ վերջ ու ո՛չ յուր վախճան:

Այդ ոսկի ժամուց բոպեք սրբազան,
Այդ խորհրդական զբաղմունք հանդարտ,
Արհամարհանոք ծաղրում է խուժան,
«Չունի, ասում է, դա նախանձ կամ դարդ»:

Տե՛ս, որքան անհոգ, հիմար է այս մարդ,
Թեև նա չունի հաց և ապրուստ:
Արբըված է միայն յուր ցնորքներով,
Եվ թափառում է մերկ և անհագուստ:

Բայց գո՛հ է քո սիրտ աշխարհի փառքին,
Քեզ չէ՛ հրապուրում կյանքի ճոխություն.
Եվ ո՛չ հարստի մամոնի սերը
Դառնացնում է քո աղքատություն:

Դու նվիրված ես քո ազգի օգտին,
Եվ նորա շահուն, հաստատուն ուխտով,
Զոհել ես նրան քո կյանք և վաստակ,
Բոլոր գոյությամբ և քո չար բախտով:

Իսկ այդ սրբազան զոհաբերություն
Ինչո՞վ վարձատրեց ազգը քո պաշտոն,
Նա դրե՞ց արդյոք որևիցե գին
Քո անգին զոհար խոսքերուդ զգոն:

Ո՛չ... հայհոյեց քեզ այն ապերախտը,
Զլացավ հարգանք և ոսկու քսակ,
Քո անզուգական ճգանց փոխարեն
Կապեց ճակատիդ նա փշյա պսակ:

Արհամարհելով ռամկի չարություն,
Դու վրեժխնդիր չեղար, բանաստեղծ,
Քո քնար հնչե՛ց դարձյալ քաղցրաձայն,
Երգեցիր քո երգ անաչառ, անկեղծ:

Թըշվառ է, պոետ, քո կյանքը անգին,
Դու նմանում ես խեղճ թիթեռնակին,
Որ սիրահարված լուսով ճրագին,
Այրում է թևքեր, փչում է հոգին:

ՀԱՍՈՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դե՛հ, քաշեցեք, սիրուն եզներ,
Հառաջ տարեք արորը:

Վարը վարենք, ակոս փորենք,
Խոր ակոսներ հողի մեջ,

Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորյան դիզենք ակլի մեջ:

Կգա ձմեռ — մենք վախ չունինք. —
Ուրախ կանցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի և կուշտ է մեր փորը:

Թող չասեն մեր դրացիքը,
Ծույլ են Հասոյի եզները:
Դե՛հ, քաշեցեք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը:

ՀՈՂԱԳՈՐԾԻՆ

Դե՛, դու ժիր մշակ, լծե՛ քո արոր,
Հասավ գործելու քեզ փառավոր օր,
Ժա՛մ է քեզ հիմա արտը մշակել,
Բարեբեր սերմանց պտուղ ճաշակել:

Անցավ ձմեռը — դառնաշունչ, խոնավ,
Բքաբեր մրրիկ չէ փչում բնավ.
Գարնան տաք օրեր, անուշիկ, պայծառ,
Ուրախ ճռվռով ավետե ծիծառ:

Սոխակը յուր վարդին տա նախկին բարև,
Քաղցր ժպտելով ծագում է արև,
Անաղոտ լուսով երկնից դիցուհին,
Փայլում է շողեր Հայոց աշխարհին:

Յուր անուշ հոտով բուրե մանիշակ,
Ի՛նչ հրճվանք այժմ քեզ գործի, մշակ.
Դե՛, լծե՛, դու քո արոր և գութան,
Ցանել պտղավետ սերմունք գիտության:

Հայոց կոշտացած, անմշակ դաշտում,
Վարե՛ քո արտը ուրախ, անտրտում,
Խոր ակոս ձգե հողում արգավանդ,
Պատառե՛ նորա կուսական արգանդ:

Եվ արշալույսի ցողաբեր պահուն,
Երբ օրհնի աստված թռչունքը անհուն,
Երբ ծագե յուր լույս երկնքեն ֆերոս,
Եվ ծաղկունք խնկեն բուրմունք և ամբրոս:

Հնչեցո՛ւր, մշակ, անուշիկ քո երգ,
Եվ առա՛ջ վարե օրավար քո հերկ,
Քո ժիր, գործունյա եզներիդ ուժեղ
Կըտա զորություն մեր աստված անեղ:

Ցանե՛, դու մշակ, բարեբեր սերմունք.
Օրհնե՛ քո տեր հունձիդ արդյունք.
Կըգա քեզ ամառ, ջերմին եղանակ,
Կըհասնի ցանքը քո այն ժամանակ:

ԲՐՈՒՏԻ ՇՈՒՆԸ

Աղմուկ ու շփոթ հանկարծ բարձրացավ,
Գոչյուն ու հաչյուն լըսվեց, սաստկացավ,
'Գա՛յլը, հա՛ գայլը»... աղաղակեցին,
Գյուղի շները վրա վազեցին:

Գայլը հենց լսեց, իսկույն ետ դարձավ,
Արագ քայլերով գյուղից հեռացավ:
Շները կատաղած՝ դեռ հաչում էին,
Հետևից ընկած՝ հալածում էին:

Հալածում էին՝ երկար ու երկար,
(Նրանց կրքերին՝ չափ, սահման չը կար)
Մինչև ամենքը իսպառ հոգնեցան,
Կես ճանապարհից մեկ-մեկ ետ դարձան:

Մեկը չը դարձավ: Նիհար, քոսոտած,
Բուրդն ու մազը՝ վրայից թափված,
Նեխած բերանը փչում էր փչում
Մի խիստ զզվելի գարշահոտություն:

Գա՛մփռ էր երբեմն, գա՛մփռ ահագին,
Կարծվում էր պետը՝ նա շանց-ռհմակին,
Իսկ այժմ քաղցից, հարաժամ քաղցից,
Ցամաքած փորը կպել էր մեջքին:

Գայլը կանգ առեց, խեթ կերպով նայեց.
— Դու ո՞ւմ շունն ես, — նրան հարցրեց:
— Բրուտի շունն եմ, — ասաց քոսոտը,
Եվ վստահությամբ առաջ դրեց ոտը:

— Կըժեր, սափորներ՝ միշտ շինում է նա,
Ցուր նման վարպետ աշխարհում չը կա,
Այդ ամաններով՝ ջուրը աղբյուրից

Բերեն գյուղացիք, այրըված ծարավից:

— Տո՛, — գոչեց գայլը, — անպիտա՛ն քավթառ,
Ասա՛, դու ի՞նչ ոխ, ի՞նչ վրեժ ու պատճառ
Ունեիր այսպես՝ ինձ հալածելու,
Եվ մինչև այստեղ՝ հետևիցս գալու:

Այն մյուս շները, որ հալածեցին,
Այնքան ոռնացին, այնքան գոռացին,
Թերևս ունեին որևէ պատճառ,
Նրանց զայրույթը՝ վիշտ չէ ինձ համար:

Հափշտակել եմ մեկի գառնիկը,
Կամ փողոտել եմ՝ մյուսի հորթիկը,
Իսկ քո բրուտի խեցին ու սախսին
Խո ես չեմ կերել, գարշելի՛ չնչին:

Մռնչաց գայլը, զայրացած աչեր
Փայլատակեցին կրակ ու կայծեր,
Ձգեց ոտքերի տակը քոսոտին,
Վերջ տվեց իսկույն թըշվառի կյանքին:

ԴԻՈՍ ԵՎ ԷՇԵՐ

Մի օր էշերի՝ ամբողջ քարավան
Ղեպի Օլիմպոս ճանապարհ ընկան,
Եվ ստորոտից դիցական լերին
Այսպես զռալով ձայն արձակեցին.

— Ո՛վ ամպրոպային արքա շանթառաք,
Մենք իսպառ եղանք խաղք ու խայտառակ,
Այդ ի՞նչ պատիժ էր դու մեզ տրվեցիր,
Որ «էշ» անունով մեզ մկրտեցիր:

Բավական չէ՞, որ մենք ամբողջ օրը
Կրում ենք մարդկանց աղբն ու փքսորը,
Եվ մեր մեջքերը մշտական բեռնից
Ազատ չեն երբեք անբուժ վերքերից:

Բայց վերքն ու բեռը, փալանն ահագին,
Շատ վիշտ չեն բերում մեր դառն վիճակին.
Անտանելի է ա՛յն ցավը սաստիկ,
Երբ «էշ» անունն են տալիս մեզ մարդիկ:

Այդ նախատական անարգ անունից

Մեր բեկված սիրտը խոցվում է խորքից,
Եվ մեր ականջներ, միշտ այդ լսելով,
Երկար ու երկար ձգվում են փութով:

Տուր մեզ նոր անուն, ինչ էլ որ լինի,
Շուն, գայլ կամ աղվես, ձի, խոզ կամ ջորի,
Միայն «էշ» անունից դու մեզ ազատիր,
Մեր աղերսանքին, ո՛վ տեր, ունկն դի՛ր:

Դիցական սարի գլխից ամպամած
Հզոր Դիոսի ձայնը որոտաց.
— Ո՞ր երկրից եք, կամ ո՞ր տեղացի:
Պատասխանեցին. — «Տե՛ր, ...ցի՝:

Խնդաց Դիոսը, խինդն աստվածածին
Շարժեց Օլիմպի ամբողջ գագաթը:
— Գնացե՛ք, — ասաց, — անվան փոխարեն
Լա՛վ է, որ փոխեք ձեր վատ խասիաթը:

Անվան պատճառով չէ, որ դուք եղաք
Մարդկանց աչքումը խաղք ու խայտառակ,
Այլ բարք ու վարքի անզուսպ կոպտություն
Խլեց ձեզանից պատիվ, բարություն:

ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Շնորհավոր Նոր տարի,
Շնորհավոր և Նոր օր.
Տացե աստված միշտ բարի
Տեսնել այդպես տարիք նոր:

Ասաց ընկերս ցնծալով
Ներս մտնելով իմ սենյակ,
Երբ ես տխուր և լալով
Նստած էի միայնակ:

Ինձ համար չէ Նոր տարին
Ասացի, ես բարեկամ.
Միևնույն է թըշվառին
Թե անցյալը, թե ներկան:

Ինձ երեկը և այսօր
Նույն դժգույն է միշտ վիճակ,
Բախտիս անիվը անզոր
Չէ բերում դարձ հաջողակ:

Հեռու պանդուխտ երկրում,
Հեռու քաղցրիկ հայրենյաց
Վիշտ, տառապանք եմ կրում,
Մաշվում է ուժն իմ կենաց:

Իսկ իմ դստերք, ո՞վ գիտե,
Մորը հարցնում են այսօր, —
«Մայրիկ և ա՞յդ Նոր տարի
Պիտի վարեմք առանց հոր:

Իսկ պանդուխտը տխրամիտ,
Զուրկ զգվանքեն ընտանյաց,
Նա չէ տեսնում ոչ ժպիտ
Եվ ոչ լաց իր զավակաց:

Կինս գրում է նամակ, —
Մարդ, ինչո՞ւ դու ուշացար,
Չէ՞ մի տարի ժամանակ
Մեզ հազիվ դու խոստացար:

Դեռևս քանի՞ ամառ
Կը վարես օտար աշխարհում.
Քո զավակները թըշվառ
Այժմ էլ ո՞վ է պահում...

Իսկ պանդուխտը ի՞նչ սրտով
Դառնա դեպի իր ընտանին,
Երբ որ դատարկ մի սև փող
Չունի մեջ իր գրպանին:

ԿՈՒՅՍԻ ՎԻՇՏԸ

Քնած է լուսնյակը
երկնքի խորքում,
Քնած է թռչնիկը
իր փափուկ բնում,
Քնած է քամին,
տերև չէ շարժվում,
Քնած է գետը,
ձայնը չէ լսվում:
Մայրիկ, ինչի՞ ես
քնել չեմ կարում,
Ուզում եմ քնել,
աչքս չէ փակվում,

Մայրիկ, այս ի՞նչ է,
որ ինձ տանջում է,
Այս ի՞նչ կրակ է,
որ սիրտս այրում է...

ՊՈԵՄՆԵՐ
ԴԺՈԽՔԻ ԿԱՊԱԼԱՌՈՒՔ
(Դիցաբանական առասպել)

Վա՛յ ձե՛զ օրինականացդ, զի թափուցանէք
զփականս գիտութեան, դուք ոչ մտանէք՝
և որ մտանենն՝ արգելուք:
ՂՈՒԿԱՍ

Ա
Գեղեցկատեսիլ մեծ դաշտ էր սիրուն,
Կանաչ, ծաղկազարդ վառվում էր հեռուն,
Հովիտի միջով՝ լայն և անսահման,
Մի արծաթափայլ վիշապի նման,
Ոլոր ու մոլոր սողար Արաքսին.
Ալևոր գագաթ ծերուկ Մասիսին
Նայում էր բարձր, բարձր ամպերեն,
Ցայտում էր կրակ հպարտ աչերեն:
Այնտեղ վաղեմի կանգնած էր մեհյան,
Ուր Արամազդա դրած էր արձան.
Դարերի հոսանքն և թշնամին չար
Չրկործանեցին այդ սիրուն տաճար,
Դեռ ողջակեզը ծխար անդադար,
Սևուկ քուրմերի բազմաթիվ դասը
Վարեն կուռքերի պաշտոնն, սպասը: :
Այնտեղ դրած էր աթոռ սրբազան,
(Մեծ քրմապետի իշխեր գավազան).
Ուր կրոնասեր Հայկա որդիքը
Թափում են յուրյանց արծաթն, արդյունքը:
Այնտեղ Արարատա փշրված գահին
Մնում են բեկորք, հիշատակներ հին...

Բ

Փոքրիկ խուցի մեջ կային երկու մարդ.
Աղքատ էր խուցը՝ նեղ, խոնավ, անզարդ,
Կարծես թե վաղուց տխրության ոգին
Թափել էր այնտեղ մաղձը դառնագին:
Որպես հարազատ մի զույգ սատանա,

Օթոցի վերա նստած են նոքա,
Սև-սև հագուստով, սև բաշլիկ գլխին,
Եվ «տեր ողորմյան՝ ձգում են ձեռին:
Նոցանից մինն էր մաշված ծերուկ,
Ալևոր գլխով, սպիտակ մորուք,
Գունատված դեմքը խոժոռ էր, տխուր,
Նեղ աչքերումը վառվում էր չար հուր,
Նորա խորշոմած, ճաղատ ճակատին
Դրած էր կնիքը խորամանկ Նեռին:
Իսկ այն մյուսը՝ միջակ տարիքով,
Թխագույն երես, սև էր մորուքով,
Սարսափելի էր դեմքը նենգավոր,
Փայլում են աչքերը՝ կրակոտ, անսովոր,
Եվ դժոխային բոլոր կերպարանք
Բացատրում էր մահ և զարհուրանք:

Գ

«Ուրեմն այդպես... հայրիկ սրբազան,
Անցավ մեր դարը... փշրվեց գավազան....»
Ասաց, որ ուներ խճճված սև մորուք,
Թուխ աչքերիցը գլորեց արտասուք:
— Անցա՛վ... — կրկնեց մաշված ծերունին,
— Բայց հուսահատվիլ պետք չէ բնավին:
— Գիտե՞ս թե ի՞նչ է գլխավոր պատճառ
Մեր դժբախտության, դեպքերին այդ չար. —
Երբ որ վարժատուն — այդ պիղծ, անպիտան
Շինվածքը՝ — մտավ մեր սուրբ Հայաստան,
Մեհյանը կորցրուց յուր հարգ սրբազան:
Ընկավ կրոնքը: Իսկ աշխարհական
Ուսում, գիտություն, լուսավորություն՝
Քանդեցին մեր տուն, բոլոր զորություն:
Ամբոխի աչքերն երբ որ բացվեցան,
Հոգևոր հայրերն ատվիլ սկսան:
Հայը գերված էր մեզ, որպես ստրուկ,
Երբ հիմար էր նա, ինչպես մի մանուկ,
Մեր կանոններին էր միշտ հնազանդ,
Մեզ որպես դյուցազն պաշտեր ջերմեռանդ:
Իսկ երբ ուսման հետ նա եղավ ծանոթ,
Մեզի համարեց անպիտան անոթ,
Եվ մեր ծեսերին տվեց նա անուն՝
Հեթանոսական կռապաշտություն:

Դ

— Մի՞թե սառնասիրտ նախատինք այդքան
Մենք պետք է տանենք մինչև գերեզման.
Կոչեց մյուսն, աչքերը վառվեց
Եվ սրտի թունդեն դեմքը փոփոխվեց:
«Ամեն հնարներ պետք է դնել գործ,
Խավարի տիրելուն անել կրկին փորձ,
Կրկին վերածել կույր հիմարություն,
Ջնջել ուսումն և լուսավորություն:
Եվ կրոնական ուռկանով նախկին
Որսալ հայերի խելքն ու հոգին,
Մինչ մեհենական խորհրդոց վաճառ
Կրկին սկսե յուր հին տուրևառ,
Եվ հայը հոժար յուր լուման վերջին
Կըզցե հայնժամ մեր թասի միջին,
Երբ նա աչքի դեմ կառնե հաստատուն,
Թե առանց մեզի չունի փրկություն...
Մեհյանիցը դուրս՝ չկա մեզ ապրուստ,
Մենք այլ գործերով չենք լինի հարուստ:
Եթե հեռանանք մենք այդ կյանքեն,
Նույն է, որպես ձուկն զրկվում է ջրեն:
Աշխարհի գործերն են մեզ անծանոթ,
Պարապմունքն անգամ՝ ստո՛ր է, ամո՛թ,
Թեև արհեստներ շատ կան օգտավետ,
Մենք բոլորիցն էլ զրկված ենք հավետ,
Զի այդ անիծված խուցերի խորշում,
Տոնացույց, ախտարք եղան մեր ուսում:

Ե

Այդպես նա խոսեց, իսկ այն ժամանակ
Նորա աչքերում վառվում էր կրակ.
Բայց ալևորը հանգիստ, անվրդով,
Լսում էր նորան խիստ սառն սրտով.
Հինավուրց հասակ խորամանկ ծերին
Ծանոթ էր կյանքի բոլոր փորձերին:
— Քեզ հետ համաձայն եմ, ազնիվ եղբայր,
Պատասխանեց նա քաղցր, մեղմաբար.
Լսի՛ր, այժմ քեզ կլինեմ խոստովան
Սրտիս գաղտնիքը, եթե դու հավան
Լինես խորհրդիս և հաշտվես ինձ հետ,
— Կհայտնեմ ես քեզ գործ մի օգտավետ:
— Ասա՛, ինձ հայրի՛կ:
— Լսի՛ր, իմ ջանիկ:

Խոր տարտարոսի արքան Պլուտոն
Ինձ Աքերոնի հանձնեց պաշտոն.
Եվ ես Ստիքսի նավակը կապալով
Արդեն վարձեցի, դորանից էլ լավ
Գործ մի փառավոր, բարձր անսահման՝
Մահկանացու մի չունի ինձ նման...
— Եվ ինչ օգուտ կա այդ գործի միջեն.
— Լսի՛ր, քեզ պատմեմ մի ըստ միոջեն. —
Քեզ շատ ծանոթ է դիրք Տարտարոսին
Յոթն անգամ պատած գետովն Ստիքսին.
Ուր յուր նավակով անխոնջ Աքիրոն
Կրում է հոգիքը դեպի Պլուտոն:
Մի-մի հատ լումա ամեն մի հոգին
Տալիս է նավորդին յուր անցնելու գին6.
Եթե պետք լիներ հաշվել ողջ օգուտ,
Թե ամբողջ տարին ի՞նչ է եկամուտ,
Մենք չունենք մի թիվ պարզելու համար
Այդ մեծաքանակ ահագին գումար.
Բավական է միայն հասկանալ այսքան,
Որքա՛ն հոգիներ դժոխքը կերթան...
Բայց այստեղում կա մի հարց գլխավոր,
Որ քեզ պարզելու է շատ հարկավոր —
Աքիրյան նավի մուտքը տարեկան
Կըբազմապատկվի չորիցս՝ անգամ,
Միայն պիտո էր գործ դնել հնար
Մեղավորների թիվն ավելնար...
Հայնժամ մի նավակ էլ չէ բավական
Կրել հոգիների ամբողջ քարավան:
Զի որքան ավելի լինեն մեղավորք,
Այնքան ավելի դժոխքը կերթան,
Այնքան ավելի մեզ օգուտ կըտան...
Ի՞նչ հնարներով մեղքը տարածել,
Մեղավորների թիվը բազմացնել:
— Տարածել մեղքն է խիստ դյուրին,
Զի մենք կունենանք խումբը դևերին,
Սատանաների անհամար դասը
Մեր հրամանին կառնե սպասը:
Չարության սերմեր կըցանենք աշխարհ,
Մեր, եղբայրություն կըջնջենք իսպառ,
Կըխափանենք բոլոր՝ դպրոց, վարժատուն.
Կարգելենք ուսում, լուսավորություն:
Եվ դու կըտեսնես բյուր բյուրուք
Հայնժամ գեհենի կըգան այցելուք: —
Ավարտեց խոսքը դժոխքի որդին,

Նա հրճվանք ազդեց ընկերի սրտին,
Որ գրկեց նորան, ձեռքը համբուրեց,
— Գեղեցի՛կ խորհուրդ… — մեկեն նա կոչեց.
Ես քեզ օգնելու եմ միշտ պատրաստ,
Ոչ իբրև ընկեր, այլ ծառա նվաստ,
Տարածենք խավար… կեցցե՛ Պլուտոն,
Միրով հանձն կառնեմ ես նորա պաշտոն…
Մի քանի րոպե հազիվ էր անցել,
Հանկարծ ներս մտավ սևուկ Սադայել,
Բերեց երկու թուղթ, մինը՝ վարձու պայման,
Մյուսն էր դժոխքի արքայի հրաման:
Եվ երկու պսակ այն ծառի ոստեն,
Որ խեղճ Ադամին քըշեց դրախտեն,
Որո պատճառավ մեղքն ու մահը
Տիրեցին թշվառ մեր այդ աշխարհը…
Նա պսակները կապեց յուր ձեռքով
Նոցա դավաճան, խավար ճակատին,
Երկուքն էլ իսկույն փառավոր կառքով՝
Նստան՝ սլացան խորքն անդնդին…

ԱՐԱՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄԸ
(Առասպել)

Եվ զյուռութսն (Շամիրամայ) ի ծով,
Եվ բան ի նմանէ՝ ուլունք Շամիրամայ
Ի ծով: Այլ թէ ախորժես առասպէլ
և Շամիրամ քար՝ առաջին քան զՆիոբէ:
ԽՈՐԵՆԱՑԻ

Ա
Մութ գիշեր էր: Ոչ մի աստղիկ
Չէր երևում երկնքեն,
Եվ լուսինը՝ սգվորի պես՝
Գունատված էր յուր դեմքեն:
Իսկ կայծակը հրեղեն սրով
Կտրատում էր ամպերը,
Եվ որոտը՝ գոռգռալով՝
Դղրդում էր լեռները:
Մրրիկը կատաղաբար
Մռնչում էր սոսկալի,
Ահ ու զարզանդ վեր էր բերում
Տարտարոսից լիուլի:
Հազարամյա ծերցած կաղնին
Խլում էր նա արմատեն,

Գազաններն յուրյանց որջում
Սարսափել էին արդեն:
Հեռու դաշտում, ծովակի մոտ7
Տեղ-տեղ վառվում էր կրակ,
Զինվորական վրաններում՝
Աղոտ փայլում էր ճրագ:
Բաբելական հաղթող զորքի
Զետեղված էր անդ բանակ,
Գիշերապահ զինվորներով
Պատած էր յուր շրջանակ:
Այն դաշտումը շատ դիադեզ
Ընկած էին դիակներ,
Քաղդեացի, հայ զինվորներ,
Ասորի և պարսիկներ:
Եվ այն տեղում անթիվ զենքեր՝
Տեգ և վահան, աղեղ, նետ,
Այն քաջերի դիակի մոտ,
Ընկած էին նոցա հետ:
Այն դաշտը ներկայացնում էր
Զարհուրելի տեսարան,
Մինը ձեռքով բռնած ուներ
Կրած վերքին լայն բերան,
Ողորմելի նա յուր ձայնով
Մորմոքում էր՝ ախուվախ,
Եվ յուր վերջին հանգստության
Նա կոչում էր անգութ մահ:
Մինն, արդեն հանգստացած
Խորին քնով օրհասին,
Յուր ընկերին գիրկն ածած,
Ննջել էին միասին...

Բ

Իսկ կռիվի ահեղ դաշտում
Թափառում էր Շամիրամ,
Հետն առած յուր նաժիշտներ —
Մանուկ կուսանց ողջ երամ
Նա տխուր էր... սգվորի պես,
Լաց էր լինում լուռ, մնջիկ,
Եվ առջևից աղոտ լապտեր
Քարշ էր տալիս մի աղջիկ:
Դիակների մեջը մտած,
Նա հուսահատ շրջում էր,
Եվ արյունը նորա ոտքերն

Կարմիր գունով թրջում էր:
Պտռում էր նա՝ մորմոքելով՝
Մինին ահեղ ալն դաշտում,
Որին սիրում էր թագուհին,
Որպես աստված էր պաշտում:
Հանկարծ վազեց մոլեգնաբար
Եվ նա գրկեց մի դիակ,
Հրաշագեղ էր այն քաջը,
Մանկահասակ պատանյակ:
Ներկված էր նա արյան մեջ,
Որպես կարմիր մի ծաղիկ,
Եվ մրահոն նորա աչեր
Դեռ ժպտեին քաղցրիկ:
Նա ձախ ձեռքով կրեր վահան,
Աջումը՝ տեգ ահագին,
Եվ պողվատից թանձր զրահ
Զգեցել էր յուր հագին:
Գլխին ուներ փետրազարդ
Արքայական սաղավարտ,
Հսկայատիպ էր այն քաջը —
Հզոր, ահեղ տղամարդ:
Չէր հասարակ նա մի զինվոր,
Կամ մի արի զորապետ,
Ոչ նախարար պատերազմող,
Ոչ թիկնապահ, ոչ ասպետ:
Արծվանիշ շքանշան
Կրեր նորա պարանոց,
Գոհարեղեն նորա քամար
Մթումը փայլեր որպես բոց:
Նորա դեմքն և կերպարանք,
Այնքան վսեմ, վեհաբար,
Արքայազարմ մի իշխանի
Բերեր հզոր ինչ տիպար:
Նա վավաշոտ Շամիրամի
Էր ցանկության ցնորքը,
Որո համար նա կոտորեց
Այնքան զինվորն ու զորքը:
Բայց անբախտի վառված իղձը
Մնաց նորա սրտումը,
Զի այն քաջը մահվան քնով
Ընկավ կռվի դաշտումը:

Գ

Իսկ թագուհին այն տարփավոր
Դիակից չէր հեռանում,
Առած նորան յուր գրկի մեջ
Մրմնջում էր, մեռանում...
Համբուրում էր նորա թշեր,
Համբուրում էր աչք և ունք,
Արնով ներկված գանգուրներին
Հպեցնում էր յուր շրթունք:
Եվ երբեմն մորմոքելով
Ճնշում էր պինդ յուր կուրծքին,
Լվանում էր նա արտասուքով
Արյունը նորա վերքեն:
Երկար այնպես մոլեգնաբար
Գրկած ուներ նորա դին,
Եվ վարդագեղ նորա արյամբ
Մարել կամեր հուր սրտին:
Մինչ վերջապես տվեց հրաման
Նաժիշտների նա խմբին,
Տանել շուտով դեպ յուր վրան
Ցանկալի գյուտն այն անգին:
Եվ աղջիկները մատղերամ՝
Հավերժահարսունք գիշերային
Յուրյանց փափուկ կուրծքի վերան
Առին դիակը բոսորային
Շուտ հասուցին Շամիրամա
Ոսկեթելով գործած վրան,
Խունկ, կնդրուկ և ծաղիկներ՝
Շատ ցանեցին նորա վերան:
Իսկ թագուհին արեց հրաման
Ողջ նաժիշտներին հեռանալ,
Ոչ ոքին յուր մոտ չընթողուլ,
Յուր պատվերը չընմոռանալ:

Դ

Նա կախարդ էր, ուներ հուռութք
Եվ հուլունքներ դյութական,
Քաղդեացի քավդեայներից
Ուսավ արհեստը մոգական:
Նա վհուկ էր՝ սերտ բարեկամ
Աներևույթ դիվաց զարմին՝
Եվ ախտարքին յուր զորությամբ
Շուտ կախարդեց քաջի մարմին:
Եվ շնորհիվ նորա հմայքին

Ահա իջան Հարալեզ դիք,
Ոսկիամորն Անահիտի
Էին դստերք և որդիք:
Եվ Հարալեզք սկսեցին
Լիզել վերքը դիակին,
Բժշկվեցան իսկույն նոքա,
Շունչ ստացավ քաջի հոգին:
Եվ շատ չանցավ, շուտ ջերմացավ
Այն սառուցյալ, մեռած դիակ,
Կարծես նորա երակներում
Կենդանության վառվեց կրակ:
Եվ ի՛նչ հրաշք, հզո՛ր աստված,
Նա բաց արեց աչքերը,
Որպես անուշ քնեն զարթնած,
Կանգնեցավ ոտքի վերա:
Ուրախացավ խիստ Շամիրամ,
Ցնծությանը չըկար չափ,
Ո՞վ կարող էր հայնժամ զսպել
Նորա սիրո թունդ և թափ...
«Փա՛ռք ձեզ, աստվա՛ծք, հանգստացավ
Այժմ իմ սիրտն, իմ հոգին,
Զի ես արդեն կարեմ կոչվիլ
Այս ըռպեից Արայի կին:
Ասա՛, ասա՛, իմ նազելի,
Այժմ ինձի դու կըսիրե՞ս,
Մինչ ե՞ըբ, անգութ, դու քո սիրով
Իմ սրտիկը պիտի այրես:
Ես քո կինն եմ այսուհետև,
Դու կատարե իմ ջերմ փափագ,
Քեզ կըբաշխեմ ես իմ երկիր,
Արքայական իմ գահն ու թագ:
Քեզ կըբաշխեմ Բաբելոնի
Օդակառույց իմ դրախտը,
Դու կատարե՛ իմ խնդիրքը,
Ինձ շնորհե անվերջ բախտը»:

Ե

Այդ խոսքերով նա մոտեցավ
Արդեն ապշած մեր Հայկազին՝
Եվ տարփավոր յուր թևքերը
Կամեր փաթթել նորա վզին:
Իսկ քաջազուն վեհ հերոսը
Այդ խոսքերից խիստ զարմացավ,

Եվ կատաղի բարկությունն
Աչքերումը բորբոքվեցավ:
Եվ նա գոռաց սև ամպի պես,
— Կորչե՛ հեռու, լկտի դու կին,
Ի՞նչ չար բախտով ես քո այստեղ
Գարշելի դեմքը տեսա կրկին:
Իմ մանկական պսակն անարատ
Ես քո սիրով որպե՞ս պղծեմ,
Նինվեացի ես տրփուհիդ
Անարգությամբ իմ գիրկ ածեմ:
Գնա՛, կորե՛, չե՛ս ինձ պիտո,
Եվ ինձանից դու հեռացի՛ր,
Այդ ցնորամիտ բաղձանքներովդ
Դու ինձ համար մի՛ մտածիր:
Հայաստնի դուստրներից
Ես ունեմ թագուհի արդեն,
Որ սիրասուն ածեց զավակ
Ինձ կուսական յուր արգանդեն»:
Սպառնալից այդ խոսքերը
Շամիրամին չ'ազդեցին,
Սիրաբորբոք նորա սրտեն
Վառված իղձը չըզատեցին:
Բաբելական աստվածուհիք
Յուր օգնության նա կանչեց,
Խունկ և զոհեր շա՛տ խոստացավ,
Շա՛տ խնդրեց և աղաչեց.
Որ դիցական արբեցությամբ
Գինովցնեն այն քաջ հերոս,
Թափեն նորա երակներում
Սիրո հեղուկ՝ նեկտար, ամբրոս:
Գուցե դյութված աներևույթ
Հրապույրներով նորա հոգին,
Հակամայից նա կատարե
Վառված իղձն յուր փափագին:
Բաբելական աստվածուհիք
Յուրյանց ճիգը դրին ի գործ,
Սիրո ախտով կախարդելու
Նորա սիրտն՝ արին մեծ փորձ:

Զ

Հայր աստուծո, մեծն Արամազդ,
Արարատա գագաթեն
Այդ հանդեսը կռվի դաշտում

Վաղուց դիտում էր արդեն:
Նորա շուրջը Հայոց երկրի
Բոլորել էին ողջ դիք՝
Հայկ, Անահիտ և Աստղիկ,
Հապետոսթե, յուր որդիք:
Խիստ բարկությամբ զննում էր
Նա այն դաշտը արյունոտ,
Ուսկից անթիվ կոտորածի
Դեռ փչում էր մահվան հոտ:
Հանկարծ նորա աչքին դիպավ
Շամիրամա մեծ վրան,
Բաքոսական այն հանդեսը
Զարմացք բերեց խիստ նորան:
Նա տեսնում է ախտաբորբոք
Նինվեացի թագուհին,
Որ աշխատում էր կախարդել
Ողջամիտ հայ դյուցազնին:
«Արմենակ», կոչեց Արամազդը,
Վառվեց աչքերը կապուտակ,
Թռի՛ր, գնա՛ և շուտ հասի՛ր.
Քաղդեացվոց դու բանակ,
Եվ ազատի՛ր Շամիրամից
Իմ գեղեցիկ, քաջ Արան,
Եվ մի՛ թող տուր, որ թագուհին
Յուր սիրով խաբե նորան»:

Է

Արմենակը կատաղաբար
Առեց լախտը ահագին,
Մի րոպեումը նա հասավ
Բաբելացվոց բանակին:
Շուտ նա մտավ Շամիրամա
Գեղեցկազարդ մեծ վրան,
Ուր կախարդիչ սիրո ցնորքով
Դեռ նոր արբված էր Արան:
Եվ Շամիրամը պատրաստվում էր
Սրտի կամքը կատարել,
Արմենակի երևույթը
Նորան ստիպեց դադարել:
Ձեռքը ձգեց նա Արային,
Բռնեց նորա գիսակեն,
Հափշտակած շուտ դուրս հանեց
Քաղդեացվոց բանակեն,

Եվ հողմերու թևքի վերա
Տարավ նորան Արարատ,
Շամիրամա չարեն մնաց
Նա միշտ մաքուր, անարատ:
Այնտեղ հայոց աստվածներին
Գիրկ է ածում քաջ Արան,
Քաղցրահնչյուն նվագներով
Ողջունում էին նորան:
Զի նա պահեց միշտ սրբությամբ
Մաքուր ողջախոհություն,
Եվ չաղարտեց յուր պատիվը՝
Դիցական անմահություն:
Այնտեղ յուրյան ընկերացավ
Եվ Նվարդն յուր սիրուն՝
Թագն ու պսակը Հայաստանի
Շքեղագեղ կույսերուն:
Մինչ յոթն օր, յոթն գիշեր
Տոն կատարեն հայոց դիք,
Անուշ քնար հնչվում էր,
Երգում էին դիցուհիք:

Ը

Բարկությունը Շամիրամա՝
Սարսափելի, անպայման,
Հանկարեակր թանկ կորստից,
Ո՛չ չափ ուներ, ո՛չ սահման:
Նա դուրս թռավ յուր վրանեն,
Որպես առյուծ կատաղած,
Մռնչում էր վազվըզելով,
Որպես խելքից ցնորված:
Վազեց, վազեց այն դաշտումը,
Սար և ձոր էր թափառում,
«Արա՛, Արա՛» կոչելուցը
Նա բնավ չէր դադարում:
Ցնորվա՛ծ էր այն խղճալին...
Նա վազում էր դեպի ծով,
Եվ խորության նորա միջին
Մտնել կուզեր անվրդով:
Եվ նա ձգեց ծովի միջում
Յուր հուռութքն ոսկեգույն,
Ալեկոծվեց անհուն ծովը
Եվ լեղի դարձավ իսկույն:
Եվ մարեցան նույն րոպեին

Նորա կրքերը կատաղի,
Եվ Շամիրամ ձևակերպվեց
Անշարժ արձան մի աղի:
Երբ մարմնից բաժանվեցավ
Տարփավոր նորա հոգին,
Նույն րոպեում նա ստացավ
Կերպարանքն աղունակին:
Մինչև այսօր կոկորդային
Բարբառով ասորական
Դեռ կանչում է աղունակը՝
«Վա՛յ, Արա, իմ սիրական...»:
Մինչև այսօր աղունակը
Բորբոքվում է, մրմնջում,
Ձի վավաշոտ Շամիրամա
Հոգին կրե յուր միջում:

ԱՆԻ
(տեսիլք)

Ա
Ես քնած էի անհանգիստ քնով,
Երբ երազների գողտրիկ դիցուհին
Յուր կախարդական, օդեղեն կառքով՝
Տարավ անծանոթ ինձ կողմն աշխարհին:

Այնտեղ արևն այնպես անսովոր
Ճառագայթում էր թուխ-թուխ ամպերեն,
Աղոտ էր լույսը, ջերմությունն անզոր,
Կարծես տխրություն թափում էր վերեն:

Ուր ծաղիկներն էլ չէին ժպտում,
Եվ մանիշակն այնպես լուռ, տրտում,
Յուր մարգարտացող, կապուտ աչերեն՝
Վշտալի կերպով արտսուք էր ցայտում:

Գերեզմաններով պատած էր դաշտը,
Ուր ողբանվեր, ճապուկ ուռենին,
Գլուխը ծռած (խորին էր վիշտը...)
Տարածում էր յուր սառը հովանին:

Ուռենու ոստին նստած սոխակը,
Որպես սգավոր ոգի գերբնական,
Մրմնջում էր յուր թույլ, մեղմիկ երգը,
Երգը ցավալի և դամբանական:

Այնտեղ մարդկային տեսա էակներ, —
Գունաթափ դեմքով, որպես դիակներ,
Մեջքները ծռած, գլխները թեքած,
Կարծես սև բախտի էին զավակներ:

Գիշերաշրջիկ ուրվականի պես
Դանդաղ քայլերով շարժվում են նոքա,
(Այդ մեռելային էր մի ճիշտ հանդես)
Նոցա երեսին բնավ կյանք չըկա:

Իսկ բռնակալի մահացու ձեռքը
Դրոշմել էր նոցա դժբախտ ճակատին՝
Դառն ստրկության խորին կընիքը,
Քամե՛լ էր արյունը վշտահար սրտին...

Բ

Գիշեր էր լռին: Տվնջյան լապտերը
Վաղուց ծածկված էր թուխ ամպերու տակ,
Իսկ կիսալուսնի գունատ պատկերը
Մինակ լողում էր երկնքում հստակ:

Կախարդվա՛ծ քաղաք... մեծ, լայնատարած,
Ավերակ էր նա և անմարդաբնակ.
Կարծես վրեժխնդիր բարկացավ աստված
Եվ թափեց այնտեղ կայծակ և կրակ:

Փլատակաների մեջ՝ սփռված անհուն՝
Թափառում էի տխուր, միայնակ,
Խոր գիշերային լռության պահուն,
Հին-հին դարերի հիշեի ժամանակ:

Մի ընկած ազգի հզոր գավազան
Իշխում էր այնտեղ: Բայց ո՞ւր է այժմ:
— Փըշրե՛ց նորան թշնամին գազան,
Մնացին բեկորքն այն հին փառքերի...

Յուր բնակիչները գնացին գերի,
Դեպի հեռավոր երկրներ անցան,
Կորցրին ազգային բոլոր սրբությունք,
Օտարներու մեջ եղան ցիրուցան:

Ուր որ աստուծո կանգնած էր սրբարան,
Ուր բնակվում էին երկնքի որդիք,
Ուր կարդացվում էր սուրբ Ավետարան,

Վերհնչում էին քաղցրիկ մեղեդիք:

Այժմ չէր լսվում էլ շունչ մարդկային,
Յուր խռպոտ ձայնով կռնչում էր բուն,
Կամ մռնչելով՝ սոված բորենին
Քարշում էր որսը, բերում դեպ յուր բույն:

Ուր որ հոյակապ էին արքունիք,
Երգում էր գուսան, փրփրեին գինիք,
Ուր ասպետները քաղեին համբույր,
Եվ պարում էին սիրուն կնանիք:

Այժմ օձերը, կրիան, մողես,
Փորել են այնտեղ յուրյանց խոր որջեր,
Կամ թռչկոտելով կայտռում է աղվես,
Կամ մռչնում են գայլեր և արջեր:

Ուր որ կանգնած էր տաճար սրբազան,
Նոր սյուները, շինված գեղեցիկ,
Միշտ տոն օրերին ծաղկովք զանազան
Զարդարում էին հարսն ու աղջիկ:

Այժմ մամռապատ ընկած են գետին,
Փուշն ու տատասկը նորանց խեղդեցին,
Վայրի բաղեղը գերության շղթան
Փաթըթել է նոցա վեհ պարանոցին:

Գ

Տխո՛ւր, մտախոհ, թիկն էի տված
Մի ընկած սյունի թեքված խոյակին,
Ա՛խ, որքա՛ն ցավեր տանջեին, աստված,
Այն րոպեում իմ սիրտն ու հոգին...

Եվ արտասուքը հեղեղի նման՝
Տաք կաթիլներով թափվո՛ւմ էր գետին,
Հինավուրց փառքի թրջում էր փոշին,
Մարում էր բոցը բորբոքված սրտին:

Մութ, կիսակործան տաճարի հետքից
Շարժվեց մի ստվեր, որպես ուրվական,
Սարսափի նման ինձ սոսկում ազդեց.
Այն երևույթն էր խիստ գերբնական:

Նա մոտեցավ ինձ մեղմիկ քայլերով,

Ձեռին բռնած էր փոքրիկ մի լապտեր,
Եվ լապտերիկի մռայլոտ լուսով
Փայլում էր նորա գունաթափ պատկեր:

Տխուր էր դեմքը, նիհար, վշտահար,
Շիջած էր բոցը պայծառ աչքերուն,
Բայց դարձյալ քանի՛ վսեմ գեղեցկություն
Կար այն դեմքի մեջ՝ այնպես մեղմ, սիրուն:

Ավերակների էր նա միակ Ոգին,
Եվ սևազգեստն, որ ուներ հագին,
Հուր ալիքավոր թուխ-թուխ ծալքերով,
Թափվում էր շիտակ, բարձր հասակին:

«Հերի՛ք, այցելու, ասաց այն ոգին,
Ինչո՞ւ լացում ես այդպես վշտագին,
Իմ էլ արտասվաց առատ կաթիլներ
Ծծեցին բեկորքն այդ մեծ քաղաքին:

Բայց հանգստացի՛ր, իմ խոսքը լսե՛,
Կորուստը մի՞թե լացով հետ կըգա,
Շենքը կըքանդվի, կարգն այդպես է,
Աշխարհս ավերման է միշտ ենթակա:

Տե՛ս, այդ քաղաքն է՝ գեղեցիկ Անի,
Թագն ու պսակը սուրբ Հայաստանի.
Դորանով մի օր կըպարծենար Շիրակ,
Բայց այժմ նա լացում է նորա ավերակ:
Կար մի ժամանակ հզոր Բագրատունիք
Ունեին այստեղ շքեղ արքունիք,
Ուր Աշոտ, Սմբատ, արքայն Շահնշահ
Տարածում էին միշտ սարսափ և ահ:

Եվ յուր կենսատու ստինքեն Ախուրյան
Ոռոգում էր դաշտեր անհուն, անսահման,
Գո՛հ էր մշակն աստծո բարիքներով,
Առատ ու լի էր նորա ճոխ սեղան:

Զվարճանում էր Անին, որպես թագուհի,
Յուր հարյուրավոր հարուստ գյուղերով,
Որպես լուսինը՝ զարդն աշխարհի,
Վառվում է, պատած փայլուն աստղերով:

Երբ Բագրատունյան վեհ թագի լույսը
Սակավ առ սակավ մարեց, նսեմացավ,

Հայնժամ և Անին՝ ողջախոհ կույսը՝
Բյուր գազանների նախատինք դարձավ...

Երկպառակությունքը՝ մի կողմից ներքին,
Բարբարոսությունքը՝ թշնամյաց արտաքին,
Թունդ, մրրկածուփ փոթորկի նըման՝
Ցրվեցին շենքը սիրուն քաղաքին:

Էլ չըկար Վահրամ՝ քաջ Պահլավունին,
Որ պաշտպաներ յուր սիրելի Անին.
Եվ հզոր Առյուծը՝ մեջ Հունաց վանդակին
Մռնչում էր, լսելով վտանգ հայրենիքին8:

Եվ ամեն կողմից անգութ թշնամիք՝
Թուրք, պարսիկ, թաթար և արաբացիք,
Մինը մյուսի հետքից, միշտ հաջորդաբար
Հարձակվում էին նոքա անդադար:

Եվ հազարավոր նորահաս տղամարդ,
Առույգ պատանի, քաջ երիտասարդ,
Անմեղ-մատղերամ խումբը կույսերին՝
Ջոհ եղան նոցա անողորմ սըրին:

Նոքա չըխնայեցին ծերի ալիքին,
Ոչ որդեկորույս մորը լալիքին,
Մորթեցին տղան դայակի գրկում,
Չը խղճացին նորա դառն արտասուքին:

Դեռ չէր կշտացել այն անգութ գազան,
Նա շինել տվեց մի մեծ ավազան,
Հայ մանուկների լեցրուց արյունով,
Մտավ նորա մեջ, լեղցավ նորանով...9:

Ա՛խ, քանի՛ անգամ անողորմ ձեռքը
Արնով ողողեց անդ անբախտ քաղաքը,
Նորա հարստությունք եղան կողոպուտ,
Թալանեց բոլորը թշնամին անգութ,

Նորա բնակիչքն եղան ցիրուցան,
Կորան ազգովին և ոչնչացան,
Ոմանք գերի գնացին դեպի Խուժաստան,
Ոմանք գաղթեցին դեպի Լեհաստան:

Նորա ժողովուրդն, արտորայք և գյուղ,
Անգթության զոհ եղան, փըչացան,

Եվ ճարտարության, արհեստի պտուղ՝
Տաճարք՝ արքունիք՝ ողջ մոխիր դարձան:

Ի՞նչ էր պատճառը: — Թող պատմաբանը՝
Կրոնքի մոլեռանդ և կույր պաշտպանը,
Թո՛ղ կարծի բնակչաց մեղքի պատճառավ
Բարկացավ աստված, վրեժխնդիր եղավ:

Եվ թո՛ղ ռամիկն ասե տակավին՝
Թե մենք ատեցինք սուրբերն ազգովին,
Չընհարգեցինք մեր մայր եկեղեցին,
Մեզի անիծեց սուրբ Երզնկացին10:

Ցնո՛րք են դոքա, Հայր բարեպաշտ
Միշտ եղել է և է՝ երկնքի հետ հաշտ:
Նա պատվել է յուր տերտեր, տիրացուն,
Հավատարիմ էր յուր եկեղեցուն:

Անին հազար ու մեկ ուներ ժամատուն,
Եթե ունենար՝ քանի մի վարժատուն,
Նա չէր կործանվի, նորա հին փառքը
Գուցե կը մնար մինչ այժմ հաստատուն:

Պակաս էր նորան՝ ուսում, գիտություն,
Տուր ժողովուրդը չուներ ազատություն,
Ճնշում էր նորանց արքայի շղթան,
Չընկար իրավունք, օրենք, արդարություն:

Զո՛ւր ես լաց լինում, վերջացուց Ոգին,
Դու այդ հողաբլուր և տխուր ավերակը,
Գնա՛, լաց եղի՛ր, ավերակն ազգին,
Եվ նորոգեցե՛ք նորա վիճակը:

Մարդկային ազատ գարգացման վերա
Հաստատուն հիմքը դրեցե՛ք նորա,
Տվեք նոր կյանք նորա գոյության,
Թոթափեք խեղդող փոշին հնության»:

Լուսինը մտավ թուխ ամպերի տակ,
Խավարը պատեց երկինքը հստակ.
Եվ Ոգին դարձյալ ուշիկ քայլերով
Գնաց, հեռացավ, արտսուքը ծածկելով...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՏԻԿԻՆՆԵՐԸ
ԵՎ ԵՂԻՇԵ ԱՎԱՐԱՅՐԻ ԴԱՇՏՈՒՄԸ

Տիկնայք փափկասունք հայոց աշխարհին, որք գրգեալք և զզուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, ճանապազ բոկ և հետի երթային ի տուն աղօթից անձանձրոյթ խնդրել ուխտիք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն:
ԵՂԻՇԵ

Ա

— Տիկնայք հայոց փափկասուն,
Մատաղ լինեմ ձեր հոգուն,
Ինչո՞ւ ձեր սև աչերեն
Դառն արտասուք եք հոսում:

Ա՛խ, մի՛ լացեք, նազելիք,
Մի՛ այրեք ձեր վարդ թշեր,
Զի ձեր աչեր չեն սորված
Թափել աղի կաթիլներ:

Բայց ինձ ասեք, թե ո՞ւր են
Ձեր փառք, զարդը նախկին,
Ինչո՞ւ այդպես տխուր եք,
Որպես սգվոր այրի կին:

Տիկնայք հայոց փափկասուն,
Ձեր ձեռքը, դեմքը սիրուն՝
Այլևս անուշահոտ
Օճառը չէ մաքրում:

Ո՛չ ձեր գանգուր խոպոպիք
Օծանվում են տոն օրին,
Յուրյանց ախորժ բուրմունքով
Ոգի շնորհեն հանդիսին:

Եվ վարդապսակ ձեր գլուխ,
Կուրք, պարանոց, բազուկներ,
Զարդարում չեն մարգարտով՝
Հյուսված ոսկի գոհարներ:

Եվ հագուստով խշխշուն,
Ուշիկաքայլ նազելով,
Չեք հրապուրում աչերը
Սիրելյաց ձեր կարոտով:

Իսկ հայ տիկնայք խմբովին՝
Եղիշեի հարցերին

Այդպես տվին պատասխան
Եվ ճիչ բարձին լալագին:

Բ

— Ծերունի դու մեր հայրիկ,
Դժվար է մեզ տալ համար,
Թե քանի՛ վիշտ և չարիք՝
Կրեցինք ազգի համար,

Երբ յուր կրոնք մոգական՝
Անհաշտ պարսիկը — Սասան՝
Կամենում էր ներս բերել
Մեր հայրենիք սրբազան:

Երբ մեր արի ամուսինք,
Սուրբ հավատքի պաշտպան,
Հաճեցան սուրբ արյունով՝
Մարել Զենտի ատրուշան:

Նոքա Պարսից աշխարհի
Տանջվում են բանտումը,
Եվ կամ անկան քաջի պես
Ավարայրի դաշտումը:

Ուր քաղցր է մեր աչերուն
Ցողել կաթիլք մարգարտին,
Զի սիրելյաց մեր արյուն
Ծծեց անգութ այդ գետին:

Կար ժամանակ, որ մենք էլ
Այդ դաշտումը երգելով11,
Ծաղիկներ ենք հավաքել
Սիրելյաց ձոն փնջելով:

Այժմ այստեղ ցիրուցան
Նոցա ոսկերք սրբազան
Հավաքում ենք սափորում
Պաշտել նորանց հավիտյան:

Կար ժամանակ, որ մենք էլ
Շքեղաշուք, պճնազարդ,
Սիրելյաց հետ անարգել՝
Վայելեինք կյանք զվարթ:

Բայց մենք մեր աչքով տեսանք,
Երբ ավազակ թշնամին
Մեր գանձերը, զարդարանք,
Տարավ Պարսից արքունին:

Մենք մեր ականջով լսանք
Ճիչ սիրելյաց չարաչար,
Երբ շղթայած դեպ աքսոր
Տանեին Պարսից աշխարհ:

Իսկ մենք գերի, անտերունչ՝
Մնացինք արտսուք հոսելով,
Բռնակալի ահ դառնաշունչ
Մեր կյանքը մաշելով:

Որո՞ համար զարդարվինք,
Որո՞ սիրտը ուրախացնենք,
Մի՞թե մեր գերիչների
Շնական աչեր հրապուրենք...

Մեր ամոթխած երեսեն
Երբեք չէր անկել շղարշ,
Եվ գլխի քող ծալեծալ
Գետնից գնում էր միշտ քարշ:

Արևի ոսկի շողքը
Կարոտ էր մեր երեսին,
Գուցե մի տաք համբույր տար
Ծածկված, համեստ թշերին:

Այժմ այնպես անխնա
Նորա շրթունք բոցավառ
Այրեցին թարմ վարդերը,
Մեր այտերի ալ, պայծառ:

Մեր առագաստ, սրսկապան՝
Մնացին անտեր և վերան
Փոշին դրեց յուր պատան,
Սարդը հինեց յուր ոստայն:

Մեր ապարանք կորուսին
Կահ-կարասիք փառավոր,
Մեր տաճարքը զրկվեցան
Յուրյանց զարդեն բյուրավոր:

Մեր շադրվան փողփողուն
Չէ ցայտում ցողը մարգարտին.
Ուսկից ջուրը հովասուն
Հովիկ շնչեր մեր սրտին:

Ծերունի հայր սրբազան,
Ո՞ւր բուրաստանք մեր սիրուն,
Ուր վարդ, նարգիզ և շուշան
Մեր գլուխն էր զարդարում:

Ո՞ւր պարտեզք մեր հովասուն
Ստվերախիտ որթերով,
Որոց ախորժ հովանին
Տալիս էր մեզ հանգիստ զով:

Ուր սիրելյաց մեր համբույր
Ծաղիկները բարեբույր
Նախանձվելով դիտեին
Եվ փառք տային աստծուն բյուր:

Ուր թփերի ոստերեն,
Գիշերային խոր պահուն,
Մեր երգերին դանշակից
Սիրուն սոխակն էր լինում:

Կորան ամենը չարաչար...
Ղադարեցան մեր երգ, պար,
Մեր բամբիռը չէ հնչում,
Լռե՛ց անուշ մեր քնար...

Այժմ լաց, սուգ, հառաչանք
Միշտ ախուվախ դառնաշունչ՝
Եվ սաղմոսի մեղեդիք՝
Են հոգևոր մեր մրմունջ:

Ի՞նչը մնաց մեր փառքից,
Ինչո՞վ այժմ պարծենանք,
Ո՞վ մեր վշտին կարեկից,
Ո՞ւմ ապավեն ունենանք...

Ո՞ւր մեր նաժիշտք ձեռնասուն,
Ո՞ւր մեր ծառայք, աղախին,
Մեր զավակունք սիրասուն
Զուրկ զգվանաց դաեկին:

Ո՞ւր մանուկ մանկլավիկներ,
Ո՞ւր մեր վարպետ խոհարար,
Անուշահամ խորտիկներ,
Որ պատրաստեր մեզ համար:

Ո՞ւր մեր հացթուխ տիրական,
Խմորեղենք համեմած
Մեր սեղանի ճոխության
Պատրաստում էր մաքուր հաց:

Ո՞ւր մեր դռան նվիրակ,
Ո՞ւր գինեբաշխ մատռվակ,
Որ փրփրուն և անուշ
Մատուցաներ մեզ բաժակ:

Կորան ամենը անդարձ...
Թողին տխո՛ւր հիշատակ,
Եղանք գերի, ստրուկ
Մենք օտարի լծի տակ:

Եվ աստուծո ողջ գիշեր
Քնից զուրկ են մեր աչեր,
Որպես սգվոր այրի կին
Մութ է մեզ լույս ցերեկին:

Մենք մոռացանք մեր նախկին
Քնքուշ կենաց ճոխություն,
Սովորեցանք վշտերի
Տանել դառն ծանրություն:

Հայրենյաց փառքի հույսը
Է մեր միակ մխիթար,
Մենք ատում ենք աշխարհի
Թույլ հեշտությունքը վատթար:

Մենք զոհեցինք մեր անձը
Սուրբ կրոնքի փրկության,
Եվ շահեցինք մեծ գանձը
Երկնքի արքայության:

Մենք մերկացանք մեր նախկին
Դիպակ, կերպաս և սամույր,
Եվ զգեցանք մեր հաքին
Մազե քուրձը սևաթույր:

Մենք թողեցինք մեր մանյակ.
Մարգրիտ, գոհար և ոսկի,
Եվ կրեցինք մեր վզին
Խաչն անմահ զինվորի:

Մենք թողեցինք մեր փափուկ,
Ճոխ և հանգիստ քնարան,
Ուր հրեշտակ սփռում էր
Անուշ քունը մեր վերան:

Եվ ընտրեցինք մահճակալ
Այն կոշտ և սառը գետին,
Ուր խոտեղեն փսիաթը
Է զինվորի անկողին:

Մենք տիկնայք ազատազգի,
Քնքուշ կյանքին սորված,
Մենք առանց պատգարակի
Չէինք գնում տնից բաց:

Այժմ բոբիկ, մեր ոտքով՝
Գնում ենք աղոթքի տուն,
Մեր հայրենյաց փրկության
Խնդրել տերից օգնություն:

Մի Ժամանակ մեր մեջքը
Սեղմեր փառավոր գոտին,
Այժմ կաշյա քամարից
Սուրը հասնում է գետին:

Մեր գլուխն էլ չունի
Յուր պսակը ծաղկազարդ,
Այժմ ամուր երկաթի
Ծածկե նորան սաղավարտ:

Եվ մեր կուրծքը մշտապահ՝
Մի սրբազան գեղեցիկ՝
Պատում է թանձր զրահ
Ոչ նուրբ շապիկ թափանցիկ:

Այլևս մեր դայիրան
Չէ պտտվում մեր ձեռքում,
Այժմ ծանր, լայն վահան
Մեր անձն է պաշտպանում:

Այլևս մեր մատները
Չեն կրում թանկ մատանի,
Ոչ ապարջան զարդարե
Մեր բազուկը հոլանի:

Նոցա տեղակ մեր ձեռքում
Սուր և նիզակ են շողում,
Գուցե մի օր պարսկին
Տանք մեր վրեժ դառնագին:

Գուցե մի օր ազատենք
Կրոն, լեզու, ազգություն
Ջրադաշտի կրակեն,
Եվ մեր շքեղ հաղթություն:

Սիրելյաց հետ միասին,
Այո՜, մի օր երկնքում,
Մեր քաջ Վարդանի հետը՝
Տոնենք մեր Հայկ հոր գրկում:

Այնժամ ծերուկ Եղիշեն,
Նոցա վշտին մխիթար,
Այդ խոսքերով տիկնայքը
Քաջալերեց մեղմաբար.

— Տիկնայք հայոց փափկասուն,
Գողտրիկ ոգիք իմ սիրուն,
Այո՜, ձեզնից քերովբեք
Ստացան անմահություն:

Դո՜ւք, զինվորյալ սրբուհիք,
Ահա՜, անթառամ պսակ՝
Բերում է ձեզ երկնքից՝
Հայոց պահապան հրեշտակ:

Դուք կանգնեցիք մի արձան
Անմահության աստղծուն,
Որ դարերի մինչ վախճան
Պետք է պաշտե Հայաստուն:

Վկայուհիք դուք հայոց,
Միշտ օրհնյալ է ձեր անուն,
Քանի կապրե հայ ազգը,
Եվ քանի կա Հայաստուն:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆԻՆՈ

Դուք տվեք մեզ լավ մայրեր,
Մենք կտանք ձեզ լավ որդիք,
Օտարացած կնկանից
Կընծնվին օտար մանկտիք:

Ա

Տիկնայք այժմյան փափկասուն,
Այդպես էին ձեր մայրեր,
Եվ նոցա անմահ անուն
Ապրում է այդքան դարեր:

Մի՞թե նոցա օրինակ
Չէ գրավում ձեր հոգիք,
Դուք էլ նույնպես սիրեիք,
Կրոն, լեզու, հայրենիք:

Դուք էլ նույնպես զոհեիք
Մեր աշխարհին, մեր ազգին
Ձեր կյանքի ճոխությունք,
Ձեր զարդերը թանկագին:

Ձի ձեր ապագա սերունդ
Մի օր ասեր քաջաբար.
«Մենք մայրերի ենք ծնունդ,
Որք սիրեցին հայ-աշխարհ»:

Զո՛ւր է քո խրատ, խե՛ղճ պոետ
Մեր հարգի արմենուհին
Չէ՛ համաձայն քեզի հետ,
Զուր քրքրես վեպեր հին:

Ի՞նչ քարոզես. — լեզո՞ւ, կրո՞ն...
Լուռ կա՛ց, քամի ես փչում,
Դոցանից սիրուն Նինոն
Վաղօրոք էր միշտ փախչում:

Նա ո՛չ միայն յուր զարդեր
Զոհ չէ բերում հայ ազգին,
Որ չունե նորա աչքում
Մի գրոշի արժեք, գին:

Այլ օտարի է նա զոհ,
Նվիրված անձամբ բնավ.
Եվ աստրծուց է դժգոհ,
Ինչո՞ւ ինքը հայ ծնավ...

Զի հայ անունը նորան
Միշտ նախատինք է բերում,
Եվ այդ ստոր ծագումին
Նա դժվար է համբերում:

Բ

Բախտավոր է մեր Նինոն
Ջեհիլ, շնորհքով ու սիրուն,
Որքան ուզես չափ չունի
Թիվն ամուսնի փողերուն:

Տունը՝ կատարյալ ապարանք,
Գեղեցիկ, երեք հարկով,
Նորա շքեղ զարդարանք՝
Հրա՛շք է՝ յուր սարք ու կարգով:

Ծառաներն՝ իմերել,
Սիրուն, արծաթ քամարով.
Տիկինն ինքն էր զարդարել
Մեկին ոսկի շղթայով:

Աղախիններ՝ օսեթին,
Ճոխ, փառավոր են հագնված,
Բջերի հետ քըչփըչում
Դռան հետքումը թաքնված:

Նա զբոսանք է գնում
Միշտ սեփական յուր կառքով,
Թռչում են սեգ նժույգներ,
Հիացած է յուր փառքով:

Նստած է հաստ կառավար
Յուր մորուքով փառավոր,
Նորա կողքին՝ մի սիրուն
Իմերել սպասավոր:

Ալ մահուդից է կարած
Չերքեզկան նորա հագին,
Եզերքն են զարդարած

Կլապտոնով թանկագին:

Շողշողում է լուսի դեմ
Արծաթապատ խենջարը,
Նազուկ մեջքը սեղմել է
Ոսկեջրած քամարը:

Հովի հետը խաղում են
Գանգուրները փափախին,
Նորան տեսնող աղջկերանը
Սրտիկները կըբաբախին...

Գ

Իսկ ամուսին ամբողջ օր
Քարշ է գալիս բազարում,
Շահի — բիստի որսալեն
Նա երբեք չէ՞ բեզարում:

Ծանոթ և թե անծանոթ,
Ամենի մոտ թեքվում է,
Բոլորին գլուխ է տալիս,
Քաղցր լեզվով խոսում է:

Քարոզում է ճշմարտություն,
Անկեղծություն է խրատում,
Խաբելն և կողոպտել
Նա ատում է և ատում:

Բարպաշտ է պարոնը,
Վախում է նա սրբերից
Եվ առանց խաչ հանելու
Չէ՞ անցնում ժամի դռնից:

Երբ նորա սուր մանգաղին
Հաջող հունձք էր պատահած,
Մոռանում է սուրբերը,
Ճշմարտություն և աստված:

Նա քերթում է յուր զոհը,
Թեև աղքատ, աննշան,
Իսկ ամբոխը պատվում է
Նորա զույգ շքանշան:

Եվ այդպիսով հաստացավ

Նորա փորը, քսակը,
Քառասուն տարումը ստացավ
Նինոյի թարմ պսակը:

Իսկ Նինոն նորա համար
Էր մի փայլուն կարասի,
Որ լոկ պարծանքի համար
Մարդ յուր տնում կըդարսի:

Նա անձնական յուր սերը
Այլ զվարճության էր տված.
(Այդ գաղտնիք է, թո՛ղ մնա,
Որ գիտե միայն աստված):

Բայց կատարյալ մի Սոդոմ
Էր նորա ողջ մաղազան,
. . . . . .

Երեկոյան խանութից
Ուղղակի տուն չէր գալիս,
Նա գնում էր կլուբում
Հոգսերը թափ էր տալիս:

Իմանում էր նորանոր
Նա համբավներ զանազան, —
Ո՞ւմ ծախվում էր աճրթով
Էժան գնով մաղազան:

Ի՞նչ են տալիս կապալով,
Եվ կամ ո՞վ է մուշտարին,
Ո՞վ աշխատեց, ո՞վ վատնեց
Փոդրաթի մեջ այն տարին:

Եվ մի կապեկով հերթը,
Մինչ կես-գիշեր այնտեղում,
Հոգսը ցրվելու համար
Թուղթ կամ նարդի էր խաղում:

Դ

Յուր տանումը նույն գիշեր
Նինոն տալիս էր վեչեր,
Պառավք խաղում են լոտո,
Պար են գալիս ջեհիլներ:

Հագած թավիշ և բեհեզ,
Եվ ժապավեն գույնզգույն,
Որպես նախշուն թիթեռնիկ,
Թռվռում է մեր Նինոն:

Քաղցրիկ-մաղցրիկ խոսում է,
Նա ժպտում է, ծիծաղում,
Մանկահասակ հյուրերից
Միրո վարդեր է քաղում...

Մերթ դաշնամուրի վերա
Նորա մատներ վազում են,
Ծափահարների գովասանքն
Անուշ ձայնին սազում են:

Մերթ վալսի խռովության մեջ
Պարում է որպես մրրիկ,
Անմման է հասակը,
Շարժվածքը՝ խիստ գեղեցիկ:

Երբ նստել է նա հոգնած,
Որպես մի կուռք կամ արձան,
Երկրպագու տղերքից
Բոլորած է յուր շրջան:

Ծառաները ձեռքներին
Արծաթի մատուցարան,
Ներս են բերում, դուրս տանում
Քաղցրավենիք զանազան:

Դահլիճի մեջ տիրում է
Անուշ զրույց, կորուխում,
Եռ են գալիս կրքերը,
Սեր և հրճվանք է բխում:

Հյուրերի մեջ կար մինն,
Որ բոլորից առավել
Մեր Նինոյի խելքն ու միտք,
Նորա սիրտն էր գրավել:

Դա էր վայելչահասակ
Մի նորահարս չինովնիկ,
Շարժվածքով համարձակ,
Լեզուն՝ քաղցր, գեղեցիկ:

Ե

Վաղ-առավոտ ամուսինն
Զարթնում է ուղիղ յոթին,
Թե է խմում կծովի,
Գնում դեպ՛ գործը խանութին:

Բայց Նինոն յուր սենյակում
Քաղցր քնով է պառկած,
Որովհետև գիշերը
Չափից դուրս էր նա հոգնած:

Նա զարթնում է միշտ տասին
(Տիկինը ճիշտ էր այդ մասին)
Աղախին և ծառաներ
Պատրաստ են յուր սպասին:

Յուր երեխոց կրթությամբ
Դա դարձյալ հոգս է տանում,
Եվ ճիշտ մանկավարժության (??)
Մեթոդին է հետևում:

Երբեք չընխոսել հայերեն
Պատվիրեց Կարպուշկային,
(Նա արգելած է որդուն
Կարապետ անուն տային):

Հորը կոչել՝ պապաշա,
Մորը կոչել՝ մամաշա,
Իսկ փոքրիկ աղջկան՝
Ո՛չ Մարիամ, այլ Մաշա:

Առավոտյան «Հայր մեր»
Միշտ օտար լեզվով կարդալ,
Տոն օրերին մորը հետ
Հայ եկեղեցին չե՛րթալ:

Եվ դետսկի սադումը
Փայտե ձիով արշավել,
Օտարուհի մադամեն
Տուդի-սուդի սովորել;

Տնտեսական գործերին
Նա դարձյալ հոգս է տանում,
Նոր — մոդնի տարազների

Ժուռնալներ է ստանում:

Ֆրանսուհի դերձակը
Խիստ շուտ-շուտ է հայտնվում,
Տիկնոջ կրթված ճաշակը
Նա գովում է և հարգում:

Թեև նա յուր կյանքում
Խոհանոց ոտք չէ կոխում,
Բայց ուտելյաց տեսակը
Բազմացնում է և փոխում:

Նա ապրում է խիստ շքով
Եվ շատ գոհ է յուր բախտից,
Մի ցավ նորան տանջում է,
Ցավն ամուսնի դարդերից...

«Այն բազարի կատվին»
Խրված, կորած փողոցում,
Որո ամբողջ մարմնից
Միթկալի հոտ էր փչում:

Ուղիղն ասած, մեծ ցավ է
Պանսիոնումը ուսյալ,
Նովոմոդնի բարիշնին
Կուպեց մի մարդ ունենալ...

Զ

Ժամը զարկեց տասնևմեկ.
Մեր տիկինը քնքշիկ,
Խմեց թեյը պատվական,
Վայելեց նախաճաշիկ:

Այնուհետև քանի ժամ,
Սիրուն Նինոն պճնասեր,
Հայելուց չէ հեռանում,
Սանրում է յուր մազեր:

Օծանվում է յուղերով,
Քսքսվում է դեղերով,
Զարդարում է յուր անձը
Արվեստական դեղերով:

Դեմքը կոկած շպարով,

Զգած նրբիկ երեսկալ,
Սկսում է բուլվարով,
Նազ նազելով թրև գալ:

Փքված դմակը ցից արած,
Ետքից քարշ տալով քղանց,
Ավելում է սալատակ,
Փոշին թա՛նձր է չափազանց:

Ագահ աչքով անդադար
Խիստ նայում է աջ ու ձախ,
Գուցե նորան ռաստ գար
Եվ թևքիցը ընկներ կախ:

Նա գտավ յուր իդեալ —
Մի նորահաս պատանի,
(Մարդկայնությունը թողյալ)
Ամեն գործում պիտանի...

Բայց ո՞վ ունի իրավունք
Ճաշակը բռնաբարել,
Սիրահարված մի գլխին
Զուր խրատներ համբարել:

Նորա հետ քանի պտույտ
Շուռ է տալիս բուլվարով:
Անցավ կեսօր: Բայց ի՜նչ փույթ,
Նա զբաղված է յուր ընկերով:

Սիրուն, քաղցրիկ խոսքերով
Տաքացած է մեր տիկին,
Ուխտ ուխտեցին երկուքով,
Երդմամբ կրկին և կրկին:

Գաղտնի դաշինքը կռեցին:
Գո՛հ և ուրախ է Նինոն:
«Ֆայտո՛ն, այուդա, ֆայտո՛ն»,
Նոքա հանկարծ գոռացին:

Կառք է նստում փառավոր
Մեր տիկինն ուխտավոր,
Նորա հերոսն յուր կողքին
Տեղ է բռնել բախտավոր:

Հեռու, դեպի Մուշտայիդ

Չափեն երկար ճանապարհ,
Բայց ինչո՞ւ իջան կառքից,
Այդ սատանան է խաբար:

Է

Տուն է դառնում նա հոգնած,
Ճաշից անց է երեք ժամ.
Վաղուց անուշ համեմած
Սպասում է ճոխ սեղան:

Ախորժակը խիստ գուլ է
Մեր տիկնոջը քնքշիկ,
Ու մարմինը խիստ թուլ է,
Չէ վայելում յուր ճաշիկ:

Նորա սիրտն ու ախորժակ
Յուր իդեալն է տարել,
Զուր բարկանում պովարին
Ճաշը վատ է պատրաստել:

Երկար այնպես խռոված,
Նա տանջում է, մեռանո՛ւմ,
Աֆիցերի պատկերը
Աչքիցը չէ հեռանում:

Աշխատում է գե՛թ քնով
Հոգսը թափել իրանից,
Բայց Մորփեոս խեթ աչքով
Խույս է տալիս նորանից:

Մինչ տիկինը, զմայլված
Վրդովմանց մեջ հոգեկան,
Մոռացել էր յուր անձը,
Տուն, ընտանիք, շրջական:

Խորոված ներքին հարկում
Ախորժ հոտով բուրում էր,
Բաժակները չրկչրկում,
Օսեթուհին պարում էր:

Երգ են երգում ծափ տալով,
Ծառաներն իմերել,
Պար են գալիս, հուփ տալով
Աղախնյաց մեջքն անարգել:

Փոքրիկ Կարպուշկան, Մաշան,
Թողին խաղը պարտիզում,
Ծառաների թամաշան
Նոքա տեսնել են ուզում:

Ծափ է տալիս Կարպուշկան,
Մաշան խիստ ծիծաղում է,
Օսեթուհին լեզգինկան
Հիանալի՛ խաղում է:

Այդ բաքոյան հանդեսեն
Նինոյի զավակները —
Սովորում են խիստ շատ բան
— Այն անմեղ գառնուկները...

Ը

Սույն միջոցին Աղալոն
Թեյ էր դարսում մի ղութում,
(Դա Նինոյի այրիկն էր)
Գործում էր յուր խանութում:

Տխրամած էր այն ժամուն
Նորա դեմքը վայրենի,
Բարկությունից կատաղած
Էր որպես մի բորենի:

Մոռացել էր, կարծես թե,
Այնտեղ դրած յուր սեղան,
Որ ամեն օր տանիցը
Բերում էր պստիկ տղան:

Ըշտապ, ըշտապ, անհանգիստ,
Նա ապրանք էր համբարում,
Հրամայում էր թաքցնել
Յուրյանց ներքի ամբարում:

Բայց ի՞նչ գաղտնիք կար այնտեղ,
Չէ նպատակին մեր խնդիր,
Միայն օտարի անունով
Էր ամբարին վերնագիր:

Նույն րոպեին ներս մտավ
Նորա հին բարեկամը,

Նորա միակ մտերիմ՝
Մնանկացած Ցականը:

— Քեփդ վո՞ւնց է, Աղալո,
Ծեր Ցականը հարցրեց.
— Բանիրըս վատ է գնում... —
Աղալոն պատասխանեց:

— Ի՞նչ ես խոսում, գժվե՞լ ես, —
Հառաջ տարավ, Ցականը.
— Էգուց, էլօր, ո՞վ գիտե,
Կըփեչատեն իմ դուքանը...:

Թ

Մինչ զանգակը մեղմ ձայնով
Սրբարանի գագաթեն
Ավետում էր երեկոն,
Նինոն պառկած էր արդեն:

Սթափվում է նա իսկույն,
Նորա գունատ, թարմ թշեր
Ստանում են վարդի գույն:
Ինչպե՞ս վարել այս գիշեր:

Մի տեղ տալիս են վեչեր,
Մյուս տեղ՝ բալ է տնական,
Սանսուսիում կոնցերտ կա:
Մյուս տեղ տոն է մանկական:

Որտե՞ղ գնա մեր Նինոն,
Չըգիտե ինչ վճռել,
Եվ նույն ժամուն յուր տանում
Մի պարոնի է խոսք տվել:

Դժբախտաբար այն գիշեր
(Մեծ է արդեն այդ կորուստ)
Թատրոնում կա բենեֆիս,
Ներկայացնում են «Ֆաուստ»:

Նա, անհանգիստ տանջվելով,
Խիստ դժվար էր համբերում,
Հանկարծ իմերել ծառան
Մի տոմսակ է ներս բերում:

Բաց է անում տոմսակը,
Գրիչը նորան ծանոթ է,
«Կրուժոկում, իմ հրեշտակ,
Սպասում եմ այս րոպե»:

Լակոնական այն երկտող
Նորա սրտում ձգեց դող,
Որպես վառե քաջ զինվոր
Պատերազմի հնչող փող:

Զարդարվում է նա շքեղ,
Որպես մի նոր Սիրենա,
Նորա դեմքի շինծու գեղ,
Ով որ տեսնե՝ սիրե նա:

Կառք է նստում նա շուտով
Դիմել դեպ՛ յուր նպատակ,
Սլանում են նժույգներ;
Որոտում է սալատակ:

Գնա՛, կորչե՛, գլուխ քարին.
Նաև յուր խենթ իդեալ,
Հայի կյանքում նոր ախտ է
Էկտի տիկին, վեչեր, բալ...

Բայց դոցանից են հեռու,
Որպես երկինքն երկրից,
Տիկնայք հինգերորդ դարու
Եվ Եղիշեն ոգելից...

Ժ

Անցավ քանի մի ամիս:
Հրապարակական աճրդով
Ծախվում էր Աղալոյի
Կայքն, աշխատած քրտինքով...

Մեռած, վշտահար դեմքով՝
Կանգնած էր քաղաքացին,
Որո երեխայք շուտով
Կարոտ են պատառ հացին:

Իսկ ամբոխի դատմունքն
Էր զույնզգույն, զանազան,
Ամեն մինը նոցանից

Խոսում էր այդպիսի բան. —

«Յուր մեղքերի պատճառավ
Նորան պատժեց աստված.
Նորա գրոշը հազար
Մարդի արնով է ներկված»:

Մյուսը՝ — Հարամ փողի վերջն
Ահա՜, այդպես է լինում,
Քանզի քամու բերածն՝
Էլի քամին է տանում:

— Խեղճի տունն — այլն ասաց.
Քանդեց իրա կնիկը.
Ի՞նչ միր բանն է, ախպեր ջան,
Նովոմոդնիյ աղջիկը...:
1872 — Թիֆլիս

ՍՈՖԻ

Հայոց աղջի՜կ, հայոց աղջի՜կ, գնա՜ առաջ, մի՜ վախիլ,
Բլեդնիյ դեմքդ, շինծու խոսքդ ովի՞ն ասես չեն խաբիլ,
Բայց մի՜ թողնիլ դու ժորժ Սանդիս, իդեալիդ մ’ուրանալ,
Թե ոչ ջահիլ, գոնե ծերուկ կառնա քեզ Ռուս գեներալ:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

Ա

Գեղեցիկ է իմ Սոֆին,
Քաղցրիկ, ուրախ և սիրուն,
Նորան արդեն տասն և ութ
Ծաղկում է դեռ նոր գարուն:

Իշխանական արյունից
Շառավիղ է իմ Սոֆին,
Մեծատոհմիկ ծնողաց
Միակ զավակ է անգին:

Նա դեռ նոր է ազատվել
Ինստիտուտի հագուստից,
Նոր մտել է լայն աշխարհ,
Որպես թռչնիկ վանդակից:

Կրթությունն արտաքին

Խիստ ազնիվ է, վայելուչ,
Վարվողություն՝ շնորհալի,
Իսկ խոսվածքը՝ սրտառուչ:

Լավ ածում է դաշնամուր
Եվ սիրում է մուզիկա,
Գիտե պարի ողջ ձևեր,
Մինչև վրաց լեզգինկա:

Հիանալի ձայն ունի,
Նա սիրում է օպերա,
Երբ երգում է ռոմանս՝
Ծռմռում է հոնքերը:

Ատում է յուր երկրի
Հագուստի ձևն անպիտան,
Բարեկիրթ է յուր ճաշակ...
Նա պաշտում է պերճ մոդան:

Նա գիտե քանի լեզվի
Եվ կարդալը և գրել,
Բայց հայերե՞ն. — է՛ հ արժե՞
Միթե նորան սովորել...

Նորա համար հայ ազգը,
Հայոց կրոն և լեզու՝
Են խիստ անարգ նախատինք,
Որից փախչեր միշտ հեռու:

Նա չէ գնում հայոց ժամ,
Զի շարական չէ սիրում,
Այլև հայոց խունկի հոտ
Նորան վատ է միշտ բուրում...

Բ

Հայրն էր հին ծառայող,
Չը կաշառվող, ջերմեռանդ (?)
Հավատարիմ յուր գործին,
Մեծավորին հնազանդ:

Իսկ պատահած միջոցին
Նա երբեք չէր արգելում՝
(Ռամկորեն ասում են)
Գցել յուր ետքի ջիբում...

Եվ այդպեսով վաստակեց
Փառավոր տուն, մեծ գումար,
Յուր ընտանյացը թողեց
Ապրուստ սև օրվա համար:

Նորա կինն յուր ժամուն
Էր գեղեցիկ բավական,
Հյուրերի հետ զվարճասեր,
Ծանոթներին դուրեկան:

Եվ մանավանդ հաճելի
Ամուսնի մեծավորին,
Շողոքորթում էր սիրտը
Ամուրի գեներալին...

Դորանով հարթեց ուղին
Մարդու հառաջադիմության,
Որով ստացավ աստիճան,
Բարձր տեղ ծառայության:

Խիստ ընդունակ էր կինը
Կրթված աշխարհի պահանջին,
Կառավարում էր տունը՝
Պատշաճավոր, ըստ կարգին. —

Մաքուր հագնված ծառաներ,
Աղախին, սպասավոր,
Շքեղ և թանկ կարասիք,
Սեղանը՝ ճոխ, փառավոր:

Տարին մի քանի անգամ
Նոքա տալիս են խնջույք,
Դաշնամուրը հնչում է,
Եռ են գալիս սեր, հաճույք:

Այդ բոլոր հանդեսների
Պսակը և թագուհին՝
Էր միշտ նոցա աղջիկը —
Ուրախ, նազելի Սոֆին:

Դ

Կես-գիշեր էր: Աշխարհին
Գիրկ էր ածել քաղցրիկ քուն,

Եվ ընդհանուր տիրում էր
Խոր, սրբազան լռություն:

Իսկ լուսինը, խիստ ուրախ
Երկնքի հարսը, նազելով,
Ամպերի պարզ օվկիանում
Լեղ էր տալիս խայտալով:

Խորհրդական այդ ժամուն,
Իմ Սոֆին, մորից թաքուն,
Ախտաբորբոք հսկում է,
Չէ՞ վայելում անուշ քուն:

Վաղուց մի քանի հատոր
Կան նորա բարձի տակին, —
Բաբարիկին, Տուրգենև,
Հայնե, Շիլլեր և Պուշկին:

Լուսամուտի մոտ նստած,
Յուր սենյակում միայնակ,
Նա կարդում է ռոման
Լուսնի լուսով, անճրագ:

Եվ կուսական սրտումը
Նոր-նոր կրքեր են խաղում,
Կախարդական տողերեն
Բյուր հրապուրանք է քաղում...

Անսպառ այդ աղբյուրեն՝
Սրտի ծարավը բորբոքյալ
Զովացնում է, յուր գլխում
Ստեղծում է իդեալ:

Այդ ցնորքը նորա մեջ
Ստանում է կերպարան,
Մի գաղտնի հուր սրտի մեջ
Բորբոքում է միշտ նորան:

Քնած սերը զերթ արծիվ
Ստանում է արթնություն,
Յուր կարիքն անհրաժեշտ
Պահանջում է բնություն...

Գրկում է յուր իդեալ,
Նա կոչում է հիացած, —

«Քեզ եմ զոհվում, ով սուրբ սեր,
Դո՛ւ ես այժմ իմ աստված»:

Գ

Մեծահանդես էր խիստ բալ.
Լուսով վառվում է դահլիճ,
Նորա հարուստ զարդարանք
Են ճոխ, շքեղ, գրավիչ:

Եռ է գալիս բազմություն,
Եվ հագուստներ խըշխըշուն —
Մետաքս, շալ, ոսկի, արծաթ՝
Ալեկոծվում են ողջույն:

Հիանալի զարդարված,
Որպես մանուկ թագուհի,
Հայտնվում է սիգաճեմ
Դուստրը Հայոց աշխարհի. —

Ներս է մտնում իմ Սոֆին,
Ձեռքում բռնած հովահար,
Նորա կուրծք ու բազուկներ
Փայլում են որպես զոհար:

Շփոթվում է բազմություն,
Շըշնջում են մեղմ ձայներ, —
«Գեղեցկության դիցուհին
Եկավ ահա՛, եղբայրներ»:

Վսեմապանծ նազելով
Ընթանում է իմ Սոֆին,
Նորա առջև թափվում են
Սիրո վարդեր կաթոգին:

Ծեր և մանուկ, պատանի,
Լինեն նորան երկրպագ,
Եվ քաղցրախոս բառերով
Ողջունում են իմ հրեշտակ:

Բայց նա հպարտ և անփույթ
Շրջան տվեց ընթացքին,
Տարփածուի սեթևեթ
Չ’արժեց նորա հայացքին:

Ի՛նչ մեծ բախտ է տղամարդին,
Նորա դեմքին խնդամիտ,
Որսալ զոնյա մի թեթև,
Սիրաբարբառ, թարմ ժպիտ:

Զո՛ւր վրդովմունք, պարոններ,
Զո՛ւր է ցավը ձեզ տանջում,
Զի մեծասիրտ իմ Սոֆին
Ազնիվ զոհ է պահանջում:

Ե

Փոթորկվում է պարահանդես,
Երբ հնչում է մուզիկան.
Սկսվում են կաքավներ
Վալս, պոլկա և մազուրկան...

Մոտենում է մի հարուստ
Հայ տղամարդ, ազնվաբար
Գլուխ տալով իմ Սոֆուն,
Խնդրեց յուր հետ պարել պար:

Հրաժարվում է իմ Սոֆին,
Հայկական դեմք հարստին
Չը դյուր եկավ գեղասեր
Ճաշակով օրիորդին:

Մոտենում է մի ասպետ,
Ուսին դրած էպոլետ,
Կուրծքը պատած օրդենով,
Պարել կամեր նորա հետ:

Հրաժարվում է իմ Սոֆին՝
Վայրենի դեմք զինվորին՝
Օրիորդին փափկասիրտ
Սարսափ և զզվանք բերին:

Մոտենում է շիկահեր,
Կապտաչյա երիտասարդ,
Հասակը՝ նուրբ, վայելուչ,
Դեմքը՝ քնքուշ, որպես վարդ:

Կանգնում է իմ Սոֆին:
(Փոխվեց պարի եղանակ):
Նոքա, միմյանց փաթաթված,

Պտրտվում են զերթ թռչնակ:

Քսքսվում են ... շրփշրփվում ...
Կուսի սրտումը հանկարծ
Վառվեց վաղուց թաքուցած
Միրո էլեկտրական կայծ...

Դադարեցավ և այդ պար,
Հոգնած նստեց իմ Սոֆին:
Յուր պարընկեր գեղեցիկ
Մինակ կանգնած էր մոտին:

Քանի զրույց դյութական
Կնքեց ուխտ նոցա միջին.
«Մեք կը տեսնվենք հետո»
Եղավ նոցա խոսք վերջին:

Զ

Քանի մի օրից հետո,
Իմ Սոֆին յուրյանց տանում,
Շաբաթը քանի անգամ.
Մի նոր հյուր էր ընդունում:

Օտարազգի էր հյուրը՝
Ուրախ, գրավիչ դեմքով,
Անունը՝ Պյոտր Իվանիչ,
Տոհմանունը՝ Պուստյակով:

Որպես մեղր և շաքար
Բառեր թափվում են բերնից,
Նա խոսում է անդադար,
Չես կշտանում խոսքերից:

Նա գիտե հարյուրավոր
Ծիծաղելի առակներ,
Նա գիտե հազարավոր
Ֆրանսիական առածներ:

Նա ածում է, նա երգում է,
Ներկայացնում է և պարում է,
Ծաղրական պատկերներ
Խազիզում, նկարում է:

Շարադրում է կուպլետներ,

Նոցա ամեն մի տողեր
Արտասանում են կատակ,
Կոշտ սրախոսություն և սեր:

Երբեմն նա ծանր էր,
Որպես մտածող, գիտնական,
Չերնիշևսկի, Դոբրոլյոլբով՝
Են խոսքերի առարկան:

Խոսում էր նա Դարվինից,
Թեև անհետևաբար,
Եվ հերքում էր բնավին
Ազգայնության գաղափար:

Նորա մոտ արժեք չուներ
Բարոյական սրբություն,
Նիգիլիստ էր պարոնը,
Հերքում էր ամուսնություն:

Նորա բոլոր խոսքերին
Սոֆին շատ էր համակրում,
Որպես առատ անձրևը
Ծարավ, ցամաք երկրում:

Է

Զվարճասեր բազմությամբ
Միախմբվում է թատրոն,
Ուր քարոզվում էր բեմեն
Մեղպոմնի վսեմ կրոն:

Օթյակ, աթոռ, բազկաթոռ.
Բռնած են հանդիսականք,
Պայծառ, ուրախ շնչում է
Քաղաքացու հանգիստ կյանք:

Հիանալի զուգված է
Խումբը գեղեցիկ սեռի,
Մի օթյակում նստած է
Սոֆին բեմից ոչ հեռի:

Հնչվում է մուզիկան,
Երգում է իտալուհին,
Ներկայացնում են Մովսես,
Դարձը ուխտյալ աշխարհին:

Բայց դեպի բեմ իմ Սոֆին
Չէ՛, երբեք չէ՛ ուշադիր,
Նա ունի յուր նպատակ,
Այլ է սրտին յուր խնդիր:

Երկփողյա յուր դիտակ
Դրած է նա աչքերուն,
Նկատում է՝ տղերքից
Ո՛րն է տգեղ, ո՞րը սիրուն:

Հանկարծ գտավ իմ Սոֆին
Նազելին յուր ծանոթ դեմք,
Դա էր նորա ցանկալին,
Եթե փոքր-ինչ պարզ ասենք:

Սիրտը թնդաց, բորբոքեց,
Էլ չըսպասեց մինչ վախճան,
Նա դուրս եկավ օթյակից,
Գտավ սիրո առարկան:

Թատրոնական սրահում
Ճեմում էին միասին,
Բայց թե ի՞նչ էին խոսում,
Լավ է լռել այդ մասին...

Միայն Սոֆու ականջին
Նա շշնջեց քանի բառ՝ —
«Ձեր պարտեզում այս գիշեր
Ինձ կըգտնես անպատճառ»:

Ը

Հիանալի զով գիշեր
Պարգևել էր այն ամառ,
Պայծառ երկնքի ողջ աստղեր
Լույս կը տային վառիվառ:

Գեղազվարճ և ուրախ
Ներկայանար բնություն,
Իսկ պարտեզում, թարմ ծաղկանց
Տիրեր ամպարհոտություն:

Բարձր, բարձր լսվում էր
Սոխակի երգի հնչյուն,

Նիրհած տերևը շարժում էր
Մեղմիկ հովի սոսափյուն:

Ծաղկազարդ ճեմելիքներով,
Որպես ցնորված հրեշտակ,
Թափառում էր իմ Սոֆին,
Խիստ անհամբեր, միայնակ:

Հանկարծ լսեց նա թխկոց,
Շուտ մոտ վազեց վրդոված,
Տեսավ, մինը լուռ ու մունջ
Ցանկապատեն իջավ ցած:

«Սոֆի՛». հնչեց մեղմիկ ձայն:
«Ա՛խ, Պյոտր». եղավ պատասխան:
Նոքա շուտով մեկմեկու
Ուրախ-ուրախ մոտեցան:

Ի՞նչ գրիչ այն առաջին
Կարե նկարել բոպեն,
Երբ որ սիրող, սիրուհին՝
Գաղտնի միմյանց կը հանդիպեն:

Թե սիրել ես, ընթերցող,
Կարես զգալ ինքնին...
Ինսարովի խոսքերը
Հանկարծ ասաց պատանին՝

— Դու, առաջի աստուծո,
Հրեշտակների առաջն,
Իմ կինն ես պատվավոր,
Ես քո այր այսուհետև...

Պսակող մի քահանա
Այդ խոստման չեղավ ներկա,
Միայն աստեղք և լուսին
Երկնքեն դարձան վկա:
Անցան օրեր, ամիսներ,
Անցավ ամբողջ մի տարի,
Սահում է կյանքը Սոֆու
Ուրախ, անհոգ և բարի:

Նորա ծնողք անհանգիստ
Խորհում էի՛ն միասին,
Արժանավոր փեսայի

Սոֆուն առնել ամուսին:

Բայց փեսաներ խմբովին
Դիմում էին ինքնին,
Ո՞վ չէր ուզի ունենալ
Սոֆու նման սիրուն կին:

Երբեմն դիմեր հարուստ,
Հայազգի վաճառական,
Պատվավոր քաղաքացի,
Ոչ ազնիվ արմատական:

— Է՛հ. մուժիկի՞ կին դառնալ,
(Մեղք է անգամ մտածել),
Իշխանական յուր արյուն
Ապականել ու պղծել...

Երբեմն դիմեր նորահաս
Վրացի սիրուն թավադ,
Ազնվական հին տոհմից,
Թեև թեթև, դյուրհավատ:

— Դա էլ գլխում խելք չունի,
Ոչ գրպանումը կոպեկ փող,
Կախեթումը գրավ դրած
Ունի քանի կտոր հող:

Երբեմն դիմեր հաշտարար
Սուդիաներից քաղաքին,
Նադրվորնիյ սովետնիկ,
Աննա խաչը շլինքին:

Եվ դորան չէր նա հավան,
Զի տգեղ էր կերպարան.
Քիթը՝ կարճ, աչքերը՝ ծուռ,
Սաստիկ մեծ էր և բերան:

Մի խոսքով, ամեն մինին
Մի-մի արատ էր դնում,
Որովհետև յուր սիրտը
Ուրիշին էր պատկանում:

Ժ

Դեռ ուսանող էր Պյոտրը,

Ծնողքը մտան գերեզման.
Մտածում էր այնուհետև
Նա գնալ արտասահման:

Ֆոխտը, Բոկլը և Դարվին
Մի լավ ուսումնասիրել,
Գերմանական գիտությամբ
Յուր մտքերը զարգացնել:

Հանկարծ կարծես դև մտավ
Նորա անփորձ սրտումը,
Մոլորվեցավ մրրկալի
Մայրաքաղաքյան կյանքումը:

Վատնելով առողջություն,
Պատիվ, արծաթ, համարում,
Նա դատարկ գրպաններով
Հայտնվեցավ Կավկազում:

Նորա գրավիչ ձևերը,
Կերպարանքն և լեզուն,
Սալոններում մուտք տվին
Համարյա ողջ Թիֆլիզում:

Որտեղ տալիս են խնջույք,
Ուր տոն է ընտանեկան,
Նա էր աղջկերանց հերոսը,
Նոցա ցնորքի առարկան:

Նա ամեն ծակ մտնում է՝
Բալ, կոնցերտ, մասկարադ,
Որքա՛ն խելքից հանում է
Գլուխներ անմեղ, անարատ...

Մեծ էր նորա ներգործող
Բարոյական զորություն,
Նորան պաշտում են որպես կուռք,
Որպես նոր հեղինակություն:

Հատուկտոր ֆրազներ՝
Սերտած, մոդնի խոսքերուն,
Համարում են այեթներ
Բարձր, վսեմ մտքերուն:

Նա հերքում է, նա մերժում է

Օրենք և ճշմարտություն,
Նա փշրում է և ջարդում է
Ուսում, արհեստ, գիտություն:

ԺԱ

Պարզամիտ Սոֆու վերա
Մեծ էր նորա ազդեցություն.
Նա եղավ լուռ, մտածող,
Փոխեց կյանքի կացություն:

Կարճացրուց մազերը,
Սկսեց չրսանրվել,
Արհամարհել ամեն բան,
Եվ հասարակ հագնվել:

Եվ առանց պառավ տատին
Փողոցները չափչրփել,
Իվանովի գրքատունը
Ստեպ-ստեպ հաճախել:

Գոտևորված էր Սոֆին
Սև և մաշկյա քամարով,
Նա գիտության նահատակ
Ձևանում էր նորանով:

Համալսարանից թերուս
Արտաքսածի կացարան՝
Գիշերային ժամերի՝
Էր նորա զվարճարան:

Ուր բաժակները զեղուն
Քամում էին երգելով,
Ուր ջութակը չէր լռում,
Կյանքն ուրախ էր, անխռով:

Ուր ազատ հերոսուհին
Դրոշմում էր խիստ սիրով՝
Յուր կուսական թշերը
Կոմունական համբուրով:

Բայց հայրենի աշխարհի
Կյանքն, ապրուստ և շրջան,
Տաղտկալի էր խիստ նորան
Մինչև վերջին աստիճան:

Նորա սիրտը ձգում էր
Մի գաղտնի ցանկություն,
Դեպի Ժենև և Ցյուրիխ, —
Ալպիների բնություն:

Բայց թե ի՞նչ էր նպատակ,
Նա ինքն էլ չըգիտեր,
Միայն Ցյուրիխ գնալը
Այն օրերում մոդա էր:

ԺԲ

Անցա՛ն, անցա՛ն տարիներ,
Անցա՛ն տարիք կրկնակի,
Երսուն ամին կանգնած էր
Միջօրեում հասակի...

Եվ ժամանակն անգութ
Յուր հոսանքով աննկատ՝
Քաղում էր նորա դեմքից
Թարմ վարդերը անընդհատ:

Հնանո՛ւմ էր իմ Սոֆին...
Գեղեցկությունը, ավա՛ղ,
Օրըստօրե կորչում էր
Սիրուն դեմքիցը չքնաղ:

Չքացել էր մեր Պյոտրը, —
Սոֆու անգութ հերոսը,
Կլուբների դյուցազնը,
Գիտության մարտիրոսը...??

Տանիլ տվեց մեծ գումար,
Նա զզվեցավ Թիֆլիզից,
Պարտատիրոջ երկյուղեն
Անհետացավ Կավկազից...

Փեսաներ այնուհետև
Սկսան ուշ հայտնվել,
Եվ նազելի իմ Սոֆուն
Պակաս, ստոր գին դնել:

Դիմողները միշտ էին
Գռեհիկ և ցած մարդիկ,

Եվ ո՛չ թավադ, հաշտարար,
Կամ նադվորնիյ սովետնիկ:

«Հայի խարջ չէ», ասում էր
Պատվավոր քաղաքացին,
«Էլ պետքը չէ», ասում էր
Կախեթացի վրացին:

«Լրպզտած է», ասում էր
Դատավորը հաշտարար,
Խեղճ Սոֆուն ամեն մինը
Բիծ էր դնում անհամար...

Խոնարհեցա՛վ և ընկա՛վ
Հպարտ սիրտը կուսական,
Սի՛րտը խաբված սերիցը
Կոտրած, հանգած, անկենդան...

Հաշտվեցավ բախտի հետ
Այնուհետև խե՛ղճ Սոֆին,
Աղքատ, ծերուկ չինովնիկ
Ընտրեց յուրյան ամուսին:

Հունադավան քահանան
Կատարեց յուր պսակը,
Բայց մոռանալ չէր կարող
Նա Պյոտրի հիշատակը...

ՍԱՌԱ

Մանկական օրեր, մանկական հասակ,
Կյանքիս դուք գարնան ծաղկազարդ պսակ,
Ա՛խ, քանի՛ ուրախ և քանի՛ տրտում
Դուք հիշողությունք թողիք իմ սրտում:

Մանկական օրեր, օրեր թանկագին,
Երբ միտս եք գալիս, կրկին և կրկին
Վառվում են սրտիս մարած կայծերը,
Եվ բորբոքվում են իմ հին վերքերը...

Պանդուխտ եմ այժմ ես հեռու երկրում,
Հայրենյաց կարոտն սիրտս է տոչորում,
Այստեղ ամեն ինչ ինձ խորթ են, օտար,
Չեն լինում նոքա հոգուս մըխիթար:

Ես շատ տանջվեցա... հոգնեցա իսպառ...
Այժմ հաշտվում եմ բախտիս հետ թշվառ,
Դեպ քեզ, Պարսկաստան, հայրենիք անգին,
Տարագիր որդիդ դառնում է կըրկին:

Բա՜ց արա ինձի քո գիրկն ու ծոցը,
Դո՜ւ ես մանկական իմ օրորոցը,
Քա՛ղցր է պանդխտին յուր հայրենիքը,
Նորա խրճիթներն և ուռենիքը...

Բայց ի՞նչ եմ տեսնում... խոցվում է հոգիս...
Ահա՜ պատկերը խեղճ հայրենիքիս՝
Յուր մեռելային դեմքով գունաթափ՝
Երևնում է ինձ, բերում է սարսափ...

Նորա հարստությունք՝ անթիվ են, անբավ,
Իսկ վայելչությունք՝ պակաս են, սակավ.
Նորա դաշտերի մեջ՝ անապատ, տխուր —
Որքան քրտինքներ թափվում են իզուր...

Նորա իշխանները և իշխանազունը
Արյունոտ թրով կ'չափեն իրավունք,
Զոհում են յուրյանց կամքին — հաճույքին
Արյունոտ պտուղը աշխատող ձեռքին:

Իսկ խարդախ մոլլան — կրոնքի ջատագով —
Ձեղծում է շարյաթն12 ինքնահաճ կերպով,
Օրենքն և կանոն մարգարեական
Են նորա շահուց զորավոր ուռկան:

Եվ կույր ամբոխը խավար պարսկին,
Թըմրած ղորանի ստվերի տակին,
Ջեննաթի13 երազն է նորան հրապուրում,
Կյանքի պետքերը նա չէ պըտրում:

Եվ հարեմական14 փակված վանդակում,
Որքան գեղուհիք հալվում են, մաշվում,
Կոպիտ ամուսնի բռնակալ կամքը
Է նոցա սերը և նոցա կյանքը:

Դեռ համարվում է հայըն պիղծ հպատակ.
Պարսիկն երեսին զարկում է ապտակ,
Գըլուխը ծըռած, հայը լուռ ու մունջ,
Յուր տունն է մըտնում, թաքցնելով տրտունջ:

Նա տեր չէ երբեք անբախտ յուր գլխին,
Տեր չէ՛ կայքերի, յուր խեղճ երեխին,
Չէ՛ կարող լինել իրավանց պաշտպան,
Մունջին չէ՛ տրված խոսելու մի բան...

Ձիգ տարիներով, երկար և երկար,
Կուրծքիս միջումն եփված անդադար,
Յուր լի սև մաղձով թույնը դառնագին
Թափվում է սիրտս: Ա՛խ, զզվանք կրկին...

Բայց ինչը ձրգեց ինձի վերստին
Դեպի այդ Սոդոմն մարդկային ազգին.
Մի՞թե հայրենական օջախի միջում
Կուրծքըս ավելի ազա՛տ է շընչում:

Ո՛չ: Թո՛ղ ես էլ տանջվիմ իմ ազգայնոց հետ:
Ամբոխը դեռևս խավար է, տրգետ,
Գուցե կարենամ ես նորանց օգնել,
Նոցա աչերից արտասուք սրրբել:

Բ

Ահա՛ հայրենի տընական իմ առջև,
Ուր վիճակված էր ինձ տեսնել արև,
Ուր կսովրեցնեին լրռել, համբերել,
Առանց տրտունջի նախատինք կրրել...

Ահա՛ ամրոցի հին ավերակը...
Մեր ախոռատունը... խոտի մարագը...
Որոց պատերի պատռած ճեղքերում
Ես խեղճ ճնճղուկի ձագն էի պրտրում:

Եվ ծրվծրվոցը ողորմելի ծրտին
Բերկրանք էր բերում մանկական սրտին:
Հիմի է՛լ եմ սարսափում... ահա՛ դպրոցը —
Փափուկ հասակիս ըսպանդանոցը:

Այդ դպրոցի մեջ գյուղի տիրացուն
Ուսուցանում էր ինձ «Խոնարհեցոն»15,
Գիշերը քնելիս «Եկեսցէ»16 կարդալ,
Եվ վաղ առավոտ միշտ ժամն երթալ:

Ահա՛ այն ծառը... Թրշվա՛ռ ուռենի.
Քեզ չե՛մ մոռացել, փրտած ծերունի,
Դու տալիս էիր իմ վարդապետիս

Միշտ դալար ճյուղեր ինձի պատժելիս...

Ահա՜ այն կտուրը, ուր իմ դայակը
Միշտ ցույց էր տալիս փայլուն լուսնյակը,
Եվ շատ հեքիաթներ՝ աստղերից, դևերից
Պատմում էր ինձի պառավը ոգելից:

Նա ասում էր ինձ, թե այդ լուսնյակը
Էր յուր մայրիկի միակ զավակը,
Նա երեխա էր շատ չար, անհանգիստ,
Երբեմն յուր մորը բարկացնում էր խիստ:

Մի օր մայրիկը հունցում էր խըմոր,
Տըղան գողացավ տաշտքիրը17 յուր մոր,
Մայրը բարկացավ, խմորոտ ձեռքով
Զարկեց երեսին զայրացած կրքով:

Եվ ամեն անգամ տեսնելով լուսին,
Այն մութ դրոշմը նորա երեսին
Հիշեցնում էր ինձ ապտակը յուր մոր,
Որո հետքերը դեռ մնում է մինչ այսօր:

Նույնպես ժըպտելով վազում է գետակը,
Նորա գույնզգույն, ավազուտ հատակը:
Կարծես զարդարած մանր ուլունքներով,
Փայլում է դարձյալ նույն հրապույրներով:

Սիրելի գետակ, հիշում ես և դուն,
Երբ ես, ամբողջ օր մոռցած հաց և տուն,
Քո ափերի մոտ ձուկն էի որսում,
Կամ նախշուն ծըտի հետքիցն էի վազում:

Իսկ երեկոյան թրջված, թաթախված՝
Տուն էի դառնում՝ ես սաստիկ հոգնած,
Ա՛խ, մայրիկս ինձ որքա՛ն ծեծում էր,
Յուր չար երեխին նա անիծո՛ւմ էր...
Ահա՜ և այգին... նույն ընկուզենին...
Նույն խնձորենին և ողկուզենին...
Ճանաչում եմ ձեզ, հին բարեկամներ,
Բայց դուք հիշո՞ւմ եք վաղեմի հաշիվներ...
Երբ գիշերային լռության պահուն,
Ես, այգեպանից գաղտնի և թաքուն,
Ցանկապատիցը գող կատվի նըման, —
Ներս էի սողում, որպես մի թուրքման18:

Ահա՛ քարշ տալով, գըզիր19 Սահակը
Ժողվում է խանի ձուն և վառյակը,
Դեռ կենդանի է այդ ավազակը,
Կրում է յուր ձեռքին դեռ նույն մահակը...
Ահա և չարչին20, այդ անպիտանը
Էլ բան չը թողեց գյուղացոց տանը,
Ինձ էլ ասում էր՝ ձու գողանամ տատից,
Քիշմիշ և մաստաք21 գընեմ նորանից:
Դեռ հորանջելիս գյուղի քահանան
Խաչակնքում է22: Ախորժ է նորան
Գերեզմանատան հաճախել ուղին,
Ուտել հոգեհաց, գրպանել փողին:

Դեռ թանձր քողով գեղեցիկ սեռը
Ծածուկ է պահում յուր վարդ թշերը,
Նա օտարի հետ բնավ խոսք չէ փոխում,
Մի մարդ տեսնելիս՝ քաշվում է, վախում:

Երբ որ կընիկը պանդուխտ ամուսնից
Նամակ է ստանում՝ օտար աշխարհից.
Նա ման է ածում մի գյուղից մյուս գյուղ
Եվ չէ գտանում ոչ մի ընթերցող:

Երբ որ մահամերձ դըրած է հիվանդ,
Կոչում է գյուղացին սրտով ջերմեռանդ,
Կամ յուր Նարեկով տըգետ տերտերին,
Կամ կախարդելու՝ խարդախ ջինդարին23:

Դարձյալ քաղցր է ինձ հյուրասեր շեմքը
Եվ իմ ազգայնոց անխարդախ դեմքը,
Ախ, այն դեմքի մեջ որքան պարզություն
Նկարեց փութով անմեղ բնություն:

Սիրելի են ինձ առարկայք բոլոր,
Որք հիշեցնում են իմ կյանքը մոլոր,
Այն կյանքը դարտակ՝ անհոգ մանկության,
Վատնած անօգուտ մեջ հիմարության,.,

Նույն դրացիքը կան առողջությամբ,
Ամեն ինչ մնացել՝ նույն ամբողջությամբ,
Ոչինչ չի փոխվել... Դեռ նույն դարևոր
Անշարժության մեջ ապրում են բոլոր...

Թե հսկայական խոր քնով ես քնեի
Եվ հարյուր տարուց հետո զարթնեի,

Իմ հայրենիքը նույն իսկ տղայական
Դրության մեջը ես կը տեսնեի:

Բոլորը նույնն է, ինչպես և առաջ,
Եվ մախմուր արտերն, և մարգերը կանաչ,
Միայն քո պատկերն ինձ չէ երևում,
Նազելի՛ Սառա, քույրիկդ իմ հոգուն:

Դու իմ մանկության քնքուշ բարեկամ,
Կար մի ժամանակ, երբ ես շատ անգամ
Անցուցանում էի անքուն գիշերներ,
Ինձ բաշխում էիր քաղցրիկ երազներ...

Դու խլեցիր ինձնից խաղերը մանկական,
Բոլոր բերկրությունքն իմ զվարճության,
Հանգստությունը խաղաղ իմ հոգուն
Ես զոհ բերեցի քո անմեղ սիրույն:

Թե այգին էի գնում, թե տանը նստում,
Թե թափառում էի ես արձակ դաշտում,
Թե գետի եզերքը տխուր, աննպատակ
Ման էի գալիս մի՛շտ, իմ հրեշտակ:

Պարզ աղբյուրների հայելվո միջում
Քո սիրուն պակտերն էի ես տեսնում,
Եվ կարմիր վարդի ալ թերթիկները
Նըկարում էին քո վառ թըշերը:

Եվ թռչունների ուրախ մեղեդիք
Լսեցնում էին քո ձայնիկը քաղցրիկ,
Շընչում էր զեփյուռ, տերևի սոսափյուն
Հնչեցնում էր քո սիրելի անուն...

Ա՛խ, անցած օրեր, օրեր թանկագին,
Ինչո՞ւ եք խռովում իմ սիրտը կրկին,
Խիստ դառն է ինձի նորից միտ բերել,
Թե որքա՛ն ես վաղ ըսկսա սիրել...

Գ

Բարեպաշտ ծնողաց աղջիկ էր Սառան,
Նորա քույրերը վաղօրոք մեռան,
Նա ուներ յուր մայր, փոքրիկ մի եղբայր,
Եվ ժիր, գործունյա, ծերունի յուր հայր:

Գո՛հ էին նոքա, թեև առանց փող,
Բայց գետի ափին կըտորիկ մի հող
Մշակում էր մեծ ջանքով ծերունին,
Եվ կերակրում էր խաղաղ ընտանին:

Որպես վայրենի՝ ճոխ, անփույթ ծաղիկ
Աճում էր նոցա դեռահաս աղջիկ,
Նա չուներ կըրքեր, չըգիտեր հոգսեր,
Նորան ծանոթ չէր՝ ի՞նչ է արդյոք սեր:

Արդեն տասն և վեց լրացավ տարին,
Չըգիտեր աշխարհի նա «չարն ու բարին»,
Որպես մի նաշխուն, ուրախ թիթեռնիկ,
Յուր խաղերովն էր նա գոհ, երջանիկ:

Դեռևս տիրում է «ադամա մութը»24
Ոչ ոք չէ բացել տան լուսամուտը,
Սառան արթուն է և արդեն հագնըված
Թեև տանեցիք խոր քնով են քընած:

Նա ցողում է ջրով գավիթն ու բակը,
Մաքրում, սարքում է յուրյանց տընակը,
Նա հունդ է ցրվում խատուտիկ25 հավերին
Եվ խոտ է տալիս փոքրիկ հորթերին:

Վառվեց արշալույս: Ժպտում է երկինք,
Ոսկեզօծ գունով ներկվեցան լերինք,
Գեղազըվարճ խանդով թրթռում է բնություն,
Տիրեց ընդհանուր կյանք, ուրախություն:

Ուրախ է Սառան: Նա խիստ ըշտապով
Առնում է սափորն և թեթև կերպով
Վազում է դեպ դուրս, դիմում է աղբյուր
Յուրյանց տան համար բերել սառը ջուր:

Թրջում է ոտքերը վաղորդյան ցողը,
Փըռփռում է հովից նորա գլխի քողը,
Եվ սև հոսանքով թուխ-թուխ ծամերը
Ծըփում են նորա թիկունքի վերա:

Այնտեղ աղբյուրի ջրովը սառնորակ
Լըվացվում է նա: Նորա սևորակ՝
Վառվում են բոցով՝ լի կյանքով աչեր,
Վաղորդյան հովից շիկնում են թըշեր:

Ծագեց արևը — ըսկսվում է օր:
Դաշտում գործում է գյուղացու արոր:
Սերմերով բեռնած փոքրիկ սայլակը
Դեպ արտն է վարում անխոնջ մըշակը:

Շընչում է ազատ Սառայի կուրծքը,
«Ի՛նչ հրաշալի է աստուծո գործքը...»
Նայում է շուրջը՝ — բոլորակ ծաղկունք,
Անուշ ցնծությամբ երգում են թռչունք:

Գոհարով ցողած, կանաչ դաշտերը
Ցրվում են սրտից խորին վըշտերը,
Եվ տերևազարդ, թավուտ ծառերից
Ախորժ է հնչում ձայնը զեփյուռից:

Նա դեռ զմայլած, նայում է շուրջը,
Հեռու կամարած՝ նկարվում է կամուրջը,
Այնտեղ խաղալով վազում է գետակ,
Ժպտում են նորա ալիքներ հստակ:

Պարկը շալակին դեռ նոր գյուղացին
Տանում է աղալու պարենն յուր հացին,
Գոռում է ջաղաց, թունդ ժայթքում է ջուր
Եվ բամբակի նման սպիտակ փրփուր:

Ուշացավ Սառան: Դառնում է նա տուն
Ոտքով մանրաքայլ, ընթացքով հաստատուն,
Նա մաքուր գործն է անմեղ բնության,
Որպես մարմնացած տիպ համեստության:

Դեռ նոր է զարթել ծերունի հայրը,
Գոմն է ավելում նորա ժիր մայրը,
Հոգնած խաղերից, անուշ երազում
Քնած է եղբայրը, զարթնիլ չէ ուզում:

Լըվացվեց ծերունին դստեր բերած ջրով,
Ալեզարդ մորուքը սանդրեց սանդրով,
Նա խաչակնքեց դեմքն երեք անգամ,
Առեց վերարկուն դիմեց դեպի ժամ:

Կինը սովոր էր տան մեջ աղոթել,
Սկսեց նա հետո կովերը կըթել,
Փրփրադեզ կաթնի անուշհոտ շոգին
Բերկրանք էր բերում տանտիկնոջ սրտին...

Բրոնել էր Սառան հորթերը նորածին,
Որ չը խանգարեն նըրանք մոր գործին.
Չա՛ր էին նոքա և խիստ անզգամ,
Ծրծում էին ամբողջ կաթը շատ անգամ:

Մեկին ավելի սիրում էր Սառան,
«Շուշանիկ» անուն դըրել էր նորան,
Ներկել էր հինայով26 խայտերը ճերմակ
Եվ պարանոցեն կախել էր զանգակ:

Դեռ նոր նախիրը քշում են գյուղից.
Խրխինջ, բըռբըռոց են ամեն տեղից.
Խառն բառաչմունք, աղաղակ, ճըչյուն,
Կազմում են ուրախ ներդաշնակություն...

Կանաչին է տալիս ընդարձակ արոտ,
Դալար խոտերին անձկանոք կարոտ
Վազում են հոտեր, տալով ճոխ տրտինկ27,
Առաջնորդում է նրանց հովվի սրինգ:

Սառան տավարը հասցուց նախիրին,
Հանեց թոնիրից28 վառուցքը մոխիրին,
Լեցրուց կթոցում, տարավ դուրս ածել,
Ծուլության վերա նա չէր մըտածել...

Բարձրացավ արև դեպի հորիզոն:
Փափուկ ջերմությամբ օդը հովասուն
Ծավալվում էր խիստ ախորժ հոսանքով,
Ոգի էր սփռում անեղծ կյանքով:

Հանգիստ չէ Սառան: Շարժուն, անդադար
Պըտտվում է նա: «Աղջի՛, ա՛յս բեր, ա՛յն տար»:
Պատվերներ էր որ տալիս էր մայրը
Քրոջը չէր օգնում յուր ծույլ եղբայրը:

Նա թոնրի համար բերեց վառելիք:
Պատրաստ է ճաշն, այլև ընթրիք29,
Սառային մի գործ դեռևս մընաց,
Արտը հոր համար պետք է տանի հաց:

Նա գնում է արտը: Հայրը գործում է.
Ճակատի խորշոմից քրտինքը վազում է:
Ուռենու շուքի տակումը Սառան
Հոգնած հոր համար կազմում է սեղան:

Կեսօր է արդեն: Տոթը այրում է.
Թառամած տերևը հազիվ շարժվում է.
Փույթ չէ Սառային, երբ կը ճաշեր հայրը,
Նա անցավ ծըտի պես մինչ արտի ծայրը:

Այնտեղ պարզ, փոքրիկ հոսում էր գետակ,
Նորա ափերից շատ տեսակ-տեսակ
Քաղում է ծաղկունք, հյուսում է նա փունջ,
Թաքցնում է ծոցում, կրկին լուռ ու մունջ:

Դառնում է տեղը: Վերջացած է ճաշ:
Հայրն, աշխատանքից եղած հալումաշ,
Հանգչիլ է ուզում քանի մի րոպե.
«Մի՛ գնա էս ճամփով, թուրք կը հանդիպե»:

Ասում է աղջկան: Հեռացավ Սառան:
Բայց թուրքի երկյուղն ի՞նչ փույթ էր նորան,
Նա անց է կենում մի այգու մոտից
Եվ կատվի նըման թռչում է պատից:

Նա ճանկրկելով, որպես ժիր կապիկ,
Մի ծառից մյուս ծառ բարձրացավ ճարպիկ.
Չէր քաղում մրգերն և չէր գողանում,
Զըվարճության համար այդպես էր անում...

Լսելի եղավ ձայն՝ «Բըռնվեցա՛վ գողը...»
Ծանոթ են նորան ձայնն ու եկողը:
Սառան նայում է ծառիցը ներքև,
Իջնում է իսկույն, նույնպես վարժ, թեթև:

Պատանի էր դա այգետիրոջ որդին,
Խիստ մոտ առարկան — Սառայի սրտին:
Ի՞նչ էր որ աղջկան նորա կողմը քաշեց.
Անմեղ սրտիկը հալեց ու մաշեց...:

Սառան չըգիտեր: Գիտեր նա մի բան՝
Պատանու դեմքը ախորժ էր նորան,
Չիցե՞ այն մաքուր սրտումը հանդարտիկ
Սկսվել էր սիրո մրրիկը սաստիկ...

— Ո՞ւր էիր Սառա, — հարցրուց պատանին,
Որպես հին ծանոթ, նորա ընտանին,
— Ես հորս համար հաց էի տարել...
Բայց դու ինձ համար ոչինչ ե՞ս բերել:

— Տե՛ս, ինչ եմ բերել, — ասաց ժպտալով,
Յուր քաղած փունջը պատանուն տալով,
— Ի՞նչ լավ աղջիկ ես, դու բարի Սառա,
Ես էլ քեզ համար մի մատնիք առա:

Փոխում են նոքա անգիտակցաբար
Սիրո գրավականն: Իսկ սերն էր արդար,
Չի Ավետարան նրանք համբուրեցին,
Քույր-եղբայր լինել միմյանց ուխտեցին30:

— Մեր խնձորները սիրուն, կարմրիկ
Հասել են այժմ, գնանք, իմ քույրիկ,
Դու խո սիրում ես, քաղեմ քեզ համար,
Նոքա խիստ առատ բերք ունեն այս ամառ:

Նոքա գընացին: — Ես ախար պաս եմ31,
Ասում է Սառան, — պիտի սպասեմ
Անցնի Համբարձում, մինչև գա Վարդավառ,
Քաղե, կըտանեմ եղբորս համար:

Նոքա մերձեցան խնձորի ծառին,
Որո պտուղները գրավեցին Սառային,
— Այդ խնձորները, ա՛խ, դո՛ւ ես նախշել,
Ով գիտե, մինին միտք ունես բաշխել...

Պատանին քաղեց ալ-վարդակարմիր,
Կըլորիկ մի խնձոր. — Թե գիտնայիր գիր,
Այդ խնձորի վերա, սիրելի Սառա,
Դու քո անունը պիտի կարդայիր...32

Դ

Թեքվեց արևը: Երեկո է արդեն:
Ծերունի հայրը դարձել է արտեն:
Սառան ազատ է տնային գործերից.
Նորան կանչում են մոտիկ կըտուրից:

Այնտեղ երկնքի պարզ կամարի տակ
Դեռահաս աղջիկներ խաղում են գնդակ,
Սառան վազում է ըշտապով նոցա մոտ,
Նա այդ խաղի մեջ վարժ է և հըմուտ:

Առնում է գնդակը, զարկում է գետնին,
Թռչում է գնդակը, բռնում է կրկին,
Եվ ամեն անգամ պտույտ է գալիս,

Կրկին և կրկին գետնին է տալիս:

Պտույտ է գալիս, որպես ճախարակ,
Թեթև շարժումնքով, համարձակ, արագ,
Փըռփռում են գլխի երկայն հյուսերը.
Ծեծում են կլորիկ լեցուն ուսերը:

Քանի րոպեում մի քսան շրջան
Բոլորում է նա: Մինչ այդ աստիճան
Անվաստակելի ուժը բընություն
Տըվեց գյուղացի աղջկան տոկուն:

Շարունակում է խաղը փույթ ընդ փույթ,
Ինչի՞ չէ զգում նա գլխի պըտույտ...
Հոգնեցավ ահա... գնդակը թըռավ...
Նորա ձեռքիցը այլ աղջիկ առավ:

Ժըպտում է Սառան... կարմրած են թըշեր,
Ալմաստի նման վառվում են թուխ աչեր...
Սև գանգուրներով նորա զուլֆերը33
Ցըրված են շիկնած երեսի վերա:

Սառան ուներ յուր և տխրությունքը,
Վազում էի աչքից առատ արցունքը:
Սնուցանում էր նա սարյակի մի ձագ,
Ընտրել էր նորան թռչնիկը համարձակ:

Ճըլվըլում էր միշտ, լուռ չէր սարյակը,
Սառան զարդարեց նորա վանդակը,
Միշտ յուր ձեռքովը կուտ, ջուր էր տալիս,
Կանչում էր հեռվից, յուր մոտն էր գալիս:

Մի օր գտավ թռչնին փետացած և լուռ:
Դառն էր Սառայի սոսկում և սարսուռ,
Առաջին անգամ երևցավ նորան
Սառն, անմռունչ կերպարանք մահվան...

Նա յուրյանց բակի ընկուզենու տակին
Փորեց գերեզման նորա դիակին,
Մարմինը դըրեց տուփի մեջ փոքրիկ,
Շիրիմը ծածկեց քարով մի ծանրիկ.

Լինում էր շատ անգամ ամբողջ ժամերով
Նստում էր Սառան գերեզմանի քով,
Ողբ էր հորինել. մի ո՛ղբ խիստ տըխուր,

Երգում էր նորա կտուցը, սև փետուր:

Նա քարի վերա խունկը ծըխում էր,
Ինչո՞ւ տերտերը, — մորից հարցնում էր,
Չէ՛ օրհնում շիրիմը և իմ սարյակին,
Էդպես խո դժոխքը կերթա նրա հոգին;

— Ի՛նչ լավ էր, մայրիկ, ախ, իմ սարյակը,
Հիշո՞ւմ ես նորա դու ուրախ երգը.
Մատս չէր կրծում, նա ինձ սիրում էր,
Խոսք էի ասում, նա հասկանում էր...

Յուր գնդախաղը վերջացրուց Սառան:
Տանը գործեր են ըսպասում նորան:
Մյուս խրճիթներում փայլում է կըրակ,
Եվ յուրյանց տնակում պիտի վառել ճրագ:

Նա լույս է դընում կըտուրի վերա,
Սփռում է օթոց, քնելու շորերը,
Այնտեղ գյուղացուն պարզ երկնի կամար
Հովանավորում է մի ամբողջ ամառ:

Հավաքվեց ահա՛ խաղաղ ընտանիք,
Պատրաստ է նոցա արդեն պարզ ընթրիք:
Սառան ջուր է ածում ձեռքերին ծնողաց,
Լըվացվում են նոքա, վայելում են հաց:

Գիշեր է խորին: Տիրում է լռություն:
Մութ ծածկոցի տակ նիրհում է բնություն:
Դեռ հոգնած մշակի երգերը դաշտեն
Թափում են նորա վըշտերը սրտեն...:

Ուրախ է միայն երկինքն աստղազարդ:
Նուրբ ամպերու մեջ, որպես հին կախարդ,
Լուռ խորհրդական սահում է լուսին.
Ինչո՞ւ է աղոտ փայլը նորա լուսին...

Նըստած են նոքա կըտուրի վերա,
Սառան գրկել է յուր մոր ծնկները,
Եվ լի ջերմ սիրով նորա երեսին
Նայում են աչերը մատղահաս կուսին:

Բայց ինչո՞ւ է լուռ: — Նա մտածում է...
Մանկական ուղեղը նորա գործում է:
Նորան շատ անգամ էին հետաքրքիր

Յուր շրջապատող երկինքն ու երկիր:

— Տե՛ս, ահա մայրիկ, այն աստղը վազեց,
Հետքիցը պայծառ մի շավիղ թողեց.
Բայց ո՞ւր թըռավ նա... երկնքից ընկա՞վ,
Ա՛խ, վառ ճրագի պես նա մարե՛ց, հանգա՛վ...

— Որդի՛, դա աստղ է բարեպաշտ մարդին,
Որ բնավ չէ կոտրել սիրտը աղքատին.
Նա մեռավ ահա՛, յուր հետքից թողեց
Նշանը գործերին, ինչ բարիք գործեց:

— Տե՛ս, այնտեղ, մայրիկ, սարի գագաթին
Ինչպես դիզվել են ամպերը մըթին,
Փայլում է, նայի՛ր, ահա փայլակը,
Որպես շողում է այնտեղ կայծակը...:

— Որդի՛, աստուծո քաշ հըրեշտակը,
Թափում է այնտեղ բոցն ու կրակը,
Հրեղեն յուր սրով նա կռիվ է տալիս,
Սատանաներին կըլնի կոտորելիս:

— Տե՛ս, ահա, մայրիկ, սարի գագաթում
Ինչպե՛ս սաստիկ է ամպը որոտում,
Չըլինի՞ այնտեղ երկինքը փուլ եկավ:
Թե մրրիկի միջից մի վիշա՞պ ընկավ34:

— Չէ՛, որդի, այնտեղ սատանաները
Այն չար Հուդայի կապած են ոտները
Արճիճ են հալում նորա ականջում,
Այնպես գոռում է. տանջո՛ւմ են... տանջո՛ւմ...:

— Տե՛ս, ահա, մայրիկ, երկնքի վերա
Պայծառ շավիղի թողած հետքերը,
Ասում են, մի մարդ հարդ է գողացել,
Մինչև տուն տանել չէ՞ կարողացել35:

Չէ՛: Մի օր աստուծո բարկությունն ահեղ
Պատռեց երկինքը, եղավ ջըրհեղեղ.
Աստվածածինը կրկին նորան կարեց:
Երկնքից հեղեղն իսկույն դադարեց:

— Երբ բաց եմ անում հագուստիս կապոցը,
Քակված եմ գտնում նորա հանգոցը.
Այդ ով է, մայրիկ, նրանց այդպես բացում,

Շորերիս վերա բրծեր է քրցում:

— Երևի, որդի, չար դևիկները
Այդպես խառնում են քո նոր շորերը:
Կապոցի վերա դու ասեղ ցրցե,
Որ դևն այլևս նրան չրբացե36:
— Մայրիկ, դևերից ես խո՛չեմ վախում
Մի օր կը թաքչեմ գիշերն օթախում.
Երբ գալու լինի, իսկույն կը բրռնեմ,
Ձիգ կը տամ ծամիցը, վրրեժս կառնեմ...
— Որդի, խելոք կա՛ց, այդպես մի՛ արա.
Գիտե՞ս ինչ վատ են այդ չար դևերը,
Նոքա կարող են քեզի վընասել...:
Նրանցից ամեն բան կարելի է սպասել...:
— Հո՛ ղը նրանց գլխին... Թեև եղջյուր ունեն,
Խաչակնքում եմ, իսկույն կորչում են...
Ի՛նչ լավ կը լինի, եթե ես, մայրիկ,
Բռնեմ նոցանից մի դև փոքրիկ:
Մայրը ծիծաղեց. — Գրո՛ ղը քեզ տանի,
Դու ե՞ րբ ես տեսել, որ դևն եղջյուր ունի:
— Եկեղեցումը տեսա պատկերը,
Սև, որպես արաբ, ծուռն էին ոտքերը:

Հա՛, եղջյուր ուներ, ճակատից դուրս ցցված,
Աչքերում կարծես կրակ էր վառված.
Ես չեմ վախենում, կրբռնեմ նորան,
Ինձ վախեցնում է միայն չար Ղարան37:

Երբ կուրծքիս վերա նա ծանր նստում է,
Ա՛խ, հուփ է տալիս... այնպես ճընշում է...
Ուզում եմ բռնել՝ — ձեռքս չէ շարժում,
Ուզում եմ կանչել՝ — լեզուս է լրռում...

Ինձ վախեցնում է և Ղույլուբանին38,
Մայրիկ, հավատա դու իմ այդ բանին՝
Մի գիշեր տեսա, երկա՛ ր էր... երկա՛ ր...
Երբ մոտ գընացի, — չքացավ, էլ չրկար...

— Հայրիկ, խոստացար դու այդ շաբաթը
Մի օր ինձ պատմել նորա հեքիաթը,
Դեպի ծերունին դառնում է Սառան,
Հետաքրքրում էր այդ հարցը նորան:

Հայրը պատասխանեց. — Հերի՛ ք է, Սառա,

Դու շատ խոսեցիր չարքերի վերա.
Գիշերը դևերից չեն խոսում այդքան,
Աղոթի՛ր, դու քնի՛, երեսիդ խաչ հա՛ն:

Ծնողքը շուտով մտնում են խոր քուն,
Քաղցրիկ մխիթարն աշխատող մարդուն:
Սառան արթուն է, աչերը զըվարթ
Դեպի աստղերը հառած են անթարթ:

Հանգիստ չէ՛ սիրտը: Նա մրտածում է:
Ի՞նչը խեղճ աղջկան ալեկոծում է...
Նա թաքցրած ունի բարձի տակումը
Խնձորն, որ ստացավ այնօր այգումը:

Դուրս բերեց նորան: Որքա՛ն ուրախ է:
Մինչև յուր մահը նորան կը պահե...
Մերթ ծոցն է դընում — կուրծքին է ճընշում,
Իսկ մերթ շրթունքին — և հոտ է քաշում:

Երկար նա այնպես զմայլում, ժըպտում է,
Ահա՛ նա տըխրեց: Ինչո՞ւ տրտում է, —
Ինքն էլ չըգիտե: Մի գաղտնի զգացում
Տանջում է նորան և սիրտն է խոցում...

Լուռ մրմնջում է... Ա՛խ, նա լացում է:
Գունաթափ թշերն առատ թացում է,
Առաջին սիրո տաք արտասուքը
Այն խաղաղ կուրծքը ալեկոծում է...:

Ե

Այն գյուղիցը դուրս կար հին ժամատուն,
Դարերի ընթացքն այնտեղ հաստատուն
Ոչինչ չըթողեց: Ջարդ-փշուր եղան
Նորա կամարները, գըմբեթ և սեղան:

Մի բան կենդանի տևեց մշտական,
Այդ էր ջերմ հավատը գյուղացի մարդկան,
Որոց սըրտերին մընացին պաշտելի
Տխուր փշրանքը վաղեմի սրբության:

Այդ ժամտան մասին պառավ կընանիք
Պատմում են խիստ շատ զրույց և հրաշալիք,
Թե որպես մի թուրք այնտեղից մի քար
Տարավ յուր տանը շինվածքի համար:

Բայց չը կարողացավ բեռը դնել գետին,
Կըպած էր քարը պինդ նորա մեջքին.
Նա այնպես մընաց միշտ թափառական,
Կրում էր քամակին գողության առարկան:

Եվ այնուհետև այդ նվիրական
Սրբարանիցը մի աղյուս անգամ՝
Հանդուգն յուր ձեռքով չէր երբեք տարած
Թուրքը, պարսիկը, կամ այլ արարած:

Շրջապատած էր այգիով ընդարձակ,
Զգվում են ծառերը բարձր, համարձակ,
Ոչ ոք չէ քաղում նոցա պտուղը,
Հսկում է այնտեղ «Սուրբի» երկյուղը:

Այնտեղ ծերունի, դարևոր կաղնիք
Ավերակներին սփռում են հովանիք,
Որոց ճյուղաթափ ոստերի տակին
Հյուսեց արագիլն բույնը ահագին:

Յուր այդ ամրոցեն սպիտակ սուլթան39
Իշխում է ամբողջ խաղաղ պետության,
Ուր ճնճղուկ, սարյակ լռում չեն երգերից,
Ապրում են անհոգ, ազատ հարկերից:

Վաղուց չէր լսվում այնտեղ շարական,
Միայն շաբաթ գիշերն այդ նվիրական
Փլատակների տրխուր ավերակ
Լուսավորում են քանի մի ճրագ:

Գիշեր է խորին: Դեռ լուռ է աքաղաղ,
Քնած են գյուղացիք հանգիստ և խաղաղ:
Յուր պարզկապուտակ կամարից լուսնյակ
Թափում է լույսը կաթնագույն, հըստակ:

Խուլ մրմնջում է շնչասպառ հովիկ,
Հազիվ շարժվում է նիրհած տերևիկ,
Կարծես ծանր քնով մրափում են ծառեր,
Նոցա խորքիցը՝ ահա՛ մի ըստվեր...

Դանդաղ քայլերով, սակավ առ սակավ,
Մինչ ավերակները նա հառաջ եկավ,
Խաչ — քարի վերա ծրխեց նա խունկը.
Խոնարհեցրուց նորա առջև յուր ծունկը:

Երկար ջերմեռանդ գլուխը ծռած
Աղոթում էր նա, և գետնատարած,
Հպեցնում էր երեսը սուրբ փոշիներին,
Թափում էր աղերսը բոցավառ սրտին...

Նա անցավ այգու խոտերը կանաչ,
Գտավ մի ածվի մեջ նոր բացված կակաչ,
Չափեց դյութելով նորա ծըղոտը,
Նըշան դրեց վերան կարմիր նարոտը40:

Այդ կույսը հմայքով յուր բախտն էր փորձում
Զի մյուս առավոտ տոն է՝ Համբարձում:
Իսկ նորան մի ձայն խոռվեց սաստիկ,
«Սառա՛» անունը հնչեց խիստ մոտիկ:

«Նա» էր, որ եկավ: — «Գիտեի, այս գիշեր
Դու պիտի գայիր ծաղիկներ չափել.
Դաշտերը լիքն են գյուղի աղջկերքը,
Ինչպե՛ս հսկում են նորանց տըղերքը...»:

— Եվ դու վախեցար թողնել ինձ մինակ, —
Հարցնում է Սառան: — Այդ մութ ծամանա՛կ...
Այդ փլատակներո՛ւմ... քա՛ր է քո սիրտը...
Ցերեկը սարսափով անցնում է մարդը:

Զ

Ծագեց առավոտ: Տոն էր Համբարձման,
Ցանկալի տոնը գյուղացի աղջկան:
Բնությունն էլ այնօր, կարծես, նպաստում էր
Նոցա ուրախալի, անհոգ զվարճության:

Հիշում եմ այն տոն... Հին ժամտան այգում
Դեռահաս աղջիկներ երգ էին երգում,
Պար էին բռնել, հնչում էր դայիրան:
Ի՛նչ հիանալի էր այն տեսարան...

Ու խորհրդական այն ծառերի տակ:
Նախշուն գուներով, կարմիր, սպիտակ,
Զուգված, զարդարված, որպես ծաղիկներ —
Թըռվռում էին սիրուն աղջիկներ:

Եվ պատանեկաց խումբը զըվարճասեր
Աղջկանց պարերգը այնտեղ կըլսեր,

Ծառերի տակին, նոցա չորս կողմով
Ծափ էին տալիս ուրախ ցնծումով:

Ես էլ խառն էի այդ ուրախ խումբին,
Քա՛ղցր էր ինձ նայել աղջկանց ակումբին,
Ուր ամեն տըղա — հերոսը գյուղական —
Գըտնում էր սրտի խիստ մոտ առարկան....

Տեսա Սառային, առեց դայիրան,
Ա՛խ, որքա՛ն աչեր նայում են վերան...
Դայիրան հընչեց... մրրիկի նըման
Նա շրջան տըվեց... Պտույտն էր աննման...

Նա պար էր գալիս: Հասակը թեքուն
Էր խիստ դյուրաձիգ, թեթև, գալարուն,
Տատանվում էր, մերթ նազ-նազելով,
Մերթ թռթռալով, մեղմիկ վազելով:

Ահա՜ նա սլացավ սրընթաց, որպես նետ,
Ա՛խ, որքա՛ն սրտեր տարավ նա յուր հետ...
Գլուխը ծըռեց... զուլֆերը խաղում են...
Եվ սև հոսանքով դեմքը սքողում են:
Նա ոլորվում էր օձի պես ճապուկ.
Խաղում են նորա թևքերը փափուկ.
Ժըպտում են նորա աչքերը բոցավառ,
Շիկնում են նորա թըշերը պայծառ...:

Զըգեց մի հայացք... դադարեց պարեն,
Ի՞նչ նետեր էին, ցայտեց աչերեն:
Ա՛խ, այն նետերը թըռան ուղղակի,
Ինչ որ ծակեցին՝ — դա էր մի «հոգի՛»...:

Դադարեց պարը: Լռեցին երգ, դաշնակ,
Կազմեցին գեղուհիք բոլոր շրջանակ,
Մեջտեղում նըստեց մի վըհուկ աղջիկ,
Խաղաղ էր դեմքը, շրթունքը մնջիկ:

Հին — բախտահմա կախարդի նըման
Նա դրեց յուր առջև «Վիճակի ման»,
Վառ ծաղիկներով էր նա զարդարած,
Յոթն աղբյուրների պարզ ջըրով լեցրած:

Օրիորդները հերթով մոտ եկան,
Տըվեցին նոքա վըհուկ աղջկան
Յուրյանց զարդերից՝ օղ, մանյակ և գինդ,

Որն յուր մատանին, որ ուներ հակինթ:

Եվ վիճակափորձն առնում էր մին-մին
Գրցում էր «բախտի սափորի» միջին,
Ուսկից գեղուհիք սրտով դողդոջուն
Մութ ճակատագրի կսպասեն լուծում:

Մոտ եկավ Սառան դեմքով ամոթխած
Այն իսկ մատանին այգումը ստացած...
Տրվեց կարմրելով գուշակող կույսին:
Է՞ր հանկարծ փոխվեց գույնը երեսին...

Զարդերը ժողովելու վերջացավ ծեսը:
Վիճակահանության սկսվեց հանդեսը:
Վրհուկը փակեց «սափորի» բերան
Եվ աղջիկներին տրվեց պատվիրան՝

Հերթով երգելու մի-մի «ջան-գյուլում»,
Այնպես, որ միմյանց չըլինին արգելում,
Երբ նա «սափորից» կը հանի մի բան,
Կը տա երգողին մի հայտնի նըշան:

Տարավ դեպ «սափորը» վրհուկն յուր ձեռքը:
Աղջիկներից մինն երգեց այդ երգը՝ —
Ծաղիկ ունեմ՝ ալա41 ա,
Ալա չի՛ ալվալա42 ա,
Յար43 բռնելը լավ կըլնի,
Բաց թողալն բալա ա44:

Մի օրիորդի թխաչյա, սևուկ,
Տրվեց ապարջանն, ասելով վրհուկ՝
«Սիրի՛ր, թող մի՛ տուր սրտիդ առարկան,
Կը լինես հետո դու շատ փոշիման»:

Վրհուկն դարձյալ գործը շարունակեց:
Մի ուրիշ աղջիկ այդ երգը երգեց՝
Աղջիկ, աղջիկ, ա՛լ45 աղջիկ,
Աչքերդ չալչալ46 աղջիկ,
Դու մեր տանը հարս պըտես,
Իմ քիրը քեզ տալ47, աղջիկ:

Դարձավ դեպ հնացած աղջիկ մի հաստլիկ,
Որն խիստ անհամբեր տանջվում էր սաստիկ՝
Ասաց՝ Գնա՛ ուրախ կաց, հասար մուրազիդ48,
Պսակի նարոտը49 կըկապես բողազիդ50:

Մի օրիորդի գունաթափ դեմքով
Այդպես գուշակեց «վիճակն» յուր երգով՝ —
Ձեր բաղի դուռն բաց ա՛,
Ոտներդ շաղով թաց ա,
Յարիցդ հեռացել ես,
Աչքերդ լիքը լաց ա։

— Դու սիրի՛ր դարձյալ սիրածդ նախկին,
Կըքաղցրացնե նա քո սիրտը և հոգին.
Կարդաց վըհուկը գունաթափ աղջըկան։
Պատգամը կարծեմ, չէր նրան դուրեկան։

Վըհուկը կրկին գործը շարունակեց,
Մի օրիորդի այդպես գուշակեց —
Առակ51 եղա ողջ գեղի,
Սիրտս ընկավ օձի լեղի,
Իմ հորն ու մորն ի՞նչ ասեմ,
Ինձ տըվին մի գեշ52 տըղի։

— Նասիբդ53 հեռու է, կոտրած է քո սիրտը,
Գնա՛, պաս պահի՛ր, կըբացվի քո բախտը։
Դառն ճակատագիրը կարդաց վըհուկը։
Բայց որքա՛ն պաս էր պահել աղջիկը54...

Բայց ի՞նչ գուշակեց Սառայի համար։ —
Այդ երգն երգեցին նորա սրտին հարմար՝

Խնձոր ունիմ նըխշած ա,
Ոսկե դալմով55 գըրած ա,
Աղբերս ուզեց, տըվի ո՛չ,
Ազիզ56 յարի ղըրկած ա։

Ես աղջիկ եմ՝ ա՛լ կուզեմ,
Շորերս ծալեծալ կուզեմ.
Երբ որ յարիս տուն կերթամ,
Գոտիկս թիրմա57 շալ կուզեմ։

— Դու հարուստ մի տան հարսիկ կը դառնաս,
Միշտ կարմիր շորերդ նոր-նոր կունենաս։
Այդպես գուշակեց մարգարեուհին,
Արդյոք նա հասա՞վ սրտի «մուրազին»...

Է

Բայց ո՞ւր ես այժմ, նազելի Սառա,
Ես քո դարդիցը մաշվեցա՛... մեռա՛...
Մի՞թե երկինքն այնքան էր անգութ...
Ա՛խ, ինչ եմ մտածում... Այդ բոլորն է սուտ:

Գնամ «պառավի» մոտ, սպասելն է զուր,
Գուցե նա կը տա Սառայից ինձ լուր,
Ահա՛ նա... խեղճը հնացել է իսպառ,
Մաշեցին նորան օրերը թըշվառ...

— Բարև, տատի ջան, — չէ՛ ճանաչում նա, —
Լա՞վ եք, առո՞ղջ եք: — Տեսնում եք ահա՛,
Ապրում ենք այդպես... մերթ կուշտ, մերթ քաղցած,
Ինչպես որ բուզին58 հասցընում է աստված:

— Բա՛ս վա՞տ է գընում, տատի, ապրուստը:
— Ապրում են, որդի, շենն ու հարուստը,
Մեզ նմանների օրը միշտ սև է,
Քանի ժամանակն այդպես կը տևե:

Գյուղացիք եղան մեծ մասով աղքատ,
Մեր մեղքից չըկա խեյր ու բարաքաթ59,
Վարում ես, ցանում, ցանքը չէ գալիս:
Ծառերն էլ այժմ պտուղ չեն տալիս:

Ուտում է տերևը անիծված թրթուր,
Չեն էլ մտածում Մասիսից բերել ջուր60:
Ասում են, մորեխ պիտի գա սաստիկ,
Բազարում ցորյան չես գտնի մի հատիկ:

Չար ցորենատերն երկինքը կապել է61,
Ա՛խ, քանի անգամ ամպըն ամպել է,
Չէ՛ գալիս անձրև, — ասա՝ մի կաթիլ
Դարմանի համար երբեք չես գտնիլ:

Մեր կնանիքը շատ ման ածին նուրին62
Եվ տերտերներն անդաստան արին,
Խաչով, խաչվառով դաշտը գնացին,
Թե՛ մեծ, թե՛ փոքր ողբացին, լացին:

Ո՛չ: Չըկարացին բացել երկինքը:
Գուցե այդպես էր աստուծո կամքը...
Մեր աղբյուրները ողջ ցամաքեցան,
Կանաչ ցանքերը տոթից չորացան...:

Ինչ էլ որ եղավ, զողացավ թուրքը:
Չե՛ս էլ հարցնում, ի՞նչ ծանր է տուրքը՝ —
Մալյաթ, բահիրա, այլև գլխահարկ63,
Ինչե՞ր չեն առնում... զորով ու անկարգ...:

Մեր մեղքերիցն է այդ պատուհասը,
Չրկա կիրակի, ուտում են պասը.
Ի՞նչ է, ասում են, «հասն ու չը հասը»,
Ազգականի հետ պսակվում մեծ մասը:

Մի տարվա հարսը՝ դեռ քողն երեսին՝
Յուր տղամարդի հետ՝ կեսրոջ սպասին,
Խոսում է արձակ, ծիծաղում համարձակ:
Չեն հարցնում օտարն, աներն, աներձագ...

Գնացել է, մի խոսքով, ամոթն ու ահը,
Կարծես, քանդվելու մոտ է աշխարհը...:
Այդպես չէր վաղվա մեր ժամանակը,
Մեր լեզուն մունջ էր. սպանիր — ձայն չը կա...

Թուխս էի դրրած հանուն ասաբծու՝
Սև հավի տակին ամբողջ քսան ձու,
Ողջ ավեր եղան, հինգը դուրս եկավ,
Երկուսն էլ հնգից քորքորան64 տարավ:

Այժմ ի՞նչ անեմ ես երեք ճըտով,
Մնացի սևերես և միշտ ամոթով:
Խանին պետք է տալ և տանուտերին,
Հաշվիր այդ բոլորը, թողյալ տերտերին:

— Կար այստեղ աղջիկ ձեզ մոտ հարևան,
Յոթ տարի առաջ, հիշո՞ւմ եք նորան
— Սառայի մասին գուցե հարցնում եք:
— Հենց նա.... տատի ջան, նրանից լուր ունե՞ք:

— Նորա պատմությունն երկա՛ր է, երկա՛ր...
Այստեղ, մեր գյուղում մի լավ տղա կար —
Մելիքի որդին — շեն, որպես ջըհուդ,
Ուտում էր փլավ, հագնում էր մահուդ:

Խելքիցը հանեց այն խեղճ աղջըկան,
Ջահիլ էր աղջիկը, չէր հասկանում բան.
Թե նոցա մեջը ի՞նչ մի գաղտնիք կար,
Այդ ես չըգիտեմ, աստված է խաբար:

Գալիս էր շատ անգամ նա իմ խրճիթը:
Տալիս էր բարև, հարցնում էր քեփը.
Կարծես չըլիներ մելիքի տղա,
Այլ գռեհիկ մեզ պես, և ոչ թե աղա:

Տեսար և Սառան նորա հոտն առավ,
Լույս ընկավ իսկույն: «Այժմ դու, պառավ,
Մեզ թո՛ղ միայնակ», ասում էր տըղան:
Թո՛ղ, մտածում էի «յուրյանց աղունն աղան...»:

Նստում են նոքա, խոսում են նոքա,
Խոսո՛ւմ են... խոսո՛ւմ... բնավ վերջ չըկա:
Չէի արգելում ես նորանց երբեք,
Ո՞վ չի ունեցել այնպեսի րոպեք...:

Մըտնում էր արև, ճրագը վառում են:
Ծնողքը Սառային երկար պըտրում են:
Նրանք չեն բաժանվում, զըրից են տալիս,
Ուսկի՞ց էր այնքան խոսք և ասուլիս...

Եղավ, որ մելիքն ուղարկեց որդին
Հեռու մի աշխարհ՝ մեծ ծովի մոտին,
Ուղարկեց, որ սորվի՝ գիր, կարդալ, ուսում,
Որ լավ մարդ դառնա, — այդպես են ասում:

Թեև այստեղ էլ նա շատ բան գիտեր՝
Ժամագիրք, Նարեկ՝ որքան մի տերտեր,
Եվ քանի մի լեզվով նա գիր էր գըրում,
Տըկար յուր հատը մեր ողջ երկրում:

Տարիներ անցան, նա հետ չըդարձավ,
Սառայի սրտին խիստ դառն էր այդ ցավ:
Երևի, այնտեղ մեծ էին գըրքեր,
Որ երկար նորանց սովորել պետք էր:

Տխրում էր Սառան, էր միշտ լուռ ու մունջ,
Լացում էր թաքուն, — դառն էր յուր մրմունջ,
Փակված էր ողջ օրն նա յուր օթախում,
Իսկ նորա երեսն էլ չէր ծիծաղում...

Լինում էր, շատ անգամ ինձ մոտ էր գալիս,
Որպես սպանվա՛ծ... լալի՛ս էր, լալիս...
«Չունի՛ս «նորանից» տատի մի խաբար...»
Հարցնում էր Սառան խիստ անմխիթար:

Բայց հասել էին աղջկա տարիքը,
Գընում, գալիս էին նրա մուշտարիքը:
Նախշունիկ էր նա, ինչպես մի ջեյրան65,
Ո՞վ չէր ուզենա, չէր սիրի նորան:

Խնդրեց տանուտեր Մինասն յուր որդուն,
Նա ուներ գութան, հարուստ տեղ ու տուն,
Կրթում էր նա շատ կովեր և գոմեշ,
Փարախում լիքն են՝ ձի, ոչխար և էշ:

Չէր տեսած այդպես մի բան ողջ աշխար,
Բաշլըղ66 էր տալիս՝ — ջուխտ եզ, տասն ոչխար,
Հինգ բեռը ցորյան, ոսկիներ քըսան:
Կարմրիկ, խորոտիկ67 էր ջահիլ փեսան:

Նըշան էր դընում փիրուզ68 մատանի,
Ջուխտակ ապարջան — գործ Համադանի,
Ոսկի վըզանոց, մարջանով69 շարած,
Արծաթի գոտի, ակնով զարդարած:

Սառան չըգնաց, չըլսեց հոր խոսքին,
Չընդունեց նըշանն, արծաթն ու ոսկին,
Այդպիսի պատիժ, ա՛խ, ո՞վ էր տեսի,
Աղջիկը հորն ու մորն խոսքին չըլսի...

Գյուղացիք սկսան ծնողացը նախատել,
Այդ չարի առաջն առնել աշխատել:
Կասեին նոքա՝ այդ «անառակը»
Թողեց մեր աղջկանց՝ վատ օրինակը:

— Դու իմ տան վերա սև մուր քսեցիր,
Իմ աղն ու հացը լեղի շինեցիր...
Ասում էր աղջկան ծերունի հայրը,
Լացում, աղաչում էր նորա մայրը:

Սառան չէր լսում լացը, նախատինքը,
Երկաթից էլ պինդ էր նորա կամքը,
«Կմեռնե՛մ, — ասում էր, — չեմ գնա օտարին,
Պիտի սպասեմ իմ սիրած «յարին»:

Թեև վայել չէ՛ր այդ հայ աղջըկան,
Բայց ո՞ւմ չէ խաբել, ա՛խ, չար սատանան,
Սառան մնաց դարձյալ միշտ մաքուր սրտով
Եվ նույնպես համեստ, նույնպես ամոթով:

Մըրջիմ չէր կոխ տա՝ ճամփան գընալիս,
Եվ ծառի տերևը՝ ծառից ընկնելիս՝
Ցա՛վ էր պատճառում այն քնքուշ հոգուն,
Որքա՛ն բարիքներ անում էր նա թաքուն...

Լինում էր, շատ անգամ գալիս էր իմ մոտ,
Դեռ նոր է ծագել լույս և առավոտ,
«Կարագ եմ բերել, տատի, քեզ համա,
Մայրս ինձ տրվավ, բայց ես չըկերա»:

Ա՛խ, որքան շա՛տ էր գութը նորա սրտի...
«Ինչի՞ ես ուրախ լինում եմ, տատի,
Երբ որ մտնում եմ այդ քո բնակարան,
Կարծում եմ, կրկին տեսնում են «նորան»:

Նըստում էր ինձ մոտ նա ձիգ ժամերով,
Եվ յուր հետ բերած մանրիկ սանդրերով
Սանդրում էր պառավիս գլուխն ալևոր,
Քորում էր նորան փոքրիկ մատներով:

Խոսո՛ւմ էր... խոսո՛ւմ խոսքը չէր պրծնում:
Միշտ «նորա» վերա էր նա մըտածում,
«Տատի, հարցնում էր, երբ որ ես մեռնեմ.
Գե՛թ երկնքումը «նորան» կը տեսնեմ...»

— Մահվան վրա մտածել քեզ վաղ է, որդի՛:
«Կյանքն ինձ այժմ խիստ դա՛ռն է, տատի՛ ...»
Ասում էր, թափում հեղեղն աչերեն,
Թաքցնում էր սրտի գաղտնիքը խորին...

Հետո հասկացա ես այդ գաղտնիքը,
Թե ինչ էր ուզում ասել աղջիկը,
Հասկացա, այո՛, բայց ո՛ւշ էր արդեն,
Այդ ցավն անբաժան կըմնա իմ սրտեն...

Քանի մի օրից հետո ես լսեցի,
Սառային տանում էին եկեղեցի,
Պիտի կատարվեր այնտեղ պըսակը,
Մինասի որդու էր հարսանիքը:

Հոր ստիպմունքին՝ և յուր մոր կամքին,
Կոպիտ գյուղացոց դառն նախատինքին,
Նա ընդդեմ կենալ չըկարաց երկար,
Հնազանդվեցա՞վ... — անզո՛ր էր, տըկա՛ր...

Բայց քանի անգամ սիրտը թուլացավ,
Ա՛խ, քանի անգամ նա ուշքից անցավ…
Մինչև հասուցին ժամատան շեմքը,
«Չե՛մ սիրում տըղին» — այդ էր նրա խոսքը:

Երբ բեմի առջև բոլոր ժողովուրդ
Ահով լսում էր սրբազան խորհուրդ,
Վայր ընկավ Սառան, աչքերը փակեց,
Եվ կրկին անգամ նորանց չը բացեց…

Ա՛խ, Հ…, — եղավ յուր խոսքը վերջին:
Գյուղացիք սարսափով մոտը գընացին,
«Թունավորվա՛ծ է…» — մեկեն կոչեցին,
Լաց ու շիվանով70 գոռաց եկեղեցին:

Գյուղից ոչ հեռու, այն բլուրի վերան,
Կը գտնես, պարոն, միակ գերեզման,
Գլուխները ծռած, մի ջուխտ ուռենի
Սըփռում են այնտեղ ախորժ հովանի:

Այնտեղ է թաղված գեղեցիկ Սառան,
Ո՛չ տապանագիր, ո՛չ խաչ յուր վերան,
Եվ ո՛չ բուրվառով ժամտան տիրացուն
Ծըխեց սուրբ խունկը այն անմեղ հոգուն…

Նրան տեղ չըտվեց մեր գերեզմանատուն71,
Որպես մեղավոր, ինքնասպան մարդուն,
Որպես կամակոր աղջկան ինքնակամ,
Որ ընդդիմացավ յուր ծնողացն անգամ»:

Պառավն ավարտեց: Բայց նորա հանգած
Աչքերում կաթիլք կային թաքուցած,
Որ նըվիրեց նա սուրբ հիշատակին
Յուր միշտ պաշտելի, անմեղ հրեշտակին…

Քանի օրից հետո մի երիտասարդ
Սրտով վշտահար, դեմքով անզըվարթ,
Գերեզմանի մի սև քարի վերա
Գրում էր հետևյալ տըխուր տողերը.

«Մինչ ե՞րբ, դու խավա՛ր բռնակալություն,
Կը ճնշես առտնին մեր ազատություն,
Մինչ ե՞րբ մեզանից քո սև ճանկերը
Կըխլեն Սառայի նման զոհերը… »:

ՂՈՒՅԼՈՒԲԱՆԻ
(Առասպել)

Կար, չկար մի քաղաք՝ մեծ և փառավոր,
Այն կողմն աշխարհին, մեզնից հեռավոր,
Մեծ ծով էր պատել նորա բոլորքը,
Սուրի տեղ բահը կըրում էր զորքը:

Այնտեղի կյանքը ազատ էր, հարմար,
Իսկ բնակիչներին՝ ոչ թիվ, ոչ համար,
Գործում են նոքա գոհ աստծո փառքից,
Ոչ ոք վաստակը չէ խլում ձեռքից:

Ապրուստը — առատ, բընավ հոգ չըկա,
Միշտ եղն ու մեղր ուտում են նոքա,
Այնտեղ աղքատն էլ սրտում դարդ չունի —
Նա ջրի փոխարեն խըմում է գինի:

Այնտեղ ձմեռն էլ ծաղկում է նըշենին,
Չունի մուշտակի պետքը ծերունին,
Իսկ նոցա աշունն, որպես մեր գարուն,
Կանաչ են ծառեր, գեղեցիկ, սիրուն:

Տարին երկու գամ ծընվում է գառը,
Միշտ կաթն էր տալիս տիրոջն ոչխարը,
Ծնունդն էլ, գիտե՞ք, — բոլորը ջուխտակ,
Չըկա ոչ մի սև, — ամենը սպիտակ:

Ուր խանին երբեք չեն տալիս բեգար72:
Սուլսաթ73, ջարիմա74, — այդպես բան չըկա:
Եվ նոցա սիրուն կին ու աղջիկը
Տընից չէ քաշում գազան պարսիկը...

Մարդին պետք չէր գընալ անտառը,
Վառելու համար կտրելու ծառը,
Փայտը գալիս էր ձըրի նրանց համար,
Վառե՛ ու վառե՛, — չունի չափ, համար:

Այդ ո՞վ էր բերում: — Միշտ Ղույլուբանին,
Տարին մի անգամ, բայց ամբողջ տարին
Վառելու համար էր նա բավական,
Այլև շինվածքին էր միշտ պետքական:

Ղույլուբանին էր մի «դէվ»75 զորավոր,
Մարմնով անճոռնի, դեմքով հրեշավոր,

Մի հատիկ աչք միայն ուներ ճակատին
Եվ շուխտ եղջյուրներ կրում էր գագաթին:

Ճանճ էր նորա մոտ Ադամա որդին,
Թեև նա ուներ կերպարանք մարդին.
Գերանի պես հաստ էր նորա բազուկ,
Հսկան նորա մոտ՝ կարճ, որպես թըզուկ:

Ամեն անգամին, երբ քայլ էր փոխում,
Բարձր լեռները խըճի պես կոխում,
Նորա ահագին ամեն մի ոտքը
Ամբողջ դաշտի վրա թողնում էր հետքը:

Նա շունչ էր քաշում՝ լինում էր մրրիկ,
Շարժվում են ծառեր՝ մեծ և փոքրիկ,
Նա ձայն էր հանում՝ գոռում էր սարը,
Եվ որոտալով թընդում անտառը:

Այն երկրում մի ծով կար պարզկապուտակ,
Ոչ սահման ուներ և ո՛չ էլ հատակ,
Չափել նորա խորքն՝ անհնարին էր, զուր,
Նորա մոտ մեր լիճն էր մի գավաթ ջուր:

Մտնում էր դէվն այն ծովի միջում՝
Որպես արագիլ ճահճի մեջ շըրջում,
Եվ ջուրը հազիվ-հազիվ հասնում էր,
Նորա ծընկները միայն ծածկում էր:

Մեծ-մեծ ձըկներն որսում էր դէվը,
Եվ բարձրանում էր մինչև արևը,
Այնտեղ երկնքում ձեռքով բռնում էր,
Արևի բոցով լավ խորովում էր:

Այդ նորա համար էր նախաճաշիկ,
Ընթրիքն ավելի ճոխ էր, անուշիկ,
Հարյուր կամ հիսուն գառն ու ոչխարը,
Հազիվ լեցնում են ահագին փորը:

Այդ դէվն էր, որ միշտ փայտը բերում էր,
Կարծո՞ւմ եք կացնով նա կըտրում էր,
Ո՛չ: Խլում էր ծառերը մին-մին արմատից,
Որպես քաղհանը76 խոտերը արտից:

Նորհաս ծառերից հյուսում էր չրվան,
Ինչպես կանեփից՝ մենք թոկ կամ պարան,

Կապում էր ահագին՝ յուր մեծ շալակը,
Թեթև բեռան պես՝ կրում էր քամակը:

Բայց ինչպե՞ս շալակ... սև սարի նման,
Ամբողջ կես անտառ յուր մեջքի վերան՝
Դիզված է այնպես՝ բարձր և ահագին,
Կարծես փոքրիկ ճանճ նստած է քամակին:

Բերում էր քաղաքը և նորա մոտին
Քըցում էր շալակը: Թընդում է գետին.
Հանկարծ երկրաշարժ: Մըթնում է օդը,
Եվ ահեղ ձայնով գոռում է որոտը:

Տերևի նման դողում է աշտարակ,
Թափվում են վախից մարդիկը հրապարակ,
Կործանվում են տըներ, գմբեթ և սեղան,
Եվ հղի կնիկը վիժում է յուր տղան...

Որպես աստուծո ահեղ պատուհաս,
Տալիս էր քաղքին՝ դէվն այդպես վնաս,
Իսկ նորա օգուտը դորա համեմատ,
Ճշմարիտն ասած, էր ավելի շատ:

Վերջին աղքատի օջախի մեջը
Ծըխում էր ծուխը մինչ տարվան վերջը,
Նա դորա համար բան չէր վճարում,
Փայտն առատ էր, վառում էր, վառում...

Հավաքվեց քաղքի բոլոր ժողովուրդ,
Խելոք ծերունիք կազմեցին խորհուրդ,
Ինչպե՞ս հեռացնել այդպիսի վտանգ,
Որ փայտը նրանց չընստեր շատ թանկ:

Մտածեցին նոքա շատ մտածմունքներ,
Հին մարդիկներից արին հարցմունքներ,
Եվ վերջ ի վերջո գըտան մի հընար՝
Քաղաքն անվնաս պահելու համար:

Ուղարկեցին նոքա քանի մի ալևոր
Սիպտակ մորուքով, ծեր և պատվավոր,
Գնացին նոքա դէվի մոտ դեսպան.
Քաղաքի կողմից հայտնել այդպես բան՝

«Ողջույն լինի քեզ, ո՜վ դէվ զորավոր,
Քաջ հսկաների տեր և թագավոր,

Ողջունում է քեզ մեր ողջ քաղաքը,
Թո՛ղ պայծառ լինի քո հարգն ու փառքը;

Այսքան տարի է մեր քաղքի համար
Դու փայտ ես տալիս առատ, անսպառ,
Եվ դորա մասին մեր ողջ բազմություն
Հայտնում է քեզ յուր շնորհակալություն:

Որպեսզի անմոռաց լինի այդ հիշատակ,
Քաղաքն այդ շապիկն ուղարկեց սպիտակ,
Որ հագնես նորան, տրկլոր չը շրջես,
Քո մերկությունը նորանով ծածկես:

Մի ամբողջ տարի քաղքի ջուլհակը
Սպառեց բոլոր՝ բուրդն ու բամբակը,
Մի ամբողջ տարի մեր ողջ կնանիք
Հազիվ կարացին կտրել այդ շապիկ:

Շա՛տ թանկ է նստել մեզ այդ շապիկը,
Շա՛տ մեծ է նորա գինն ու արժեքը,
Բայց կըտանք քեզի դորան մենք աժան,
Որպես քո պատվին վայել է, արժան:

Դորա կես փողը քեզ ընծա լինի,
Կեսին մեզ կը տաս մուրհակ ըստ օրինի,
Տարի ժամանակ, թեթև տոկոսով,
Մինչև լրացնես պարտքդ աստուծով»:

Դէվը շատ սիրով ընդունեց այդ պայման,
Ուրախությանը չըկար չափ, սահման.
Որքան նա մեծ էր մարմնի կազմվածքով,
Այնքան հիմար էր մտքով ու խելքով:

Եկավ ժամանակ: Լրացավ տարի:
Դէվը փող չունի պարտքը վճարի,
Եվ պարտատիրոջ ահից, երկյուղից
Զըրկվեցան նորա աչքերը քընից:

Թեև դէվ էր նա, եղավ երկչոտ սաստիկ,
Ինչե՛ր չեն անում խորամանկ մարդիկ...
Հըզոր առյուծին շինում են կատու:
Եվ հսկաներին՝ յուրյանց հարկատու...

Դէվն այնուհետև, երբ բերում էր փայտ,
Բերում էր գաղտնի, գիշերով, անհայտ,

Որ քաղաքացիք նորան չը տանջեն,
Դատավորի մոտ պարտքը պահանջեն:

Նա յուր շալակը խիստ զգույշ կերպով
Դընում էր գետին, փախչում էր շտապով,
Ծառի տերևն էլ տեղից չէր շարժվում,
Մի խշշոց անգամ նրանից չէր լսվում:

Իսկ քաղաքացուն այդ էր հարկավ:
Բայց մարդն է ագահ և վտանգավոր...
Նրանք պարտքը թողին այնքան ծանրացավ
Մինչ դէվն իսպառ նրանց գերի դարձավ:

Եվ այնուհետև եղավ վւախստական,
Թափառում է միշտ այդ խեղճ պարտական...
Թափառում է նա աշխարից աշխար,
Երկյուղը նորան քըշում է անդադար:

Այն մեծ մարմինը հալվեց... մաշվեցավ...
Լոկ ուրվականի մի ձև ստացավ.
Նա ման է գալիս միշտ մութն գիշերով,
Կոտրած սրտով և վախվըխալով:

Երբ ադամորդու երես է տեսնում,
Իսկույն օդի մեջ չքանում է, կորչում,
Մի՛ վախիր նրանից, սիրելի Սառա,
Նա բարի մարդուն երբեք չէ վնասում...:

Եվ այժմս էլ մեզ հետ մեր քաղաքացիք
Վարվում են այդպես, սիրելի քույրիկ,
Մեզ վրա ծախում են յուրյանց լաթերը
Եվ բազմացնում են՝ տոկոս-պարտքերը...